Ազգ Azg

8-14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023 ՈՒՐԲԱԹ 32(5767)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Ճակատագրական հանգրվանի դիմաց

Այնպես ստացվեց, որ վերջին շրջանում ավելի հաճախ եմ օգտվում տաքսի ծառայություններից. տարիներով ինձ հավատարիմ ծառայած ավտոմեքենան սկսել է անհանգստության նշաններ ցույց տալ, քաղաքի կենտրոնում կայանատեղի գտնելը դարձել է գրեթե անկարելի, խճողված ու հաճախ խցանված փողոցներով երթեւեկելը` տաժանակիր աշխատանք, իսկ ճանապարհային ոստիկանության մեքենաների անիմաստ առատությունը` անհանդուրժելի:

Ո՛չ, նպատակս քաղաքապետական մրցավազքի մասնակիցներին խորհուրդ-առաջադրանք տալը չէ: Քավ լիցի: Նրանք ամեն ինչ գիտեն: Նույնիսկ գիտեն, թե վքարի ենթարկվելու պարագայում ինչպես կարելի է ողջ մնալ... Չեմ չափազանցում. կարդացել եմ նրանցից մեկի նախընտրական բրոշյուրում:

Նպատակս` ամերիկացիների ասած street opinion-ի, փողոցի կարծիքին անդրադառնալն է եւ դրանից եզրակացության հանգելը:

Ինչպես հայտնի է, տաքսիստները, մեկ էլ վարսավիրները, համարվում են փողոցի կարծիքը (չշփոթել փողոցային կարծիքի հետ) կրող ու փոխանցող ամենավստահելի խավն են համարվում, երբեմն ավելի վստահելի` քան հարցախույզներ անցկացնող մասնագիտացված կազմակերպությունները, ինչպիսին է, օրինակ, ամերիկյան Gellup-ի հայկական ծառայությունը: Վերջիններին վրա նրանք` տաքսիստներն ու վարսավիրներն ունեն կարեւոր մի առավելություն. կարծիքն ու տեսակետը պարզելուց հետո նրանք անթաքույց ներկայացնում են նաեւ իրենց վերաբերմունքը: Մեկը սրամիտ մի պատկերով, մյուսը` ստեղծված իրավիճակից ելքի, ըստ որում` միա՛կ ելքի իր պատկերացումով, ու տակավին ուրիշներ` հայհոյանքով: Ամենահատկանշականը սակայն նրանց հետ հանդիպման վերջաբանն է. ծառայության վարձագումարն ստանալուց հետո դիմանալու, անփորձանք մնալու բարեմաղթանքն է, որը լինում է փոխադարձ:

Այս երկար նախաբանից հետո ասեմ, որ վերջին շրջանում մեր տաքսի վարորդները դարձել են անհամեմատ անմիջական, ես կասեի` անզուսպ: Եթե ժամանակին նրանք ուղեւորի կամ հաճախորդի ինչացու լինելը տնտղում էին կողմնակի հարցերով եւ ապա նոր «բացվում», այժմ ճակատային` գլխանց են արտահայտում իրենց կեցվածքը, կարծիքը, դիրքորոշումը: Եվ գրեթե առանց բացառության` բացասական, առարկություն չընդունող տոնով` հանդեպ գործող իշխանության եւ անձամբ Նիկոլ Փաշինյանին: Այնքան կտրուկ` որ կասկածի տակ է դնում վերջինի արդեն ցածր վարկանիշի մասին զանազան հարցախույզների տվյալներն անգամ:

Իշխանությունների եւ գլխավոր իշխանավորի նկատմամբ դժգոհության, ատելության գլխավոր պատճառը, իմ տպավորությամբ, ոչ այնքան սոցիալական, որքան քաղաքական է, ավելի շուտ` անապահովության եւ անհեռանկարայնության զգացողությունը: Մարդիկ գլուխ չեն հանում տարվող արտաքին ու ներքին քաղաքականությունից, խճճված, անհստակ, երկդիմի ու բազմադիմի քայլերից ու խոսքերից: Անվստահելիությունը տիրապետում է բոլոր մակարդակներում:

«Հալվա-հալվա ասելով բերանդ չի քաղցրանա, արա՛,- ասում էր տաքսիստներից մեկը` ակնարկելով Նիկոլի իբր խաղաղասիրական բարբաջանքները:- Մի հաս քեզ նայի, մի հաս` Ալիեւի ֆասոնին, ա՛յ տղա»: «Ռուսների հետ մուկ-կատո՞ւ ես խաղում, ա՛յ ախմախ», ասում էր մեկ ուրիշը` նկատի ունենալով ՀԱՊԿ զորավարժություններին մասնակցելուց հրաժարվելու եւ առաջիկա օրերին ամերիկացիների հետ «Ակտիվ գործընկեր» զորախաղեր անցկացնելու Նիկոլի որոշումը:

Նկատելի է նաեւ ոմանց հուսաբեկությունը ի տես դժնդակ այս օրերին, արցախահայությանը սպառնացող անէացման վտանգին, Սոթքում, Վերին Շորժայում եւ այլուր թշնամու բանակի կուտակումներին` «ՔՊ»ական վերնախավի զեխ ու շվայտ կյանքով ապրելու, թանկարժեք մեքենա, կալված, տուն ու դղյակ ձեռք բերելու անզուսպ ձգտման ֆոնին: Հուսաբեկություն` որն առաջ է գալիս անձնապես խաբված լինելու ափսոսանքից նաեւ: Նրանք մասնակցել են 2018-ի շարժումներին, ընտրել այն` ինչ կա հիմա, որը 5 տարի անց «բարդակ» են անվանում:

Զրուցակիցներիցս մեկն էլ, տարիքին հակառակ տնային շորտիկով մի տաքսիստ, հեղինակավոր տոնով հայտնեց իր եզրափակիչ խոսքը. «Որ նախկինները լավը լինեին, էս տականքները վլաստը (իշխանությունը) չէին կարա վերցնեին»:

Մյուս կողմից, չեմ կարող ասել, թե ընդդիմության նկատմամբ մեծ համակրանք է տածում մեր ազգաբնակչությունը, նկատի ունեմ նրա հասկապես ակտիվ մասը: Անվստահություն եւ հուսախաբություն կա նաեւ ընդդիմադիրների նկատմամբ: Ու թեեւ անցյալ շաբաթ օրը կազմակերպված հանրահավաքին Ազատության հրապարակում եւ հարակից տարածքներում սպասվածից ավելի բազմություն էր հավաքվել, սակայն կազմակերպիչների թույլ տված սխալների պատճառով (բանախոսների մեծ քանակ, երկարատեւ ելույթներ, իսկական ու գործնական պատգամների պակաս եւ այլն), չեմ կարծում, որ հաջորդ հավաքին նույնքան մարդ կհավաքվի այնտեղ` ճառ լսելու:

Այսուհանդերձ, դարձյալ անձնական տպավորությամբ, մարդկանց կարեւոր մի մասը դեռ սպասում է իշխանափոխության, մինչ ավելի մեծ մասը ոչինչի էլ չի սպասում: Հուսաբեկված է: Եվ սա ամենավտանգավորն է, երբ երկիրը` Հայաստան եւ Արցախ, գտնվում է ամենաճակատագրական հանգրվանի դիմաց:

Կարո՞ղ ենք դուրս գալ այս վիճակից:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Փրկե՛ք Արցախը. սեպտեմբերի 23-ին, ժամը 12-15-ին, կանցլերի գրասենյակի առջեւ

Սեպտեմբերի 7-ին «Վտանգված ազգերի ընկերակցությունը» հաղորդագրություն է հրապարակել, որով Գերմանիայի կառավարությանը հորդորում է լուրջ ընդունել Արցախի վրա Ադրբեջանի հարձակման սպառնալիքը` նկատել տալով սեպտեմբերին Ադրբեջանի շարունակական կրակոցներից զոհված 3 հայ զինվորներին, իրավիճակը գնահատելով պայթյունավտանգ: Կանցլերին ուղղված նամակում իրավապաշտպան կազմակերպությունը պահանջում է ջանք գործադրել վերացնելու Արցախի շրջափակումը: Ադրբեջանի հարձակումը Արցախի վրա ցեղասպանության կհանգեցնի, փախստականների ենթադրվող հոսքը կապակայունացնի տարածաշրջանը: Շոլցին հորդորում են ԵՄ կազմակերպությամբ հումանիտար օդային կամուրջ հաստատել Արցախի հետ:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# Առավելագույն դիվանագիտություն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արցախում եւ Հայաստանում նախընտրական տրամադրություններ են` չնայած Հայաստանի եւ Արցախի անվտանգության առումով ստեղծված լարված սահմանային վիճակին, չնայած այն բանին, որ ամեն օր տարբեր տեղեկատվական ռեսուրսներ փաստական վկայություններ են մատուցում Հայաստանի եւ Արցախի սահմաններին ադրբեջանական զինուժի նորանոր կուտակումների մասին, եւ շատ փորձագետներ են կանխատեսում մոտալուտ հնարավոր ռազմական բախման մասին: Անգամ Սոչիում կայացած **Պուտին-Էրդողան** հանդիպումը, չնայած որոշ գնահատականներով հրապարակայնացված բովանդակային մասով անարյունք էր, բայց որոշ փորձագետներ էլ կարծում են, որ այնտեղ չբարձրաձայնված համաձայնություններ կարող էին լինել հայկական զույգ պետությունների հետ կապված ինչ-որ գործընթացների սինքրոնացման առումով` տարածաշրջանային համատեքստում:




Այդ մասին անուղղակի վկայություններ են ՌԴ պաշտոնական շրջանակները վերջին կոշտ գնահատականները **Նիկոլ Փաշինյանի**` իտալացի լրագրողին տված հարցազրույցում ՌԴ վերաբերյալ տեսակետներին, ըստ որոնց Ռուսաստանն իր պարտավորությունները չի կատարում Լաչինի միջանցքում, ու որ` Ռուսաստանն ինքը մի օր անտպասելի կհեռանա տարածաշրջանից: Այդ գնահատականների տոնայնության օր-օրի խստացումը խոսում է այն մասին, որ Հայաստանի վերաբերյալ քննարկումը, գոնե ռուսական մակարդակով, դուրս է եկել Արեւմուտք-Ռուսաստան առճակատման վտանգավոր հարթություն:

Համանման իրավիճակներում հարյուր տարի առաջ շատ բան կորցրինք: Այս իրավիճակում ամեն քայլ, ամեն հայտարարություն պետք է հաշվարկված արվի, ամեն բարձրաձայնվող խոսք առավելագույնս դիվանագիտորեն ձեւակերպվի, ու, խոստովանեմ, ինձ համար շատ է զարմանալի, որ պետության առաջին դեմքը կարող է անզգույշ ձեւակերպումներ անել, իսկ երկրորդ դեմքը կարող է այնպես տղայորեն պատասխանել ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցչին, ինչպես ընդդիմադիրներից ամենաաղմկոտներին է պատասխանում:

Այ քեզ բան, ախր անգամ եթե այդ կարգի բարձր պաշտոնյայի անձը վիրավորել են` բռի ու դուրս տվող անվանելով նրան, դրան նույն տոնայնությամբ պատասխանելը երկրի հանդեպ վերաբերմունքի վատթարացմանը կարող է նպաստել, դուք պետություն ու նրա շահն եք ներկայացնում, ու ոչ թե ինքներդ ձեզ, մնացեք դիվանագիտական բառապաշարի շրջագծում, անգամ եթե այդպիսի դպրոց չեք անցել: Եւ դա բոլոր առաջնային պաշտոնյաներին է վերաբերում, կարողացեք զսպել ձեզ` հանուն երկրի, դա ավելի ըմբռնելի կլինի անգամ ռուսական շրջանակներում:

⇨4

# Եթե օդում վառոդի հոտ կա (կամ պատերազմի վախ), Գերմանիան պիտի հրշեջ լինի

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանական լրատվամիջոցների վերնագրերը որսում են Հայաստանում` ոչ միայն մեդիայում, այլեւ` կարծես օդում կախված այն վախը, որ հատկապես 2020 թվականի սեպտեմբերից հետո առավել խտացնում է վտանգի գույնն ու չափը, երբ սահմանից կամ Ադրբեջանի տարածքից տեսանյութ է հայտնվում` ռազմական հզորացող սպառազինությունը երեւակող: Դարձյալ զինվում է, դարձյալ զինում են` խաղաղության մասին մեր պատկերացումը երազանքից ուտոպիայի սահմանին մերձեցնելով:

Գերմանական «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգի» Մոսկվայից` Ռուսաստանի եւ ԱՊՀ երկրների քաղաքականությունը լուսաբանող թղթակից **Ֆրիդրիխ Շմիդտը** (Friedrich Schmidt) «Նոր պատերազմի վախ Հայաստանում» վերնագրյալ շարադրանքում իր գործընկերների նման խուսափում է ԵՄ դիտորդական առաքելությանը հղում տալ, փոխարենը հենվում է Ադրբեջանից հրապարակված ոչ պաշտոնական պատկերների վրա, որ ազդարարում են սահմանագոտում զորքի եւ ռազմական տեխնիկայի շարժը: Նպատակը ո՞րն է, պարզ չէ, գրում է Շմիդտը` այդուհետ արձանագրում, որ վերջին շաբաթներին հայ-ադրբեջանական սահմանագոտում բախումներ են եղել, երեք հայ զինվոր զոհվել, երկուսը` վիրավորվել են:

Ինչպես նկատել ենք տվել մեր նախկին հոդվածներում, Բեռլինի շրջափակումից հետո գերմանագիր թղթակիցները, եթե գրում են, թե « ԼՂ-ն միջազգային իրավունքի տեսակետից Ադրբեջանին է պատկանում», ապա շտապում են նաեւ «շտկել» , առավել ընդգծել, թե «Ղարաբաղի հայերի չճանաչված «Արցախի Հանրապետություն» կա, որը, ըստ «ՖԱՑ»-ի այս հրապարակման, զգուշացնում է ադրբեջանցի զինվորականների «հետագա սադրանքի» մասին:

⇨2

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# «Փչան Թոդորոսներու» ժամանակը

Քաղաքապետարանի աւագանիի ընտրութիւնները մօտեցան, մօտեցաւ նաեւ «փչան Թոդորոս»-ներու ժամանակը: Հաւանաբար շատեր գիտեն, թէ ով է «փչան Տոթորոս»-ը. չգիտցողներուն համար ըսեմ, որ յոյն գրող Պսաֆասի «Պահանջւում է ստախօս» կատակերգութեան հերոսն է. երբ երեսփոխան մը ընտրուելէ ետք, ընտրարշաւի օրերուն իր տուած խոստումները կատարել չկարենալուն համար արհեստավարժ ստախօս մը կը վարձէ, որպէսզի ան ընդունի իր գրասենեակը ափ առնող քաղաքացիները եւ իր ստաբանական վարպետութեամբ զանոնք ճամբու դնէ:

Այսօր ալ նոյնը կը կատարուի: Քաղաքապետարանը մեղրի կարաս է կարծես, որ 13-14 կուսակցութիւն ճանճի պէս վրան թառած են, որոնք ինչ-ինչ խոստումներ կու տան, որպէսզի քուէներ շահին: Խոստում տալէն աւելի դիւրին բան չկայ, դժուարը՝ խոստումը յարգելն ու կատարելն է: Օրինակ՝ ի՞նչ ըսել է «Ասե՛ք, կանենք», որո՞ւ ուղղուած է այդ խօսքը, ժողովուրդի՞ն, այսինքն անոնք ինչ ըսեն՝ դուք պատրաստ էք գործադրելու: Բաւական լուրջ խնդիր է, ես վստահ եմ, որ հարիւրաւոր առաջարկներ պիտի ըլլան, ո՞վ պիտի իրականացնէ զանոնք, թէ՞ հերթի պիտի դրուին առաջարկները, եթէ անշուշտ դիմումները կարդացող ըլլայ:

Անցեալ շրջանին շատ մը գործեր կատարուեցան, եւ ամենագլխաւորը՝ ջանասիրութեամբ հին աւտոբուսները նորերով փոխարինուեցան: Շատ լաւ, սակայն կարգ մը ուրիշ անկատար մնացած բաներ կան, որոնք լուրջ հետապնդումի կարօտ են: Թուեմ մի քանին, գուցէ օգտակար դառնամ ապագայ քաղաքապետերուն:

Վտանգաւոր վիճակի մէջ գտնուող վերելակներու վերանորոգումը չէ ամբողջացած եւ ատենը անգամ մը կեանքեր կը խլեն, դեռ անցեալները տարիքոտ կին մը Երեւանի Կլենտէյլ Հիլզի մէջ ութերորդ յարկէն ինկած էր վերելակի փոսին մէջ ու մահացած: Անպայման ամբողջացնելու է հին վերելակները նորերով փոխարինելու աշխատանքը: Թէեւ կը խօսինք վերելակներու մասին, սակայն շէնքեր կան բաւական ողորմելի վիճակի մէջ, որոնք անհրաժեշտ նորոգութեանց կարիք ունին:

Երկրորդը մեր քաղաքին տգեղ երեսն են՝ թաքսիները... Մեր թաքսիներուն վիճակը չի տարբերիր գիւղի մը թաքսիներէն: Դէպի կատարելագործում ընթացող մեր երկրին մէջ ամօթ է այսպիսի թաքսի-ծառայութիւն ունենալը: Նախ՝ բոլոր թաքսիները պետական գրանցում ունենալու են. պէտք է բոլորը միագոյն ըլլան, պէտք է բոլորը հաշուիչ ունենան, ապակիները թափանցիկ, ղեկին մօտ պիտակ մը թաքսիի տիրոջ եւ վարորդի անուններով եւ մեքենային համարանիշով, որպէսզի յաճախորդը ապահով զգայ: Վարորդը յատուկ կարգավիճակ ունենալու է, նախընտրաբար յատուկ դասընթացքի հետեւած, մաքուր նկարագրի տէր, ուղեւորներուն հետ լաւագոյն ձեւով վարուելու պատրաստ, կոկիկ հագուածքով, մեքենային մէջ չծխող: Թաքսիները քաղաքի մը դէմքը կը ներկայացնեն եւ ուղեւորին վրայ տպաւորութիւն կը գործեն:

Երրորդ՝ անհրաժեշտ է զբօսայգիներուն յատուկ ուշադրութիւն դարձնել, մասնաւորաբար Անգլիական այգին, ամենասիրուած այգին ամենաթափթփած վիճակի մէջ է, ուր ո՛չ կանոնաւոր սալայատակուած անցուղիներ կան, ո՛չ ներկայանալի լուացարան-զուգարան:

Փողոցներու եզրի փոշոտած լուսասիւներուն լամբերը ատենը անգամ մը լուացուելու են:

Նոր աւտոբուսներուն մէջ յաճախ 100 դրամանոց չունեցողը վարորդի՛ն կը յանձնէ գումարը, այդ դրամները ո՞ւր կ'երթան, ստուգուա՞ծ է: Կարելի չէ՞ մետրոյին նման ժեթոններ օգտագործել:

Շատ կարեւոր է, որ որմազդերու հիմնական լեզուն հայերէն ըլլայ, օտարալեզու որմազդ փակցնողները տուգանուելու են:

Նկատողութիւններ եւ առաջարկներ, յանուն մեր մայրաքաղաքի բարօրութեան, շատ են, երբ ատենը գայ, կը յայտնենք: Կ'ասենք ու դուք կ'անէք, բայց աւելի ճիշդ պիտի ըլլար, որ դուք ընտրուելէ ետք ելլէք ձեր պատեանէն ու շրջագայիք քաղաքին մէջ ու իմ բոլոր մատնանշածներս տեսնէք, զգաք ձեր մաշկին վրայ ու կարիք չունենաք ուրիշներու յիշեցումին:

***Յ.Գ.**- Բոլոր թեկնածուները աթոռ չգրաւած՝ մէյ մը թող բառարաններուն դիմեն ու հասկնան, թէ ի՞նչ կը նշանակէ «Աւագանի», ու իրենք իրենց հարց տան, «իրենք իրաւունք ունի՞ն Աւագանի կոչուելու»:*

# Եթե օդում վառոդի հոտ կա (կամ պատերազմի վախ), Գերմանիան պիտի հրշեջ լինի

➩1 Գերմանական մեդիան ողողված է Հայաստան-Ռուսաստան լարված հարաբերությունների մասին անդրադարձներով, գրում էր սրա մասին դեռ ամիսներ առաջ, սակայն հիմա՝ սեպտեմբերի 11-ից 20-ը Հայաստանում անցկացվելիք հայ-ամերիկյան միացյալ զորավարժությունների մասին լուրը բազմապատկել է գերմանական ԶԼՄ-ների հետաքրքրությունը: Նույնիսկ փոքր լսարան ունեցող լրատվականներն են զորավարժություններով հետաքրքրվել: «Հայաստանի պաշտպան» կամ «սատարող ուժ» կաղապարային ձեւակերպումը, որ գերմանական մամուլում պարտադիր դեռ գրվում է Ռուսաստանի դերակատարումը նկարագրելու եւ դրանից հրաժարումը խոշորացնելու նպատակով, իրականում վերածվում է մի բանաձեւի, որ փորձ է անում վարկաբեկելով Ռուսաստանին՝ «արդարացնել» «եվրոպացիների չեզոքությունը»: Այս պարագայում նաեւ ԵՄ դիտորդների լռությունը, նրանք ամեն բան տեսնում են հեռադիտակով, լսում նաեւ արբանյակային կապով, Ադրբեջանի կրակոցը «շոյում» է նրանց ավտոմեքենան, բայց նրանք որեւէ լրատվականի վկայություն չեն տալիս, գրում են, փաստագրում, արձանագրում... կազմում պատմության իրենց հատորը:

«ՖԱՑ»-ի մեկնաբանը հղում է անում բրիտանացի **Թոմաս դե Վաալի** եզրակացությանը, թե նոր պատերազմի սպառնալիքն իրական է: 2020-ի աշնանը Ադրբեջանի բացահայտ հաղթանակը Բաքվին առիթ չտվեց հայտարարել, թե հակամարտությունն ավարտված է, ընդգծում է Թոմաս դե Վաալը Կարնեգի մտակենտրոնի վերլուծականում եւ հղում անելով ադրբեջանցի դիտորդներին նշում, որ «հայ անջատականների (սեպարատիստների) դեմ ռազմական գործողությունը ժամանակի հարց է»:

Հայաստանի եւ ԱՄՆ-ի միացյալ զորավարժությունների մասին հայտարարությունը Երեւանի եւ Մոսկվայի միջեւ լարվածությունը հասցրել է գերլարման: «Շատ հայեր հիասթափված են, որ Ղարաբաղի շրջափակումը շարունակվում է, ի հեճուկս տեղակայված ռուսական խաղաղապահների», գրում է «ՖԱՑ»-ի հոդվածագիրը եւ հղում անում ՀՀ վարչապետ **Փաշինյանի** օրերս իտալական «Լա Ռեպուբլիկա» թերթին փոխանցածը, թե Ռուսաստանը կարող է լքել Հարավային Կովկասը՝ «մի օր կարթնանանք ու կտեսնենք, որ Ռուսաստանն այստեղ չէ»: ՀՀ վարչապետի դժգոհությունը, թե ռուս խաղաղապահները պիտի հսկեին Բերձորի միջանցքը, ինչը չեն կարողացել կամ չեն ցանկացել անել, խնդրահարույց է, ինչին հետեւել է **Պուտինի** խոսնակ **Պեսկովի** մեկնաբանությունը, թե Ռուսաստանը «Հարավային Կովկասի անբաժան մաս լինելով», չի կարող լքել տարածաշրջանը եւ նկատել տվել, որ Ռուսաստանում ավելի շատ հայեր են ապրում, քան Հայաստանում:



Գերմանացի մեր գործընկերը, որ տարիներ ի վեր Մոսկվայում է աշխատում, այնտեղից լուսաբանում է նաեւ Հայաստանում եւ Արցախում կատարվողը, փաստն է շարադրում: Մենք փորձենք նաեւ հարց տալ. Պեսկովը զգուշացնո՞ւմ, թե՞ սպառնում է, երբ հիշատակում է ռուսաստանաբնակ հայերին, որոնք իրավամբ մեծաթիվ լինելով՝ երբեք ռուսական քաղաքական վերնախավը չեն համալրել, ազդեցիկ ձայն չեն ունեցել, լոբբիստական աշխատանքով աչքի չեն ընկել: Ավելին՝ հայոց լեզվով էլ նախընտրում են չխոսել:

«ՖԱՑ»-ը հետագա շարադրանքում իրազեկում է, թե Պեսկովն անդրադառնալով սեպտեմբերի 11-ից 20-ը հայ-ամերիկյան «Արծիվ գործընկեր 2023» (Eagle Partner 2023) զորավարժություններին, ասել է, թե դրանք «զգոնություն են առաջացրել, հատկապես ներկա իրավիճակում»:

Շմիդտը չի նշում, սակայն հայտնի է, որ ՆԱՏՕ-ի հետ Հայաստանը համագործակցում էր «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում, հետեւաբար մեր կարծիքով, Մոսկվային զայրացնում է ոչ այնքան արդեն տարիներ ի վեր շարունակվող համագործակցությունը, կամ դրա խորացումը, այլ՝ դրա բացառիկացող, այլընտրանքից զրկող դերը, որ ՀԱՊԿ-ից հրաժարվելու իրական խորապատկերին լրիվ ընկալելի է դառնում:

«Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը» հայ-ռուսական լարվածության վերոբերյալ փաստերին հավելում է նաեւ Փաշինյանի տիկնոջ Կիեւ այցը, որ Հոգեկան առողջության գագաթնաժողովին մասնակցությունից բացի մարդասիրական օգնություն հասցնելու առաքելությունն է իրականացրել: Հաջորդ պատճառը ՀՀ Սահմանադրական դատարանում հաստատված եւ ԱԺ ներկայացված Հռոմի ստատուտի հնարավոր վավերացման փաստն է, որ Ուկրաինայի պահանջով Պուտինին ձերբակալման հնարավորություն է ընձեռում՝ ծուղակ դառնալով այլ շահեր հետապնդող պետությունների համար, ինչի մասին ՌԴ ԱԳՆ հուշել է պաշտոնական Երեւանին:

«ՖԱՑ»-ը **Աննա Հակոբյանի** անուն-ազգանունը Anna Akopjan ձեւով է հրապարակել, ինչը ***հ*** տառն ու հնչյունն ունեցող գերմանացու համար կամ թերի աշխատանքի արդյունք է, որ քիչ հավանական է, կամ՝ շեշտ, թե ռուսական գրելաձեւն էլ վկա՝ ռուսները միշտ պակասեցնում են:

«**Ազգի**» տպագիր տարբերակի սուղ տարածքում չմոռանանք մի կարեւոր փաստ ամրագել: Հայաստանին Արցախի շրջափակումը դժվարություններ է հարուցել, սրա մասին ծանուցելով, սեպտեմբերի 2-ին «ՖԱՑ»-ը հրապարակել էր Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, իշխող սոցիալ- դեմոկրատ **Միշայել Ռոթի** (Michael Roth) պահանջ առաջարկի մասին, թե տվյալ իրավիճակից է բխում Հայաստանի քաղաքացիների համար վիզայի դյուրինացված տարբերակի տրամադրումը: Ռոթն իհարկե կանցլեր **Շոլցի** գաղափարական համախոհն է, նրա կուսակիցը, սակայն կանցլերի նման չի համարձակվում հիշատակել այն, ինչ ձեւակերպեց Գերմանիայի կանցլերը Ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման հասնելու մասին: «Այն հիմնված է Հայաստանի եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականության եւ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների ինքնորոշման իրավունքի սկզբունքի վրա: Այս բոլոր սկզբունքները հավասարապես կարեւոր են»: Միշայել Ռոթը չի մոռանում ձեւակերպել, որ «Ղարաբաղը միջազգային իրավունքի տեսակետից Ադրբեջանին է պատկանում»: «ԳԴՀ եւ ԵՄ Հայաստանին նախկինից առավել շատ պիտի սատարեն, «մեր ռազմավարական հետաքրքրություններից է բխում, որ Հայաստանին չհանձնենք ռուսական իմպերիալիզմին, եւ պաշտպանենք երիտասարդ ժողովրդավարությունը»:

Միշայել Ռոթը շատ երիտասարդ է եւ որեւէ տեղ մեզ չի հանդիպել, թե բժիշկները նրա առողջության եւ հիշողության մասին ակնարկներ արած լինեն: Ուստի աննրբանկատ չի լինի, եթե հիշեցնենք, որ երիտասարդ կայացած ժողովրդավարություն է նաեւ ԼՂՀ կամ Արցախի Հանրապետությունը, որի պայքարը ժողովրդավարության համար է՝ ավտորիտարիզմի դեմ: Ուստի բարոյական չէ ուժի իրավունքի գերին լինելը: Եւ՝ ավելի վատ՝ մի ազգի տրոհված մասերն ավելի հեռացնելը: Գերմանիայի բաժանված եւ միացված ճակատագիրը պիտի որ այս դասը սովորեցրած լիներ:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ
Թուրքագետ

# Պուտին-Էրդողան հանդիպման շուրջ

*Սոչիում Էրդողանն ու Պուտինը բացի հացահատիկի գործարքի վերականգնման հարցերից, անդրադարձել են նաեւ Սիրիայում եւ Հարավային Կովկասում տիրող իրավիճակին*

Սեպտեմբերի 4-ին Սոչիում Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը** հանդիպեց ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինին**: Հանդիպումը նախաձեռնել էր Թուրքիայի նախագահը: Այն լայն արձագանք գտավ Թուրքիայում, Արեւմուտքում, տարածաշրջանում, Հարավային Կովկասում եւ Հայաստանում: Մեծ էր հանդիպման հանդեպ միջազգային հանրության հետաքրքրությունը, այն աստիճանի, որ մեկնաբանությամբ դրան արտերկրյա մամուլն արձագանքել էր նախքան կայացումը:

Haberturk TV-ն դրա առնչությամբ օրեր առաջ գրել էր. «Քանի որ Ռուսաստանի նախագահ մեծարգո Պուտինը հանգամանքների բերումով չէր կարող ժամանել Թուրքիա, ուստի մեր նախագահը որոշեց Ռուսաստան մեկնել»: Էրդողանը մտադիր էր Պուտինին հանդիպել Թուրքիայում, այդ իսկ պատճառով էլ համառորեն հրավիրում էր նրան: Նույնիսկ շտապել էր հայտարարել, որ նա օգոստոսին կժամանի Թուրքիա: Բայց ապարդյուն, որքան էլ Թուրքիան վավերացրած չլինի Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը (ստատուտ), այնուամենայնիվ ՌԴ նախագահը չհամարձակվեց թռչել ինքնաթիռով, թեկուզ Թուրքիա, իր լավագույն ընկերոջ մոտ:

Սեպտեմբերի 3-ին Ռուսաստանի եւ Թուրքիայի նախագահների հանդիպմանը դեռ չկայացած արձագանքել է նաեւ Ասսոշիեյտեդ պրեսսը, մատնանշելով, որ օրակարգի առաջնահերթ խնդիրը լինելու է հացահատիկի սեւծովյան միջանցքի վերագործարկումը: Ամերիկյան գործակալությունը միաժամանակ նշում էր, որ Էրդողանը հույս ունի համոզել Պուտինին վերադառնալու 2022-ի հուլիսին ՄԱԿ-ի միջնորդությամբ ստորագրված հացահատիկի մատակարարման համաձայնագրին, ապա եւ ավելացրել. «Նախագահ Էրդողանը Ուկրաինայի դեմ արդեն 18 ամիս շարունակվող պատերազմը սանձազերծած Պուտինի հետ սերտ հարաբերությունների մեջ է: Նա չի մասնակցում Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներին, դարձել է վերջինի առեւտրային գլխավոր գործընկերներից մեկը: Սակայն նրա սերտ հարաբերությունները չեն խանգարում, որ Թուրքիան աջակցի Ուկրաինայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին»:



Համաձայն թուրքական լրատվամիջոցների Պուտին-Էրդողան հանդիպումը երեք ժամ է տեւել, որի ընթացքում կողմերը կենտրոնացել են հացահատիկի սեւծովյան միջանցքի վերագործարկման խնդիրների վրա:

Մինչ արդյունքներին անդրադառնալը նշենք, որ Թուրքիայում իշխանամետ մամուլը Սոչիում տեղի ունեցած հանդիպումը թուրք ընթերցողին ներկայացրեց «Ձերն ազդանշաններ ԱՄՆ-ին. Էրդողանը հաղթանակով վերադարձավ» խորագրով, իսկ ընդդիմադիր լրատվամիջոցները նշեցին, որ նախագահը Թուրքիա վերադարձել է ձեռնունայն, որովհետեւ Պուտինը նշված միջանցքի վերագործարկման համար Արեւմուտքից պահանջել է վերացնել պատժամիջոցները: Անկախ Պուտինի պահանջներից, որոնք ի չիք են դարձրել հացահատիկի սեւծովյան միջանցքի գործունեությունը վերականգնելու շնորհիվ Արեւմուտքին հաճոյանալու Էրդողանի հաշվարկները, Haberturk TV-ի էկրանից մեկնաբանը նշեց, որ իրատեսական չէ Թուրքիայի վերադարձը Արեւմուտք, որովհետեւ նա չի կարող հրաժարվել Ռուսաստանի հետ Սիրիայում ծավալվող համագործակցությունից:

Մեկնաբանին հերքեց թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության վարչության նախկին պետ, պաշտոնաթող գեներալ **Իսմայիլ Հաքքը Փեքինը**, թե Թուրքիան մինչեւ օրս չէր աջակցել որեւէ երկրի անդամակցությունը ՆԱՏՕ-ին, բայց հիմա Ուկրաինայից զատ աջակցում է նաեւ Վրաստանի անդամակցությանը, 2014-ին նա դատապարտել էր Ղրիմի բռնակցումը Ռուսաստանին, իսկ 2018-ին Էրդողանը մտահոգությամբ հայտարարել՝ «Սեւ ծովը վերածվում է ռուսական լճի»:

Որքան էլ, սեպտեմբերի 5-ի համարում իշխանամետ «Ենի Շաֆաք»-ի վկայությամբ, Էրդողանը մամուլի համատեղ ասուլիսում նշի հացահատիկի գործարքի վերականգնման համար նոր փաթեթ պատրաստելու մասին, համարելով դրա գործարկումը հավանական, ավելին՝ միաժամանակ հորդորի Ուկրաինային մեղմելու Ռուսաստանի հանդեպ կոշտ դիրքորոշումը, այնուամենայնիվ Պուտինն ու Էրդողանը հացահատիկի գործարքի շուրջ համաձայնության չեն եկել: Դա պաշտոնական ՏԱՍՍ-ի գլխավորությամբ հաստատում են նաեւ ռուսական ազդեցիկ բոլոր գործակալությունները: Ավելին՝ Մոսկվայում BBC-ի թղթակից **Ալեքսեյ Կալմիկովը** նշում է, որ այդ գործարքը պետք չէ Պուտինին, դա անհրաժեշտ է Ուկրաինային ու Էրդողանին, ավելացնելով. «Ընդհակառակը, գործարքի շնորհիվ Ուկրաինան զգալի գումար է վաստակում, միաժամանակ հացահատիկի առումով հանդիսանում է տարածաշրջանում Ռուսաստանի գլխավոր մրցակիցը»: Այսինքն, խնդիրը սոսկ պատժամիջոցները չեն, դրանք ընդամենը, ըստ BBC-ի թղթակցի, Պուտինի պատճառաբանություններն են միայն:

Էրդողան-Պուտին քննարկումները, ինչ խոսք, չեն սահմանափակվել հացահատիկի գործարքով: Ինչպես «Ազատություն» ռադիոկայանն է նշել, որին հաստատում է նաեւ թուրքական մամուլը. կողմերը հանդիպմանը միաժամանակ քննարկել են Թուրքիայում նախատեսվող գազային հանգույցի ստեղծման, Մերսին քաղաքի նավահանգստից ոչ հեռու «Աքքույու» ատոմակայանի գործարկման, Սիրիայում, Լիբիայում եւ Հարավային Կովկասում տիրող իրավիճակին առնչվող խնդիրներ, ինչպես նաեւ Սեւ ծովի առափնյա քաղաքներից Սինոփում եւս ատոմակայան կառուցելու Պուտինի առաջարկը: Թե առաջարկին ինչ պատասխան է տվել Էրդողանը, հայտնի չէ, պարզապես նա հերթական անգամ ՌԴ նախագահին Թուրքիա է հրավիրել, իսկ վերջինը Էրդողանից պահանջել է հարգել Սիրիայի տարածքային ամբողջականությունը, որը ենթադրում է ի չիք դարձնել սիրիական սահմանի երկայնքով 30 կմ խորությամբ անվտանգ գոտի ստեղծելու, այսպիսով քրդերի Ժողովրդական ինքնապաշտպանության ուժերին՝ YPG-ին վնասազերծելու թուրքական ծրագրերը, որոնց Թուրքիան համարում է ահաբեկչական PKK-ի սիրիական մասնաճյուղը, իսկ ԱՄՆ-ը՝ Սիրիայի դեմոկրատական ուժեր, զինում եւ հովանավորում է, եւ այս հանգամանքը չի խանգարում, որ վերջիններս ներկայացուցչություն ունենան նաեւ Մոսկվայում:

Թե Հարավային Կովկասում տիրող իրավիճակին անդրադառնալիս ի՞նչ հարցեր են քննարկել Էրդողանն ու Պուտինը՝ չգիտենք, որովհետեւ այդ մասին ոչ մի տեղեկություն չեն հայտնել: Բայց կռահել կարելի է, որ քննարկել են Հայաստան-Ադրբեջան հաշտության պայմանագրի շուտափույթ ստորագրման հարցը, արծարծել «Զանգեզուրի» միջանցքը Հարավային Կովկասում ԱՄՆ-ի ու Եվրոպական միության հարաճուն ակտիվությունը, որը Մոսկվան դիտարկում է որպես լուրջ սպառնալիք Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայությանը Հարավային Կովկասում:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# «Հայաստանը հրաժարվում է Ռուսաստանի ֆորպոստի կարգավիճակից»

*Անկարայի համալսարանի գիտխորհրդի անդամ պրոֆեսոր, հայերին վերաբերող երեք գրքի հեղինակ **Յըլդըզ Դեվեջի Բոզքուշը** (YILDIZ DEVEC BOZKU) հայ-ադրբեջանական համաձայնության, միջազգային խաղացողների ու Թուրքիայի համար դրա նշանակության մասին հոդված է հրապարակել՝ ներառելով ներքոգրյալ երեք հարցերն ու դրանց պատասխանները՝*

## Երկկողմ համաձայնության նշանակությունը միջազգային հարաբերությունների կանոնակարգման եւ երկրների միջեւ խաղաղության հաստատման համատեքստում

*Այս թեմայի կապակցությամբ, հեղինակն անդրադարձել է 2023 թ. հուլիսի 27-29 ԱՄՆ Վիրջինիա նահանգում Հայաստանի ու Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպմանը, որի արդյունքում հայտարարվել է երկկողմ հարաբերությունների վերաբերյալ ձեւավորված համաձայնության նախագծի մասին:*

*Հեղինակի կարծիքով, այդ շոշափելի քայլը խաղաղության հաստատման տեսակետից չափազանց կարեւոր է, որը նաեւ վկայում է տարածաշրջանում պատմականորեն ձեւավորված Ռուսաստանի գերիշխանության հիմքերի թուլացման մեկնարկի մասին: Ըստ հեղինակի, արցախյան երկրորդ պատերազմից հետո կայուն խաղաղություն հաստատելու հարցում Ռուսաստանի անկարողությունը, երկու երկրների միջեւ լուրջ խնդիրներ էր առաջացրել: Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ ամերիկյան Վիրջինիա նահանգում ձեռք բերված համաձայնությունը, թուրք պրոֆեսորի համոզմամբ, նաեւ Հարավային Կովկասը ռուսական ֆորպոստի կարգավիճակից դուրս բերելու մասին է վկայում:*

## Երկկողմ համաձայնության նշանակությունը ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու Չինաստանի տեսանկյունից

Տիկին Բոզքուշի խոսքերով, նման միջոցառումները հյուրընկալելով, ԱՄՆ-ը ցանկանում է ցույց տալ, որ Արեւմուտքն էլ է այդ բնագավառում քայլեր ձեռնարկում, եւ քանի որ այդ համաձայնությունը ձեռք է բերվել նախ Վաշինգտոնում եւ հետո Վիրջինիայում, Ռուսաստանին ուղղված կարեւոր ուղերձներ է իր մեջ պարունակում: Թուրք պրոֆեսորի խոսքով, Վաշինգտոնն ուզում է հասկացնել տալ, որ **Վագներական** վարձկանների ապստամբության պայմաններում, ԱՄՆ-ը կարող է ապահովել տարածաշրջանում **Պուտինի** խոստացած, սակայն ձախողած խաղաղությունը:



Թուրք պրոֆեսորի տեսակետով, Վաշինգտոնի այս քայլի մեջ կային նաեւ Չինաստանին ու Իրանին հասցեագրված այլ ուղերձներ: Ըստ այդմ, Չինաստանը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի համար կարեւորում է Բաքվի աշխարհագրական դիրքն ու էներգետիկ ռեսուրսները եւ բարձր է գնահատում այդ նախագծում Թուրքիայի դերակատարությունը:

## Թուրք-ադրբեջանական հարաբերություններում հայ-ադրբեջանական երկկողմ հանդիպման նշանակությունը

Ըստ տիկին Բոզքուշի, Արցախի 44-օրյա պատերազմը նոր էջ է բացել Բաքու-Անկարա հարաբերությունների պատմության մեջ, որը, պրոֆեսորի կարծիքով, իր գագաթնակետին է հասել Շուշիում ստորագրված ռազմական, կրթական, մշակութային, առեւտրատնտեսական ու պաշտպանական ոլորտներում թուրք-ադրբեջանական համատեղ հայտարարության հրապարակումից հետո:

⇨4

# Առավելագույն դիվանագիտություն

⇨1

Այնպես որ՝ ասենք Լոնդոնում Հայաստանի դեսպանատան նոր շենք էլ եթե գնենք՝ դա դեռ չի նշանակում բովանդակային դիվանագիտություն, դեռ պետք է այդ բարձրակարգ դիվանագետին ունենալ ու, առհասարակ, դիվանագիտական մոտեցումը դարձնել միջպետական մակարդակով ցանկացած հարաբերվելու ձեւ: Ու անգամ՝ ոչինչ չէր խանգարում Լոնդոնի մեր ներկայացուցչության դուռը բացել այցելուի առջեւ, երբ ժամերով սպասում ես, տասնյակ անգամ զանգում, ու քո առջեւ դուռ չեն բացում (կոնկրետ Լոնդոնում ես դա արել եմ):

Իսկ վերջին օրերի սահմանային կուտակումների մասին ով ասես գրեց, ով ասես տեսանյութեր հրապարակեց՝ ադրբեջանական զինուժի ավելացման, զենքուզինամթերքի փոխադրման մասին, անգամ Փաշինյանը վերջին կառավարական նիստում խոսեց այդ մասին, ի դեպ տարածաշրջանում նոր պայթյունի կանխելը հասցեագրելով ՄԱԿ-անդամ երկրներին. ո՞ր ՄԱԿ անդամներին, որոնք նույնիսկ Լաչինի վերաբերյալ բանաձեւ չընդունեցի՞ն Անվտանգության խորհրդի քննարկումից հետո: Ադրբեջանի զինուժի կուտակումներից խոսելուց հետո Փաշինյանն անցավ առօրյա հարցերին, մի խոսք անգամ չասելով՝ արդյոք մենք պատրա՞ստ ենք դիմագրավել թշնամուն, ավելին՝ այդքանից հետո նորից խոսելով Հայաստանի կողմից խաղաղության պայմանագրի ստորագրման պատրաստակամության մասին: Ուրիշներին հասցեագրած դիվանագիտական բառապաշարի մշտական կիրառման իմ մոդելն էլ այս պահին ձեռքվածք տվեց՝ էն էժանագին խոսքը մի անգամ ես ասեմ, երեւի այդպես որոշ շրջանակներ ավելի լավ են հասկանում՝ «Վա՜յ, հորս արեւ...»

Այս իրավիճակում շատ դժգույն էպիտետ օգտագործած կլինենք, եթե ասենք, որ Արցախում էլ, Հայաստանի մայրաքաղաքում էլ զարմանալի է ընտրությունների հետ կապված ողջ խառնաշփոթը՝ առաջինում շաբաթավերջին (եթե ադրբեջանցիների ծավալուն սադրանք չլինի) երկրի նախագահի, Երեւանում՝ ավագանու ընտրության:

Որ ասում են՝ ուղտի պարը կամրջի վրա է բռնում, հիմա մերն է: Արցախում հացը, էն էլ եգիպտացորենի ալյուրով, մեկ հոգուն երկու հարյուր գրամանոց կտորներով են տալիս, հումանիտար իրավիճակն այս պահին ամենավատթարն է, հենց այս երկու-երեք շաբաթը պետք էր հնարավորինս բռունցքվել ու մտածել ինչ անել՝ եթե ադրբեջանցիների կողմից մեծ սադրանք լինի, բայց այնտեղ, երեւում է, ավելի կարեւոր գործով են զբաղված, խորը մխրճվել են նոր նախագահի ընտրելու գործընթացի մեջ, էն էլ՝ նախ մի գաղտնի հանդիպումով, հետո՝ մի քանի տասնյակ խորհրդարանականներով կորոշեն նախագահ ունենալու հարցը: Ու նույնիսկ կոնսենսուս կա օրերս պետնախարար նշանակված **Սամվել Շահրամանյանին** նախագահի թեկնածու առաջադրելու առումով: Արցախի խորհրդարանի հինգ խմբակցություններից չորսը՝«Արդարություն», «Ազատ հայրենիք-ՔԴՄ», «Արցախի ժողովրդավարական կուսակցություն», ՀՅԴ, աջակցում են Շահրամանյանին Նա համարվում է հրաժարական տված **Արայիկ Հարությունյանի**, մեծ հաշվով՝ նաեւ նախկին նախագահ **Բակո Սահակյանի** թիմակիցներից, շաբաթավերջին Արցախի խորհրդարանական խմբակցությունները նիստ կգումարեն եւ կընտրեն նրան (ի բացառյալ **Սամվել Բաբայանի**՝ թվով երկրորդ խմբակցության: Սամվել Բաբայանը, որ իրավիճակի լուծման իր ծրագիրն ունի եւ նույնպես հավակնում էր դառնալ նախագահ կամ պետնախարար, այդպես էլ Արցախում տասնամյակներով իշխանությանը մոտ կանգնած մարդկանց ձեւավորած տրամաբանության մեջ դերակատար չդարձավ: Բայց նաեւ կարելի է նույն տրամաբանությամբ հարցնել՝ եթե Արայիկ Հարությունյանի թիմակիցն է դառնալու նախագահ, եւ նրա ազատած տեղն էլ պետնախարար կնշանակեն էլի Ա. Հարությունյանի եւ մեծ հաշվով Բակո Սահակյանի թիմակցի, «Ազատ Հայրենիք-ՔԴՄ» խորհրդարանական խմբակցության ղեկավար **Արթուր Հարությունյանին,** այս երկու քարի արանք- նեղ պահին ինչի՞ն է ծառայում Ա. Հարությունյանի հրաժարականը: Հայաստանի իշխանական շրջանակներում կարծում են, որ Արցախում նախկիններին մոտ մարդկանցով վերջնականապես ձեւավորում են իրենց իշխանությունը, եւ չափազանցված, թե ոչ՝ այստեղ վախեր ունեն, որ Արցախում տեղի ունեցողի նախագծի հեղինակներն Արցախում իշխանափոխությունը պատրաստվում են արտահանել Հայաստան: Է, չգիտենք, բայց, խոստովանեմ՝ այս իրավիճակում Արցախում իշխանության փոփոխությունը թվում է ամենաանհարկավոր միջոցառումը եւ ադրբեջանցիներին ուղղված հրավեր՝ հարձակվելու Արցախի վրա: Թող սխալված լինեմ, դրանից ես կուրախանամ միայն:

Նույն կերպ՝ եթե Հայաստանի սահմաններին հարավում եւ արեւելքում կուտակումներ են, ո՞նց կարող են Երեւանում անվրդով դեմքով եւ իրենց ներսի պաթոսի ողջ կրքով քարոզարշավ անել, թե բա՝ «Ասեք՝ կանենք», «Մենք գիտենք անելու ձեւը», «Վիկտորի պլան», սեփական տների անվճար սեփականաշնորհում, ֆլան-ֆստան: Երեւի չեն նկատում՝ այս անգամ ամենից շատ է ընտրողն անտեսում բոլորին, նրա ուշքն ու միտքը սահմաններին է: Ու երբ բակերից առնում է որեւէ քարոզողի ձայնը, անպայման մի հիշոց բաց է թողնում: Ոչինչ մեզ վրա չի ազդում՝ ո՛չ մահերը սահմանների գնդակոծություններից, ո՛չ արցախցիների 200 գրամանոց հացի կտորը (տեսնես ոնց է կուլ գնում ճոխ ուտելիքը ճոխ սեղանների, հատկապես նախընտրական շտաբերի խորովածքյաբաբ տեսականին), ո՛չ հայրենիքում հուղարկավորվելու հնար չունեցող- ավտովթարից զոհված երիտասարդ աղջկա մոր մորմոքը, ո՛չ մեր գերիների անհուսալի վիճակը... էս ինչ մի եռանդով եք տնետուն, բակեբակ ընկել, ես կասեի՝ մոլեռանդությամբ, թե բա՝ Երեւանը սարքելու ենք Ավետյաց երկիր: Չունենամ ձեզ, կլասիկ քամի անողներ: Արդյունքը միացնում ես՝ երկու-երեք քաղաքապետացուների գովազդն է, հասկանում ենք՝ փող կա, շատ փող, լրատվամիջոցներին էլ եք շլացրել, բա դե փող ունեք՝ նստացրեք արցախցիների հաշիվներին, ի՞նչ եք ձեզ առել-ընկել քուչեքը, մեզ վերջնականապես հոգնեցնում ձեզանից...

Ցավալին այն է, որ չնայած սահմանային լարվածությանն ու անվտանգային լուրջ սպառնալիքին՝ մայրաքաղաքի ղեկավար դառնալու այս մրցավազքը տրամաբանական ավարտին է մոտենալու՝ ուզենք , թե չուզենք: Այնպես որ դեռ կա քարոզարշավի վերջին վճռորոշ շաբաթը, երբ պարզ կլինի, թե եզրագծում ի՞նչ են որոշելու իրենց ընդդիմադիր, կամ իշխանական թեկնածու համարողները, գոնե կիսամիասնական թեկնածու ձեւավորո՞ւմ են, թե չէ: Ու չնայած այսօր էլ որոշ վերապահումներով կարելի է ավագանի անցնելիք հավանական ֆավորիտներին ուրվագծել, դա խոստացել էինք, բայց ավելի լավ է՝ դա անենք հաջորդ շաբաթ, մինչ այդ կպարզվի նաեւ, թե մեր սահմանային անվտանգության խնդիրները ո՞նց ենք լուծելու:

Այս անգամ ուղղակի մի բան էլ ֆիքսենք.վերջին շրջանում Հայաստանում եւ Հայաստանի շուրջ անսպասելի շրջադարձային գործընթացներ կան, դրանց մասին իմացվում է ամեն օր ԶԼՄ-ներից, ու երբեմն այնպես է թվում, որ վաղուց ու լավ պատրաստված մի ծրագիր կես առ կես ու շատ լավ համակարգված, իրականություն է դառնում, հատկապես եթե հետեւում ես Օվերտոնի պատուհանով արվող արտահոսքերին: Այդ ամենաանհավանական արտահոսքերը որոշ ժամանակ անց պաշտոնական տեսքով են արդեն մատուցվում, որպես կատարվող իրողություն: Ինքներդ էլ շատ այդպիսի դեպքեր կհիշեք, մենք այս անգամ օրինակ բերենք ինչ-որ միջազգային ՀԿ-ի ղեկավարի՝ լրատվամիջոցներ հոսած այն տեսակետը, թե լավ կլինի Հայաստանը ՆԱՏՕ-ին անդամակցելու մասին մտածի, ու մինչ հայ պաշտոնյաները կես-բերան ակնարկում էին, որ դա ինչ-որ անկապ մարդու տեսակետ է, հայտարարվեց հայ-ամերիկյան (թեկուզ փոքր մասշտաբի) զորավարժությունների անցկացման մասին ամերիկյան մտադրությունը շատ մոտիկ օրերին: Զորավարժությունները սովորաբար երկար նախապատրաստվող իրադարձություն են, ու դրանց անցկացումից մեկ-երկու շաբաթ առաջ հայտարարելը, երբ նույն պահին ռուսական պաշտոնական շրջանակներից հղումներ են արվում, թե Հայաստանը վերածվում է Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու Արեւմուտքի գործիքի, սա նշանակում է, որ ամբողջ միջազգային ստորաբաժանում է համակարգում Հայաստանի քայլերը, դա չի կարող Հայաստանի, այսպես ասենք, անդեմ նախարարներով կառավարման կառույցը լինել, հավանաբար վերպետական լավ մտածված ինչ-որ ծրագիր է իրականացվում, որի բաղադրիչներից երկու-երեք մարդ է տեղյակ, իսկ երբ տեղեկության պակաս կա, հայկական իսթեբլիշմենթը անկարող է ինչ-որ անհայտ բանի դեմն առնել, խանգարել կամ նպաստել դրան:

Ի դեպ՝ զորավարժությունների թեման բավական ծավալվեց աշխարհաքաղաքական համատեքստով: Այն աստիճան, որ բացատրություններ կան, թե դրանք սովորական բան են ամերիկյան կողմի համար, եւ ըստ իր պետական կարեւորության դրանք հաճախ այսուայն երկրի հետ կամազկերպվում են: Ու դա Հայաստանի համար ռազմավարական գործընկերության կամ ռազմական համագործակցության նոր աստիճան չի նշանակում:Մինչդեռ ռուսական կողմը պարզապես խանդի նոպաների մեջ է ընկել՝ անգամ իրենց ԱԳ փոխնախարարի մակարդակով մտահոգիչ անվանելով դրանք եւ նշելով, որ ՀԱՊԿ անդամ երկիրը միայն ՀԱՊԿ շրջանակում կարող է զինավարժություն անցկացնել: Իրո՞ք, բա որ ՀԱՊԿ-ին դիմում ու ասում ենք՝ մեր ինքնիշխան տարածքում ադրբեջանական զինուժ է ներկա, ՀԱՊԿ-ն ինչո՞ւ մի ծպտուն չի հանում:

Ինչ-որ սողացող գործընթաց է մեր շուրջը, եւ հավանաբար ազգովին էլի կլինենք այնպիսի իրավիճակում, երբ տարիներ առաջ մի գիշերում հայտնվեցինք ԵԱՏՄ-ում: Ու սա բոլորից անընդունելին է, երբ Հայաստանի ժողովրդին կարելի է զբաղեցնել ինչով ասես՝ ընտրություններից սկսած , էլ ես ինչ գիտեմ՝ տարբեր էքստրեմալ իրավիճակներով ու դեպքերով, **Սնուփ Դոգի** համերգով, իսկ այդ ընթացքում մեր թիկունքից մեզ հետ վարվեն ինչպես փորձակենդանիների: Տխուր է:

Հասկանալի է, ոչ մեկս հիացած չենք ռուսների պահվածքով Արցախի էլ, Հայաստանի հանդեպ վերաբերմունքով էլ՝ ներառյալ Լաչինի միջանցքում կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Ռուսաստանի պահվածքը: Բայց մենք անցյալի դառը փորձ ունենք, ու այդ դառը չկրկնելու համար գոնե ժողովրդի ուսյալ հատվածը պետք է տեղեկություն ունենա, թե ինչ են բերում գլխներիս, մասնակցի որոշումներին, այդ որոշումների ճշմարտացիության վերաբերյալ կոնսենսուս լինի: Բայց ո՛չ, մերոնք՝ մեր քաղդասն ինքն է իրեն դուրս դրել ամեն ինչից, նրա մոտ միայն մի բան է լավ ստացվում՝ իշխանություն ունենալու մղումը, իսկ թե այդ իշխանությամբ ո՞ր հարցերը, այդ թվում՝ Արցախի, ինչպե՞ս է լուծելու՝ ո՛չ ճանապարհային քարտեզ ունի, ո՛չ քայլերի հերթականություն: Որեւէ մեկդ լսե՞լ եք ելքի առաջարկ այն բանի մասին, թե ի՞նչ էր պետք անել, երբ ռուսները ոչ միայն Լաչինում իրենց ստանձնած պարտավորությունները չեն կատարում, այլեւ գործարքների մեջ են ադրբեջանցիների հետ: Ասում են ՝ բանակցողին պետք է փոխել, ու վերջ, իսկ ի՞նչ է բանակցելու այդ նոր բանակցողը, ո՞ր ճանապարհով է գնալու, ոչինչ չգիտենք:

# «Հայաստանը հրաժարվում է Ռուսաստանի ...

⇨3

Ըստ հոդվածագրի, Վաշինգտոնը ձգտում է մի կողմից ավելացնել կովկասյան տարածաշրջանում Թուրքիայի ազդեցությունը, մյուս կողմից քայլեր է ձեռնարկում տարածաշրջանում Ռուսաստանի գերիշխանությունը նվազեցնելու ուղղությամբ: Սակայն, հոդվածագիրը համոզված է, որ թուրք-ադրբեջանական մերձեցումն էլ որոշակի առումով մտահոգում է ԱՄՆ-ին, քանի որ Վաշինգտոնը Անկարայից ակնկալում է, որպես ՆԱՏՕ-ի անդամ, կանգնել ԱՄՆ-ի կողքին, եւ Ադրբեջանի հետ հարաբերություններում իր սեփական խաղը չխաղալ: Նման վերլուծության համար թուրք հեղինակը հիմնվում է այն կանխավարկածի վրա, որ Վաշինգտոնը մտադիր է ՆԱՏՕ-ին անդամակցող պետություններից ձեւավորել հակառուսական ու հակաիրանական դաշինք, որտեղ Թուրքիային կարեւոր դերակատարություն է հատկացնում:

Սակայն, հեղինակի խոսքերով, Թուրքիան հաշվի առնելով տարածաշրջանի երկրների հետ պատմականորեն ձեւավորված իր հարաբերությունները, ինքնուրույն քայլեր է ձեռնարկում: Թուրք պրոֆեսորը Հայաստանի հետ հարաբերությունների կանոնակարգման ուղղությամբ տարվող աշխատանքները նույնպես Անկարայի ինքնուրույն քայլերի շարքին է դասում:

Թուրք հեղինակն իր հոդվածը եզրափակում է հետեւյալ բանաձեւումով՝

**«Արցախի 44-օրյա պատերազմից հետո, Թուրքիան կարեւոր քայլեր է ձեռնարկել ոչ միայն Ադրբեջանի, այլեւ միջինասիական թյուրքական պետությունների հետ: Իսկ «Զանգեզուրի» միջանցքի գործարկումով այդ հարաբերություններն իրենց գագաթնակետին կհասնեն»:**

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

# Այլընտրանք «Զանգեզուրի միջանցքի՞ն»

**Հաքան Ֆիդանը** սեպտեմբերի 4-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարի պաշտոնում առաջին անգամ այցելեց Իրան, հանդիպեց ԻԻՀ նախագահ **Էբրահիմ Ռայիսիին**, ԱԳ նախարար **Հոսեյն Ամիր-Աբդոլլահիանին** ու Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար **Ալիաքբար Ահմադիանին**: Բոլոր հանդիպումների ժամանակ էլ արձանագրվեց, որ Իրանը չի հանդուրժելու տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխություններն ու գործող տարանցիկ ճանապարհների արգելափակումը: Այլ կերպ ասած՝ Իրանը դեմ է լինելու միջանցքին:

Թեհրանի այդ վճռական դիրքորոշման մասին հայտարարվել է ամենատարբեր մակարդակներով ու առիթներով, եւ հիմա էլ, Թուրքիայի արտգործնախարարի այցի ժամանակ, այդ անբեկանելի տեսակետը հնչում է նույն վճռականությամբ:

«Զանգեզուրի միջանցքի» մասին Իրանի պաշտոնական դիրքորոշումն այնքան հստակ է հնչել, որ Թուրքիայի նախագահ **Էրդողանը** մի առիթով մտահոգված ասել է. «Միջանցքի հարցով խնդիրը Հայաստանի հետ չէ, այլ՝ Իրանի»:



Դրանով հանդերձ, Թեհրանն էլ մտահոգ է, որ Ադրբեջանն ու Թուրքիան «Զանգեզուրի միջանցքի» փոխարեն թուրքական աշխարհը միավորելու այլ նախագծերի մասին էլ կարող են երազել:

Պանիրանիստական ուղղվածությամբ «azarpazhouh.ir» կայքն իր վերջին խմբագրականներից մեկում զգուշացնում է Իրանի ղեկավարությանը՝ «Զանգեզուրի միջանցքի» փոխարեն Իրանի ազգային անվտանգությանն սպառնացող մեկ այլ նախագծի մասին:

Կայքում անդրադարձ կա միջանցքի նկատմամբ Թուրքիայի ու Ադրբեջանի հախուռն ցանկության, միեւնույն ժամանակ՝ թուրանական ծրագիրը մերժելու հարցում իրանական կողմի բացահայտ ու վճռական դիրքորոշման մասին:

Պանիրանիստական կայքի պատկերացմամբ, Թուրքիան ու Ադրբեջանը փայփայում են ցանկալի միջանցքի երթուղին փոխելու եւ այն Իրանի սահմաններից հեռացնելու գաղափարը՝ ցանկանալով միջանցքը տեղափոխել Հայաստանի հյուսիսային շրջան՝ հայ-վրացական սահմանին հարակից տարածք:

Նման ենթադրությունների համար կայքը հիմք է ընդունում հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցող վերջին բախումներն ու փոխադարձաբար հնչող մեղադրանքները, ինչը կայքին առիթ է տալիս չբացառել մոտ ապագայում Հայաստանի հյուսիսային շրջանում Թուրքիայի ու Ադրբեջանի համատեղ ռազմական գործողությունները: Պանիրանիստական կայքի կարծիքով, քանի որ Ռուսաստանը, Ուկրաինայից բացի, ներգրավված է նաեւ աֆրիկյան գործընթացների մեջ, ենթադրյալ ռազմական գործողությունների հավանականությունը շատ բարձր է: Սակայն, «azarpazhouh.ir»-ի կանխատեսումներով, Ռուսաստանն էլ այդ նոր նախագծի դեմ պատրաստվում է համարժեք քայլեր ձեռնարկել:

Ըստ կայքի, Ռուսաստանն Արցախում տեղակայված խաղաղապահ ուժերի հրամանատարական կազմում լուրջ փոփոխություններ է կատարում: Արցախի ռազմաքաղաքական կարեւորագույն հենակետերում նախատեսված փոփոխություններից ելնելով էլ «azarpazhouh.ir»-ը ենթադրում է, որ Մոսկվան պատրաստվում է վերանայել իր քաղաքականությունը Բաքվի նկատմամբ:

Կայքը հավելում է, որ մինչ այս պահը, Մոսկվան մի շարք հանգամանքներից ելնելով՝ ՀՀ վարչապետի արեւմտամետ քաղաքականությունից դժգոհելու, Արեւմուտքին ու Թուրքիային իր դեմ չհրահրելու եւ հավասարակշռությունը պահպանելու, ինչպես նաև Իրանի ու Թուրքիայի ներթափանցումը կանխելու համար, հանդուրժողաբար էր մոտենում Բաքվի վարքագծին: Բացի այդ, աֆրիկյան ճակատում Ռուսաստանի ներգրավվածության պատճառով, Բաքուն ու Անկարան կարող են համոզված լինել, որ Ռուսաստանը նոր բախումների չի գնա:

Բոլոր հանգամանքները հաշվի առնելով, «azarpazhouh.ir»-ը ենթադրում է, որ մեծ հավանականությամբ Ադրբեջանն ու Թուրքիան Հայաստանի հյուսիսային սահմանների մոտ, Վրաստանի հետ հարակից շրջաններում միմյանց ընդառաջ գնալով, կփորձեն միացնել իրենց տարածքները:

Խմբագրականի հեղինակը հույս է հայտնում, որ Ռուսաստանն ու Իրանը նշված նախագիծը վիժեցնելու ուղղությամբ քայլեր կձեռնարկեն:

ՖԵՆ ԴըՊՈՆՍԻԵՐ

# Կանադան խորացնում է ներգրավվածությունը Հայաստանի խնդիրներին եւ միաժամանակ վերացնում Թուրքիա զինամթերքի արտահանման արգելքը

*Օգոստոսի 24-ին Eurasianet.org-ում տեղադրված հոդվածի հեղինակը կանադացի անկախ լրագրող եւ լուսանկարիչ է, որն ապրում է այժմ Երեւանում:*

Կանադան ընդարձակում է իր դիվանագիտական ներկայությունը Կովկասում, մինչ ներքին եւ արտաքին քաղաքականության մարտահրավերները սպիտում են Օտտավային խրվել Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ: Ակնկալվում է, որ Կանադայի արտգործնախարար **Մելանի Ժոլին** սեպտեմբերին ժամանի Երեւան, մասնակցելու իր երկրի դեսպանատան բացման արարողությանը: Կանադան նաեւ պատրաստ է դառնալու առաջին երրորդ պետությունը, որ միանում է Հայաստանում Եվրոմիության առաքելությանը (EUMA), որի վերահսկողության տակ անզեն դիտորդներ մշտադիտարկում են իրավիճակը Ադրբեջանի հետ սահմանի հայաստանյան մասում: Առաքելությունը փորձում է «նպաստել Հայաստանում հակամարտությունից տուժած տարածքներում ապահովելու մարդկանց անվտանգությունը», եւ խթանել բարելավելու հայ-ադրբեջանական հարաբերությունները: Ըստ Eurasianet-ին մոտիկ կանգնած լավատեղյակ աղբյուրների, կանադացի դիտորդները վերցվելու են Կանադայի թագավորական հեծյալ ոստիկանության շարքերից:

Կանադայի շահագրգռվածությունը Հարավային Կովկասի անվտանգության խնդիրներին, թվում է թե առնչվում է Թուրքիայի հետ դիվանագիտական շարունակվող պայքարի հետ: Կանադայի պաշտոնական այրերը Եվրոմիության դիտորդական առաքելությանը միանալու որոշման մասին հայտարարեցին Լիտվայում կայացած ՆԱՏՕ-ի տարեկան գագաթնաժողովից մի քանի օր անց: Ըստ լուրերի, այնտեղ՝ Լիտվայում, Օտտավան դարձյալ արտահայտվել էր կանադական պաշտպանական տեխնոլոգիաների Թուրքիա արտահանման վերաբերյալ բանակցությունների մասին: Կանադան 2021-ին արգելել էր ռազմական տեխնիկայի Թուրքիա արտահանումը, այն «հավաստի ապացույցներից» հետո, որ Թուրքիան Կանադայում պատրաստված այդ զինամթերքը փոխանցել է Ադրբեջանին, որն էլ դրանք արդյունավետ կերպով օգտագործել է Լեռնային Ղարաբաղի 2020 թվի պատերազմի ժամանակ: «Նման գործարքը համատեղելի չէր Կանադայի որդեգրած արտաքին քաղաքականության հետ եւ հակասում էր Թուրքիայի տված երաշխավորություններին», նշում է Կանադայի նախկին արտգործնախարար **Մարկ Գառնոն**:

ՆԱՏՕ-ին անդամակցելու Շվեդիայի հայտը պաշտպանելու փոխարեն, Թուրքիան ՆԱՏՕ-ի իր դաշնակիցներից (ներառյալ Կանադայից) պահանջում էր վերացնել ռազմական տեխնոլոգիաների արտահանման վրա դրված արգելքը: Ըստ «Ռոյթըրզ» գործակալության, թուրք պաշտոնական մի անձնավորություն կարծիք է հայտնել, որ անընդունելի է արտահանման սահմանափակումներ կիրառել դաշնակից պետությունների միջեւ:

Ղարաբաղի 2020 թվի պատերազմի ընթացքում ԱԹՍ-երը էական դերակատարություն ունեցան, որպեսզի Ադրբեջանը վերանվաճի մեծ տարածքներ: Մարտերի ժամանակ հայկական զինուժը խփեց թուրքական մեկ «TB2» տիպի բայրաքտար դրոն, որի բաղկացուցիչ մասերից էր ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** խոսքերով՝ «Կանադայում արտադրված գերարդիական օպտիկական մի սարք»: Բաղկացուցիչ այդ մասը, իրոք, «MX-15D» տիպի թիրախակալող մի սարք է, որն արտադրվում է կանադական «L3 Հարիս Ուեսկամ» (L3 Harris Wescam) պաշտպանական սարքերի գործարանի կողմից: «Դա այդ համակարգի ուղեղն է», Eurasianet-ին տեղեկացրել է Թուրքիայում Կանադայի նախկին զինվորական կցորդ **Քրիս Կիլֆորդը**:

Առանց օդային բավականաչափ պաշտպանության համակարգերի, Հայաստանի զինուժը մեծ կորուստներ կրեց Ադրբեջանի «TB2» տիպի ԱԹՍ-երի հարձակումներից, եւ դրանցում տեղադրված կանադական այդ բաղադրամասն էր, որ ավելացրեց նրանց արդյունավետությունը: «Կարծում եմ սահմանափակումները կվերանան, բայց արտահանման հետ կապված որոշ վերահսկողություններ կպահպանվեն», ավելացրել է Կիլֆորդը:

Կանադան հույս ունի, որ միանալով Հայաստանում ԵՄ-ի սահմանային մշտադիտարկման առաքելությանը՝ կկարողանա խուսընդոտել քաղաքական որեւէ հնարավոր սայթաքում՝ կապված սահմանափակումների վերացման հետ: **Ջասթին Թրուդոյի** կառավարությունը չի ցանկանում բարդություններ առաջացնել ՆԱՏՕ-ում եւ պահպանել արգելափակումները, սակայն մյուս կողմից էլ չի ցանկանում օտարացնել երկրի ներսում փոքրիկ, բայց ազդեցիկ հայ համայնքը ներկայացնող ընտրազանգվածին: «Կառավարությունը կշռադատում է ներքին վնասը, որ կարող է հասցնել արգելքի վերացումը», միտքը շարունակել է Կիլֆորդը, ակնարկելով սփյուռքահայերի հնարավոր ընդվզումին:

Կանադայի հաջորդ դաշնային ընտրությունները նախատեսված են անցկացնել 2025-ին, բայց արդեն Թրուդոյի ազատական կուսակցության վարկանիշը գնալով նվազում է, եւ կառավարությունը իշխանության ղեկը չկորցնելու համար պետք է մեծ ջանքեր գործադրի:

Մելանի Ժոլին եռանդուն գործողություններով փորձում է սիրաշահել սփյուռքահայ ընտրազանգվածին: Օգոստոսի 20-ին նա հանդիպել է Հայ Ազգային կոմիտեի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում վերջիններս որոշ քաղաքական առաջարկներ են ներկայացրել թեթեւացնելու համար ղարաբաղցիների դիմագրաված դժվարությունները: Ժոլին նաեւ խոսք է առել օգոստոսի 18-20-ը Մոնրեալում կայացած սփյուռքահայերի տարեկան փառատոնի օրերին, եւ նշել, որ Կանադան ակտիվ դերակատարություն է ունենալու Ղարաբաղին առնչվող հարցերի կարգավորման գործում: «Կանադայի համար շատ կարեւոր է այդ դերակատարությունը», շեշտել է նա տեսագրված ելույթի մեջ, որը տարածվել է նախկին թվիթեր հարթակի «@301arm» էջով: «Հայերը իրական սպառնալիքի տակ են Արցախում», ասել է նա՝ օգտագործելով «Արցախ» հայկական տարբերակը Լեռնային Ղարաբաղ անվան, որը մեծապես հուզել է Մոնրեալի հայկական համայնքին, բայց վստահաբար վրդովեցրել է ադրբեջանցիներին:

Թեեւ Կիլֆորդը հավատացած է, որ բեռնարգելքը ի վերջո կվերացվի, Կանադան այդուհանդերձ կարող է արգելել Թուրքիային ձեռք բերելու «L3 Harris Wescam» տիպի խցող սարքեր: Բայց նույնիսկ այդ դեպքում պետք է նշել, որ թուրքերի պաշտպանական արդյունաբերությունը արդեն շատ մոտ է ինքնուրույն արտադրելու նման սարքեր: Կանադայի որդեգրած սահմանափակումներից հետո, Թուրքիան սկսեց իր սեփական «GATS» անվանումը ստացած բաղադրամասերը արտադրել իր TB2-ների համար: Դրանք պատրաստվում են «Ասելսան» (Aselsan) պաշտպանական արդյունաբերողի կողմից:

«Տարիների ընթացքում ես քանիցս այցելել եմ Թուրքիայի զինարդյունաբերության գործարաններ: Եթե նրանք իրենց հույսը դրել են «GATS-երի» վրա, ապա ժամանակի ընթացքում այն ավելի կատարելագործվելու է», եզրափակել է Կիլֆորդը, հավելելով. «Հայաստանի խնդիրներին Կանադայի ներգրավվածության գլխավոր պատճառը առավել մեծ ազդեցություն բանեցնելն է հետագա զարգացումների վրա, ներառյալ հարաբերությունների կարգավորումը Հայաստանի եւ իր թուրքալեզու հարեւանների միջեւ»:

Մինչ ԵՄ դիտորդական առաքելությունը որոշ քննադատությունների է ենթարկվել սահմանային հասուկենտ միջադեպերը չկարողանալ կանխելու համար, այնուամենայնիվ այն դեռեւս օգտակար է «լուսանցքային առումով», իր հերթին ասել է վերլուծաբան **Էրիկ Հակոբյանը**: «Պարեկություն կատարողները հավելյալ քաղաքական ներուժ են, որ Ադրբեջանը զերծ մնա Հայաստանի տարածքում ռազմական գործողություններ կատարելուց», հավելել է նա:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ՇՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

ՆԱԻՐ ՅԱՆ

# Փաշինյանը վարչապետ ա, դո՞ւք ով եք. Ալեն Սիմոնյանի պարտված պատասխանը լրագրողին

Լրագրողները դարձել են իշխանությունների աչքի փուշը։

Ընդդիմության՝ հաճախ հայհոյախառը, վիրավորանք պարունակող ելույթներն ու հրապարակումները մնում են անպատասխան, իսկ լրագրողների մի թթու խոսքը, էլ չասենք՝ կծու հարցը իշխանության ներկայացուցիչներին, առավել եւս՝ պարագլխին, գրգռում է նրա նիկոլապաշտներին ու ֆեյքաֆաբրիկային ու դառնում անողոք հարձակման պատճառ։

Օրերս ՔՊ-ի քաղաքապետի թեկնածու **Տիգրան Ավինյանին** սատարելու եկած ԱԺ նախագահ **Ալեն Սիմոնյանը** խոսեց Արցախի ինքնորոշման իրավունքից՝ կրկնելով իր ղեկավարի ասածը. «Երբ ասում ենք ինքնորոշման իրավունք, ումի՞ց եւ որտեղի՞ց պիտի Արցախն ինքնորոշվի։ Երբ խոսում ենք արցախահայության իրավունքների մասին, արդյո՞ք ինքնորոշման իրավունքը նկատի չունենք»։

Լրագրող **Անի Գեւորգյանը** միջամտեց՝ մի՛ մանիպուլյացրեք, դուք խոսում եք անվտանգության մեխանիզմների եւ իրավունքների, ոչ թե ինքնորոշման մասին։

Ալեն Սիմոնյանը հայտարարեց, որ Անի Գեւորգյանին հարցազրույց չի տալիս, հետո ավելի տաքանալով, հեռախոսը գրպանից հանելով՝ չստացված սարկազմով ու իրոնիայով ասաց. «Ժպտացեք, ժպտացեք... եկեք սելֆի անենք... Անի ջան, ես Ձեզ լուրջ չեմ վերաբերվում»։

«Երբ սահմանին այսպիսի իրավիճակ է, որտեղի՞ց ձեզ այսքան բարձր տրամադրություն»,- հարցրեց Անին։

«Ձեզ որտեղի՞ց էսպիսի տրամադրություն, որ այս գեղեցիկ զգեստը հագել, եկել եք ստեղ։ Սեւ զգեստ հագեք ու քայլեք»,- Անիին հեգնեց ԱԺ նախագահը՝ ակնարկելով, թե ինչքան կարելի է վաս բաներից, տխուր թեմաներից, սահմանային լարված իրավիճակից, շրջափակված Արցախից խոսել՝ մոռանալով, որ այդ բոլորն իրենց աղետաբեր իշխանավարման հետեւանքն է։

«Դուք Արցախի նշաձողն իջեցրել եք»,- արձանագրեց Անին։

«Դուք ձեր նշաձողն եք իջեցրել, լրագրողների նշաձողն եք իջեցրել»,- պատասխանեց Ալեն Սիմոնյանը։

«**Փաշինյանն** է իջեցրել նշաձողը Արցախի հարցում»,- պատասխանեց Անին։

**«Փաշինյանը վարչապետ ա, դո՞ւք ով եք»,- եղավ Ալեն Սիմոնյանի պատասխանը։**



Ալեն Սիմոնյանը բացահայտ արհամարհական վերաբերմունք է ցուցաբերում լրագրող Անի Գեւորգյանի նկատմամբ։ Եվ դրա պատճառը ոչ ցանկալի, ոչ ականջահաճո հարցերն են։ Բանը հասել է դատական գործընթացին։

Իշխանությունները չեն ուզում իրենց գործունեությունը քննադատող, սխալները մատնանշող ու սխալների պատճառների համար պատասխանատվության ենթարկող հարցեր լսել։

Այսօր փաստ է, որ իշխանություններին պատասխանատվության ենթարկող միակ կառույցը լրագրողական հանրույթն է՝ ԶԼՄ-ները։ «Պատասխանատվության ենթարկելն ու պատժելը» միայն խոսքով է, որովհետեւ հանցագործությունների մասին հաղորդումները, բացահայտումները մնում են որպես «օդում կրակոցներ», ոչ մի իրավապահ մարմին դրանց իրավական գնահատական չի տալիս, բայցեւայնպես, դիմակազերծման, իրական կերպարի բացահայտման գործընթաց լրագրողների միջոցով կատարվում է։

Այն, որ լրագրողներն այսօր թիրախավորված են առավել, քան երբեւէ, անհերքելի է։ Նույնիսկ Ալեն Սիմոնյանը չհերքեց՝ Անիի դեպքում ասելով՝ թիրախավորվելը ձեր միակ առավելությունն է։

Լրագրողների թիրախավորման մաղձոտ ու ագրեսիվ գործընթացը նոր շրջափուլ մտավ Նիկոլ Փաշինյանի՝ հունիսի 25-ի ասուլիսից անմիջապես հետո։

Հայաստանի Հանրապետության սահմաններից ներս Փաշինյանին դեռ ոչ ոք այդպես չէր խեղճացրել ու սեփական կերպարն իր արեւով երդվողների, զոհված որդու մխիթարությունը վարչապետի մեջ գտած մայրերի, վարչապետին սրբություն սրբոց ընդունողների ու հատկապես ի՛ր աչքում այդչափ չէր մերկացրել, ինչպես արեցին մի քանի լրագրողներով։

Ոչ ոք չի կարող հիշել մի դեպք, երբ Փաշինյանն իր հասցեին հնչեցրած մեղադրանքներին չպատասխանի՝ մանիպուլյացնելով, պոպուլիզմի լրացուցիչ դոզայով, ձայնի ու ժեստերի պահուստային ֆոնդն «առաջնագիծ» բերելով ու նորից «հաղթող» դուրս գալով։

Այդպիսի դեպք չկա՛։

Բայց հունիսի 25-ին առաջին դեպքը եղավ, այն էլ՝ լրագրողների առաջ, ուղիղ եթերում։

Սա անսպասելի տապալում, պարտություն, ոչնչացում էր առաջին հերթին Փաշինյանի, նրա աջակիցների, թիմակիցների եւ ուղիղ եթերում անզոր ֆեյքաֆաբրիկայի համար։

Ու, անկասկած, նաեւ սոցհարցումներն են ապացուցել, որ Փաշինյանի վարկանիշը դրանից հետո ավելի է ընկել, իհարկե, ֆեյքաֆաբրիկան զուգահեռաբար ավելի ագրեսիվ ու սանձարձակ է դարձել։

Փաշինյանին ոչ միայն հարցերով, այլեւ նրա գործունեությամբ «ամրագրված» անհերքելի, աղետալի փաստերն արձանագրած, իր իսկ բառապաշարով՝ նրան «ասֆալտին փռած ու թաթիկները կտրած» լրագրողների հասցեին սպառնալիքներ հնչեցին՝ էլ կվառենք, էլ կսպանենք, էլ աչքներդ կհանենք, էլ կաստկացնենք. անգամ նրանց երեխաների հետ հաշվեհարդար տեսնելու կոչեր գրվեցին սոցցանցերում։

Հայաստանում իրավիճակն այնքան արագ է զարգանում, ավելի ճիշտ՝ նետվում դեպի անդունդ, որ երեկվա, անգամ երկու ժամ առաջվա եղածն արդեն հնացած իրադարձություն է համարվում, բայց հունիսի 25-ից 2,5 ամիս անց «լրագրողական դասաստանի» մասին դեռ խոսվում ու քննարկվում է։ Փաշինյանին անարգանքի սյանը գամած լրագրողներն ավելի են թիրախավորվել, ու նրանց հանդիպելիս իշխանավորները քիչ է մնում հում-հում ուտեն։

Ընդդիմությունը դեռ հին ձեւերն է կիրառում՝ ամբիոններից հնչեցնելով «դավաճան», «կապիտուլյանտ», «Արցախը ծախեցիք» եւ նմանատիպ այլ՝ հանրությանը վաղուց հոգնեցրած արտահայտություններ, որոնք ավելի են խորացնում «նախկինների» փորած վիհը հատկապես իշխանության աջակիցների շրջանում։ Իսկ լրագրողները ձեւը գտել են՝ ասելիքը մեխում են ուղիղ ճակատին՝ հաճախ կիրառելով հենց իշխանության կիրառած մեթոդը՝ իրոնիան, սարկազմը, հռետորական հնարքները, տակտիկական հարձակումը՝ բոլոր կողմերից, նաեւ.... մանիպուլյացիան։

Платить той же монетой. կասեր ռուսը։

**Այնպես որ, «Փաշինյանը վարչապետ ա, դո՞ւք ով եք»-ը լրագրողին պարտված լինելու անզորության ճիչ է։**

Հոգեբանական վերլուծության տեսանկյունից Ալեն Սիմոնյանի արարքն իր շեֆին լրագրող Անի Գեւորգյանից պաշտպանելու ուշացած ճիգեր են, իսկ ինքն իրեն պաշտպանել, անշուշտ, այս անգամ էլ չկարողացավ. տեսանյութը վկա։

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Ո՞վ պիտի պաշտպանի Արցախի ինքնորոշման իրավունքը

Վերջին մի քանի օրերին ռուսաստանյան պաշտոնական ու փորձագիտական շրջանակներում առնվազն լուրջ դժգոհությունների ալիք է բարձրացել՝ կապված ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** որոշ հայտարարությունների եւ Հայաստանյան այնպիսի իրադարձությունների հետ, որոնց Մոսկվան ավանդաբար նյարդայնորեն է արձագանքում։

Խոսքը վերաբերում է ե՛ւ Բերձորի միջանցքի իրավիճակի հետ կապված ՌԴ խաղաղապահների հասցեին հնչած քննադատությանը, ե՛ւ իտալական պարբերականին օրերս Փաշինյանի հարցազրույցում Մոսկվայի որպես դաշնակցի պահվածքից դժգոհությանը կամ Ռուսաստանի արտգործնախարարության ներկայացուցչի հերթական մեղադրանքին մեր ԱԳՆ խոսնակի պատասխանին, ե՛ւ Հռոմի ստատուտին միանալու հարցի մեր խորհրդարանի օրակարգ մտնելուն, ե՛ւ խաղաղապահ առաքելության գծով Հայաստանում օրեր հետո կայանալիք հայ-ամերիկյան համատեղ զորավարժությանը։

Այս խնդիրներին ակտիվորեն անդրադարձող մոսկովյան «Եվրասիա դեյլի» լրատվական գործակալությունը սեպտեմբերի 3-ին հրապարակած իր մի հոդվածը վերնագրել է այսպես. «Փաշինյանը Ղարաբաղի իրավունքի մասին Բաքվի հետ չի վիճում, բայց պնդում է, որ Մոսկվան վիճի»։ Սա այն իրավիճակի մասին է, երբ ռուսական կողմը, ի դեմս իր ԱԳՆ-ի, ՀՀ վարչապետին է մեղադրում Արցախն Ադրբեջանի մաս ճանաչելու եւ դրանով իրավիճակ փոխելու հարցում, իսկ հայկական կողմը դա հայտարարում է Ռուսաստանի կողմից պատճառաբանություն՝ Բերձորի (Լաչինի) միջանցքի հարցում ստանձնած պարտավորությունը չկատարելու համար։ Բերվում է ըստ երեւույթին ԱԺ նախագահ **Ալեն Սիմոնյանի** արտահայտած այն միտքը, թե բոլորն են ճանաչում Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ ՌԴ նախագահ **Պուտինն** էլ է 2020 թ. նոյեմբերի 17-ի իր հարցազրույցում ասել, որ Ղարաբաղն Ադրբեջանի մաս է։



Մինչդեռ, այս վերջինի մասին ասվում է հոդվածում, Ռուսաստանի առաջնորդն այդ արտահայտությունն անելիս ընդգծել է՝ «միջազգային իրավունքի տեսակետից»։ Հոդվածագրի մեկնաբանությամբ, այդ հիշատակումն անտեղի չէ, միջազգային իրավունքը կոչ է անում հարգել տարածքային ամբողջականության, այդ թվում եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքը, բայց միջազգային իրավունքի մեկ այլ սկզբունքը՝ սեւով սպիտակի վրա ամրագրված ՄԱԿ-ի կանոնադրությունում, ասում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին, որպես միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքի։ Եվ այս երկուսի համակցության մշակման համատեքստում են տեղի ունեցել ղարաբաղյան առաջին պատերազմից հետո բանակցությունները, Մոսկվայի կողմից նույն մոտեցումն է եղել նաեւ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության տեքստը կազմելիս։ Եվ հենց դրա մասին է խոսել Պուտինը Վալդայի ֆորումում՝ Ալեքսանդր Իսկանդարյանի հարցին ի պատասխան նշելով, որ Արցախի կարգավիճակի հարցում Մոսկվան կաջակցի Երեւանի դիրքորոշմանը։

Նման պնդումների հետ կապված մանրամասներում, իհարկե, կարելի է վիճել, բայց դա առանձին խոսակցության նյութ է։ Հիշյալ հոդվածում, սակայն, կա առնվազն մի հարցադրում, որը գուցե ավելորդ չի լինի հիշել առաջիկայում, եթե փորձելու լինենք այնուամենայնիվ ինչ-որ բան փոխել։

Փաշինյանը, ինչպես նշում է հոդվածի հեղինակը, Պրահայից հետո խոսում է Արցախն Ադրբեջանի մաս ճանաչելու, բայց ոչ մի բառ չի ասում Արցախի ինքնորոշման իրավունքի մասին։ Բոլորովին այլ պատկեր կլիներ, եթե նա Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու հետ մեկտեղ դա էլ ասեր։ **Ալիեւն**, իհարկե, չէր համաձայնի։ Բայց այդ դեպքում Փաշինյանը կարող էր իր կողմից ասել. «Այո, մենք ճանաչում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, բայց Երեւանը միաժամանակ ընդգծում է Արցախի ինքնորոշման իրավունքը եւ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ կնպաստի ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան այդ իրավունքի իրացմանը։ Օրինական իրավունք, որն Արցախի (հոդվածում հենց այս անունն էլ տրվում է) հարցում ոչ մեկ անգամ արտացոլվել է միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարություններում։

Եվ, ըստ հրապարակման, ստացվում է, որ Երեւանն ինքը Արցախի հարցում Բաքվի հետ ոչ մի վեճ չունի, ամբողջովին հրաժարվում է Արցախից, բայց պնդում է, որ Բաքվի հետ վեճը շարունակի Մոսկվան։

Այդպես ճի՞շտ է, թե՞ ոչ. երեւի այս էլ է խնդիրը։

Ազգ ՀԱՎԵԼՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 32(5767)
8-14
ՍԵՊՏԵՄԲԵՐ
2023

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Գծերի եւ գույների ներդաշնակման արվեստը

Ստեղծագործական անհատականությունը ենթադրում է արվեստի ու աշխարհի հանդեպ ինքնատիպ հայացքներ, մոտեցումներ ու լուծումներ, որոնց միջոցով արվեստագետը ձգտում է վերափոխել ոչ միայն իր, այլեւ դիտողների աշխարհընկալումը եւ ի վերջո՝ շրջապատող միջավայրը: Ծնված լինելով ՀՀ ժողովրդական նկարիչ **Վալմարի (Վլադիմիր Մարգարյան)** ու մանկաբույժ, արվեստի մեծ սիրահար **Եվգինե Մինասյանի** ընտանիքում՝ նկարիչ, ձեւավորող **Հռիփսիմե Մարգարյանը** սեփական ձեռագիրն ու մաներան ունեցող արվեստագետ է, որի աշխատանքները յուրօրինակ են, հեշտ ճանաչելի: Դրանց հատուկ է պատկերվող տարրերի փոխպայմանավորվածությունը, տարածության եւ ռիթմի զգացողությունը, գաղափարի, զգացմունքների եւ ձեւի համոզիչ համադրությունը, ընդգծված հույզը, ջերմությունը եւ շարժումը, որոնք դիտողի մոտ առաջացնում են ասոցիատիվ շարքեր:

Անդրադառնալով Հռիփսիմե Մարգարյանի աշխատանքներում գույների բարձրաճաշակ ընտրությանը՝ գեղագետ, արվեստաբան **Լեւոն Լաճիկյանը** նշել է. *«Նրա ստեղծագործության գլխավոր հայտանիշը ճաշակն է, որ ճառագում է նրա՝ անխտիր բոլոր գործերից: Այնքա՜ն ներդաշնակություն կա դրանց մեջ, այնքա՜ն սեր ու խաղաղություն»:* Հաճախ օգտագործելով մեղմ գույներ՝ նկարչուհին նախապատվությունը տալիս է դրանց նուրբ զուգադրությանը:

Նկարչուհու աշխատանքները հիմնականում չափերով մեծ չեն, նախատեսված են մոտիկից, առանձնակի ուշադիր զննության համար, քանի որ հեղինակն էլ կարեւորում է մանրամասները եւ հատկապես՝ ուրվագծերը, դրանք ներկայացնում մանրանկարի ճշգրտությամբ: Բնույթով ինտուիտիվ (ներըմբռնողական) են Մարգարյանի աշխատանքները, որոնցում նրա համար գծերը միտքն են, իսկ գույները՝ զգացմունքները: Կերպարվեստի գործեր լինելուց բացի՝ դրանք աղերսներ ունեն ե՛ւ պոեզիայի, ե՛ւ երաժշտության հետ: Իզուր չէ, որ նկարչուհին ուսանել է երաժշտություն ու բանաստեղծություններ է գրում: Պոետիկ է նրա նկարչությունը ու գունազարդ՝ պոեզիան.



Ստրասբուրգյան ցուցահանդեսի բացմանը

*Դեղինի շուրթից պոկված մի ժպիս,*
*Տերեւի փոշուց համեմված համբույր,*
*Արեւի լույսից ջերմացած թռիչք,*
*Թռվիչ աշունի մի մեծ սեր մաքուր...*

Ֆրանսահայ նկարիչ **Ռիշար Ժերանյանի** խոսքերով՝ *«Հռիփսիմեի արվեստը գունագեղ արտացոլումներ են մարդկային հոգու երազների ու քնքշանքի: Վառ երեւակայությունը, գույնի յուրահատուկ զգացումը միահյուսված են երկրաչափական ձեւերի հետ: Երիտասարդ նկարչուհին ստեղծում է էքսպրեսիվ արվեստ, որը լի է ռոմանտիզմով եւ լավատեսությամբ»:*

Տարբեր տարիներին արված աշխատանքները դիտելիս դրանցում նկատվում է տրամաբանական որոշակի զարգացում. եթե նախորդ շրջանում նկարներն ընդգծված էքսպրեսիոնիստական են՝ շեշտված պայմանականությամբ ու գունային լուծումներով հագեցած, ապա ներկայումս գերիշխում են համեմատաբար ավելի հստակ վրձնահարվածները, լուսավոր խորքը, ռեալիստական ակնարկները: Եվ բոլոր դեպքերում գերակա են մնում արվեստի ժամանակակից ընկալումները:




Ալան Հովհաննեսի սկավառակի շապիկը

Միշտ փնտրելով գեղեցիկը՝ Հռիփսիմե Մարգարյանը ձգտում է գույնի ու գծերի ներդաշնակության, երանգային նրբին տրամադրությունների: Եթե արվեստագետը ազատ է ստեղծագործելիս, այդ ազատության արտահայտությունը կարելի է գտնել նրա ավարտուն աշխատանքում, այն հաղորդվում է դիտողին: Հռիփսիմե Մարգարյանի նկարչության հիմքում էլ ոգեղեն սլացքը, տրամադրությունները, զգացողությունները, հիշողություններն են:

Նկարչուհին կիրառում է տարբեր տեխնիկաներ, բայց նախընտրում է ջրաներկը եւ ակրիլը:

Անշուշտ, արվեստը միշտ ներկա է եղել նրա կյանքում: Գերազանցությամբ ավարտել է Երեւանի գեղարվեստի ակադեմիան. սեփական խոստովանությամբ՝ իր միջի գրաֆիկը եւ դիզայները միշտ իրար լրացրել են: 1998 թվականից Դիզայներների միջազգային միության, 1999-ից՝ Հայաստանի նկարիչների միության անդամ է, իսկ 2000 թվականից՝ Նկարիչների միջազգային միության (ՅՈՒՆԵՍԿՕ) անդամ: 2001 թվականին



«Իմ աշխարհը» շարքից

«Մեկական աշխատանքի հանրապետական ցուցահանդեսում» լավագույն աշխատանքի համար նկարչուհին արժանացել է Հայաստանի նկարիչների միության պատվոգրի: Տասնյակ ցուցահանդեսներ է ունեցել տարբեր երկրներում (Հայաստան, ԱՄՆ, Ռումինիա, Բելգիա, Ֆրանսիա, Բահրեյն, Գերմանիա, ԱՄԷ, Կանադա եւ այլն), որոնցից կուզեինք առանձնացնել 2018 թ. Եվրոպայի խորհրդի կենտրոնակայանում (Ստրասբուրգ) «Կանայք արվեստում՝ հանուն խաղաղության» ցուցահանդեսը, որը հետագայում ներկայացվել է նաեւ Բահրեյնում, Բրյուսելում եւ Բուխարեստում: Հռիփսիմե Մարգարյանը հանդիսանում է «Վալմար» արվեստի սրահի տնօրենը, որտեղ արվեստասերների դատին են ներկայացված նրա եւ բազմավաստակ հոր աշխատանքները: Նկարչուհու ստեղծագործությունները պահվում են տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում: 2015 թվականից Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գծանկարի, գունանկարի եւ քանդակի ամբիոնի դասախոս է:

2008-2009 թթ. Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում իրականացված ինտերիերի դիզայնի աշխատանքները, ինչպես եւ դիզայներական պատի վիտրաժ-ժամացույցները, սպասկու վրա արված նկարները միշտ կրում են հեղինակային ձեռագիրը ու լի են կենսահաստատուն էմոցիաներով: Հռիփսիմե Մարգարյանը կատարել է նաեւ հրատարակչական ձեւավորումներ. մասնավորապես՝ **Ալան Հովհաննեսի**՝ 2014 թվականին լույս տեսած Piano Works սկավառակը ձեւավորվել է նկարչուհու աշխատանքներով:

Գերված լինելով բնության տարերքներով՝ Հռիփսիմե Մարգարյանը նախընտրում է պատկերել դրանց ներքին արտահայտությունները, որոնց միջոցով էլ կարելի է փորձել կռահել պատկերվողի արտաքին կերպը: Նա ասես գեղարվեստական ուսումնասիրության է ենթարկում ձեւը, ֆակտուրան, ծավալը, գուներանգները՝ դրանք ամփոփելով թղթե, կտավե կամ պակսյա հիմնանյութերի վրա: Իսկ ի՞նչ է արվեստը, եթե ոչ ձերբազատում կյանքի պայմանականություններից եւ սեփական, նախընտրելի, թո՛ղ որ երազային աշխարհի արարում...



Մարզահամերգային համալիրի ինտերիերի ձեւավորումից



«Վառ տպավորություն» (2022)

ԱՐԾՎԻ ԲԱԽՇԻՆՅԱՆ

# Սերգեյ Կոսեմյան. Թավջութակով՝ համերգային բեմում եւ բնության գրկում

*ԵՐԵՎԱՆ-ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ - Հայտնի թավջութակահար* ***Սերգեյ Կոսեմյանը*** *ծնվել է Երեւանում, Հայաստանի վաստակավոր արտիստ, անվանի ալտահար, Կոմիտասի անվան պետական լարային քառյակի անդամ* ***Ալեքսանդր Կոսեմյանի*** *եւ ջութակահար* ***Կարինե Ռոստոմբեկյանի*** *ընտանիքում: Սովորելով Երեւանում, ապա Փարիզում՝ Սերգեյն արժանացել է մրցանակների եւ կոչումների միջազգային հեղինակավոր մրցույթներում: Նրա երկացանկում ընդգրկված են արեւմտաեվրոպական, հայ եւ ռուս դասականների, ինչպես նաեւ ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ: 2014-ին Տորեոնում (Մեքսիկա) հիմնել է «Արթ տրիոն», 2017-ին՝ «Կոսեմյան անսամբլը» Սալտիլյոյում (Մեքսիկա), իսկ 2023-ին՝ դաշնամուրային դուետ եւ դաշնամուրային տրիո՝ մրցանակակիր երաժիշտներ, «Գրեմմի» ձայնագրման ակադեմիայի անդամներ* ***Միքայել Հայրապետյանի*** *եւ* ***Ֆիլիպ Վայմանի*** *հետ: Վարպետության դասեր է վերցրել համաշխարհային մակարդակի այնպիսի երաժիշտներից, ինչպիսիք են* ***Մստիսլավ Ռոստրոպովիչը, Տիբոր Վարգան, Ֆիլիպ Մյուլլերը*** *եւ ուրիշներ:*

**-Սերգե՛յ, դու առաջին թավջութակահարն ես, որ ձայնագրել է Բախի սյուիտները Ամերիկայի բնության տարբեր անկյուններում՝ Գրանդ Քենյոնից (Արիզոնա) մինչեւ Սեքվոյա ազգային պարկ (Կալիֆորնիա): Ենթադրում եմ, որ դա թե՛ հաճելի, թե՛ դժվարին փորձառություն էր:**

-Այո՛, իսկապես, ինձ համար սա շատ յուրահատուկ երաժշտական նախագիծ է: Տեսե՛ք, երաժշտության եւ բնության մեջ կա մի ընդհանուր բան՝ ներդաշնակ հարաբերություն: Գեղեցկություն, որը հասանելի է բոլորին: Աշխատելով այս նախագծի վրա՝ ես ուզում եմ ամեն անգամ մի նոր բան բացահայտել ձեւերի, հնչյունների, գույների այս միաձուլման մեջ եւ տալ մարդկանց: Ինձ թվում է, որ այս նախագիծը կարող է խրախուսել մարդկանց հաճախել դասական երաժշտության համերգների եւ ընդհանրապես զբաղվել արվեստով:

**-Արդեն քառորդ դար երաժիշտներն ահազանգում են այն մասին, որ թավջութակի պահանջարկը շատ ցածր է ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում: Ճի՞շտ է:**



-Ցավոք, ճիշտ է: Այս միտումը շարունակվում է մինչ օրս: Ի լրումն ձեր նշած պահանջարկի, կա մասնագետների պակաս, որոնք կարող են նոր սերնդին փոխանցել նախկին վարպետների մասնագիտական ավանդույթները: Թավջութակը չափազանց թանկ գործիք է: Անցյալի մեծ թավջութակահարներից շատերը նվագել են տարբեր հիմնադրամների եւ մասնավոր հավաքորդների պատկանող կոլեկցիոն գործիքներ: Պրոֆեսիոնալ մակարդակի հասնելու համար հարկավոր է մի քանի գործոնների համադրություն, նախ՝ բնական տաղանդ, ուսուցիչ, աշխատասիրություն եւ գործիք, որը կօգնի լիովին բացահայտել ձայնային երանգների ողջ գունապնակը:



*Ֆիլիպ Վայնման, Միքայել Հայրապետյան, Սերգեյ Կոսեմյան («Զիպպեր» համերգասրահ, Լոս Անջելես):*

**-Ձեր ուսուցիչներից ո՞ւմ կցանկանայիք նշել:**

-Այնպես ստացվեց, որ սովորեցի տարբեր երկրների մասնագետների հետ: Ընդունելով նրանց փորձն ու տեխնիկան՝ ես հիշում եմ մի հրաշալի ուսուցչի եւ, առաջին հերթին, լավ մարդու՝ **Ալեքսանդր Չաուշյան** ավագին, որի ղեկավարությամբ սկսեցի ուսումնասիրել Բախի սյուիտները, որոնք այժմ կատարում եմ այս նախագծում: Ալեքսանդր Չաուշյանը մանկավարժական մեծ շնորհ ուներ՝ հետաքրքրություն արթնացնել եւ սիրահարվել տալ երաժշտությանն ու գործիքին: Ես որպես ուսանող միշտ մեծ ոգեւորությամբ եմ հաճախել նրա դասերին: Այնուհետեւ, շատ կարճ ժամանակահատվածում ես կարողացա շատ բան սովորել Մստիսլավ Ռոստրոպովիչից, որը պատասխանեց իմ մասնագիտական բոլոր հարցերին եւ հաղորդեց թավջութակի կատարման տեխնիկական եւ երաժշտական ասպեկտների գաղտնիքները: Ինձ բախտ է վիճակվել ճանաչել եւ մոտիկից շփվել այնպիսի ականավոր արվեստագետների հետ, ինչպիսիք են **Գերոնտի Թալալյանը, Ռոբերտ Ամիրխանյանը, Ստեփան Շաքարյանը, Մեդեա Աբրահամյանը** եւ **Էդուարդ Միրզոյանը**: Էդուարդ Միրզոյանի թավջութակի եւ դաշնամուրի սոնատը, որը նվիրված է Ռոստրոպովիչին, առաջին անգամ ես կատարեցի Փարիզում, որից հետո այս սոնատը դարձավ Պիեռ Լանտիեի անվան թավջութակահարների միջազգային մրցույթի պարտադիր ստեղծագործություն: Հետագայում, երբ Երեւանում էի, այցելելով Էդուարդ Միխայլովիչ Միրզոյանին, նրանից նվեր ստացա այս սոնատի թղթային երաժշտությունը՝ հեղինակային ինքնագրով:

**-Կպատմե՞ք, խնդրեմ, ձեր ամենահիշարժան կատարման մասին եւ ինչպե՞ս ծնվեց դրսում ձայնագրելու գաղափարը:**

-2015 թվականին Հայաստանում առաջին անգամ թավջութակը հնչել է Սանահինի հնագույն տաճարում: Ձայնագրեցի Բախի երաժշտությունը, եւ այնտեղից էլ ծնվեց այս նախագծի գաղափարը: Իսկ ԱՄՆ ժամանելուց հետո սկսեցի իրականացնել այս ծրագիրը: Ինչ վերաբերում է համերգային կատարումներին, ես բազմիցս ելույթներ եմ ունեցել աշխարհի տարբեր բեմերում ու տարբեր նվագախմբերի հետ՝ որպես մենակատար, բայց ամենահիշարժան համերգը կրկին տեղի ունեցավ 2015 թվականին, Երեւանում, ականավոր երաժիշտ, դաշնակահար, երգեհոնահար եւ կոմպոզիտոր **Հովհաննես Մանուկյանի** հետ միասին, որն ինձ է նվիրել իր ստեղծագործություններից: Հայաստանում առաջին անգամ մեկ համերգով կատարեցինք Բեթհովենի՝ թավջութակի եւ դաշնամուրի համար գրված բոլոր հինգ սոնատները: Մոտ երեք ժամ տեւած համերգը թողեց աներեւակայելի տպավորություն, որոնք առաջիկայում կկրկնվեն ԱՄՆ-ում:

**-Ձեր թավջութակի կատարումը լսել ենք Ռուդոլֆ Խառատյանի «Երկու արեւ» բալետում, որը բեմադրվել է 2015 թվականին, Երեւանում եւ այնուհետեւ մի քանի անգամ հեռարձակվել հեղինակավոր «Մեցցո» հեռուստաալիքով: Դա աննախադեպ իրադարձություն էր հայ երաժշտության եւ բեմական պարի պատմության մեջ:**

-Դուք ճիշտ եք: Սա իսկապես պատմական իրադարձություն է հայ արվեստի համար: Ի լրումն հայ կոմպոզիտորների՝ Մաշտոցի, Նարեկացու, Խաչատրյանի, Հովհաննեսի, Բաբաջանյանի, Տերտերյանի եւ Արիյանի անչափ հետաքրքրական ցանկի, որոնց ստեղծագործությունները բալետում օգտագործվեցին՝ ցույց տալով հայ երաժշտության հարուստ պատմությունը, առաջին անգամ այս բեմադրությունը հեռարձակվեց աշխարհի ավելի քան 80 երկրներում, 60 միլիոնանոց լսարանի համար: Այս բալետը 2021 թվականից մինչ օրս պարբերաբար հեռարձակվում է ամբողջ աշխարհում, Վաշինգտոնի բալետի մենակատար Ջոնաթան Ջորդանը պարում է թավջութակի համար գրված առանձին համար, որ հեղինակել էր կանադահայ ականավոր կոմպոզիտոր Աշոտ Արիյանը: Տվյալ համարը ձայնագրել եմ հատուկ այս բալետի բեմադրության համար՝ հռչակավոր բալետմայստեր Ռուդոլֆ Խառատյանի ղեկավարությամբ: Սա մեծ իրադարձություն է ողջ Հայաստանի համար, եւ ես անչափ ուրախ եմ լինել այս մեծ նախագծի մի մասը:

**-Հայ կոմպոզիտորները ձեզ են նվիրել ստեղծագործություններ թավջութակի համար: Դրանք կատարելիս թույլատրո՞ւմ եք մեկնաբանության որոշակի ազատություն՝ հաշվի առնելով այն փաստը, որ դրանք «պատկանում են» ձեզ:**

-Ինձ համար անձնական մեկնաբանությունը միշտ անքակտելիորեն կապված է կոմպոզիտորի մտադրության հետ: Փորձում եմ հավատարիմ մնալ ոսկե միջինին՝ ցուցադրելով կատարողական ստեղծագործականություն, որը համահունչ է կոմպոզիտորների գաղափարներին: Նրանց հետ հաճախ եմ քննարկում իրենց տեսլականը եւ առաջարկում եմ ստեղծագործության իմ մեկնաբանությունը: Մեզ միշտ հաջողվում է փոխըմբռնում գտնել:

**-Եվ ավանդաբար կցանկանայինք իմանալ Հայաստանի եւ հայ երաժշտության հետ կապված ձեր առաջիկա նախագծերի մասին:**

-Նախատեսում եմ 2024 թվականին շրջագայել Մեքսիկայում, որտեղ առաջին անգամ կհնչեն հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները, ինչպես նաեւ նույն ծրագրով հյուրախաղեր կլինեն ԱՄՆ մի շարք քաղաքներով: Այս պահին քննարկվում է նաեւ եվրոպական շրջագայությունը: Բայց սա արդեն կլինի 2025-2026 թվականներին...



# Թեքեյան մշակութային միության Դոկտոր Նուբար Բերբերյան հիմնադրամի ամենամյա մրցանակաբաշխություն

Մտավորական, լրագրող, ակտիվիստ եւ ՌԱԿ բազմաթիվ ամսագրերի շուրջ կեսդարյա խմբագիր դոկտոր Նուբար Բերբերյանի 2023-ի ամենամյա մրցանակաբաշխությանը դիմելու մեկնարկը տրված է:

Նուբար Բերբերյանի մրցանակը տրվում է հայկական ծագում ունեցող ուսանողներին, որոնք մասնագիտանում են միջազգային իրավունքի կամ քաղաքագիտության մեջ:

Մրցանակաբաշխությունը սահմանվել է մտավորականի կտակի համաձայն, իսկ Բերբերյանը կյանքից հեռացել է 2016 թ.նոյեմբերի 23-ին 94 տարեկան հասակում:

***Մրցանակաբաշխությանը մասնակցելու պահանջներն են՝***

1) Կարող են մասնակցել ուսումնական հաստատությունների՝ հայկական ծագում ունեցող ուսանողները, որոնք գլխավորապես մասնագիտացած են կա՛մ միջազգային իրավունքի, կա՛մ քաղաքագիտության մեջ:

2) Դիմորդը պետք է ամբողջական դրույքով ներգրավված լինի ողջ աշխարհի հավատարմագրված քոլեջների կամ համալսարանների բակալավրիատի կամ ասպիրանտուրայի ծրագրերում:

3) Դիմորդը պետք է ներկայացնի ողջ տեղեկատվությունը, որը սահմանված է դիմումի ձեւում:

4) Դիմորդը պետք է ներկայացնի քոլեջի գրագրի պատճենը:

5) Դիմորդը պետք է ներկայացնի դիմանկար:

6) Դիմումը հնարավոր է ստանալ Tcadirector@Aol.com էլեկտրոնային փոստին գրված նամակի միջոցով:

7) Դիմորդները պետք է դիմումները ներկայացնեն էլեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով Tcadirector@Aol.com հասցեով:

8) Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2023 թվականի սեպտեմբերի 30-ն է:

9) Հիմնադրամի ադմինիստրատորները եւ կառավարիչները 2023 թ. Հոկտեմբերին կքվեարկեն որակավորված հաղթողների օգտին՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դիմումատուին ներկայացրած դիմումը:

10) Հաղթողը կամ հաղթողները կստանան իրենց մրցանակները 2023 թ. նոյեմբերին:

11) Հաղթողները իրավասու չեն կրկին դիմել մրցանակի համար:

Ուոթըրթաուն, Մ.Ա.

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Իմ իրական տեղը որոշողը ժամանակն է». Աննա Ազիզյան

## *Ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում կյանքից հեռացավ կոմպոզիտոր Աննա Ազիզյանը*

Կոմպոզիտոր **Աննա Ազիզյանի** ստեղծագործություններին եւ փոխադրումներին ծանոթացա սրանից վեց տարի առաջ, երբ հանդիսականին երեւանյան բեմից մատուցվեցին նրա հոգեւոր տաղերի, ժողովրդական հարազատ ինտոնացիաներով նանիկի, աղոթք-երգերի փոփոխական մետրով, չկրկնվող ռիթմիկ բանաձեւումներով ասերգային ազատ շնչառությամբ մեղեդիները, երաժշտական կառույցներ, որոնք ի հակակշիռ քառյակային երգի կրկնվող ռիթմիկ բանաձեւերին, տանում էին դեպի երաժշտական մտքի շարադրման ազատ, անսպասելի շրջադարձերի, եւ զուգահեռվելով հոգեւոր երաժշտաստեղծողությանը՝ գնում դեպի մեր երաժշտական մտածողության ակունքները:

Աննային 2016 թ.աշնանն առաջին անգամ տեսել էի Աշտարակի Կարմրավոր եկեղեցում՝ կիրակնօրյա պատարագին՝ իր ղեկավարած մանկական երգչական խումբը գավիթ առաջնորդելիս: Հենց այն ժամանակ էլ խոսք գնաց «Տաղարանի» համերգին իր «Մարիամանձոն» երգերը կատարելու մասին: Երգչախմբի եւ ձայնի ու դաշնամուրի համար իր գրած գործերում բազմիցս է դիմել Ս. Աստվածամորը՝ Ս. Հոգուց ավետումն ստանալուց եւ մայրանալուց, խաչելության Գողգոթայով անցնելով եւ սրբանալով մինչեւ հավերժական Լույսին միաձուլվելը:

2017-ին երեւանյան համերգասրահում հնչեցին նման՝ ոգեղենությամբ լեցուն, գեղեցիկ կառույցներով հույզի տարբեր երաժշտական արտահայտություններ, որոնք առանձին-առանձին աղոթքներ են, իսկ միասնաբար՝ առ Երկինք եւ մարդու հոգի ուղղված ուղերձ-խնդիրք-խոկումներ: Երկերի երաժշտական հյուսվածքը պոլիֆոնիկ էր: Յուրաքանչյուր ձայն սկզբնավորվելով հենակետային կենտրոն ձայնից, բաժանվում էր մի քանի ձայների, ծավալվում՝ երբեմն որպես հիմնական մեղեդու ենթաձայնային արձագանք, երբեմն էլ ստեղծում իր ուրույն գիծը՝ ուղղահայացում ստեղծելով հոմոֆոն-հարմոնիկ ուրույն հնչողություն: Յուրաքանչյուր ձայն միաժամանակ եւ՛ հիմնական մեղեդուն ուղեկցող ու լրացնող գույն էր, եւ՛ առանձին վերցրած ուներ ինքնուրույն մեղեդային հիմք, որը փոխանցվում էր մի ձայնից մյուսին՝ ձեւավորելով բարդ ու նուրբ ամբողջական հնչյունային ասեղնագործ հյուսվածք: Մաեստրո **Սեդրակ Երկանյանի** խոսքերով՝ «դա մի նոր եւ ուրույն հնչյունային աշխարհ էր»:

Մեր զրույցների ժամանակ Աննան հիշում էր իր հոր արցունքները, երբ լսել էր իր դստեր առաջին ստեղծագործությունը. դա կամերային նվագախմբի եւ դաշնամուրի համար կոնցերտային նախերգանք էր: Այդ արցունքները հասկացումի, իր անձի ու ստեղծագործության յուրովի ընկալման ու նաեւ ճանապարհի օրհնության նշան էին: Հետո պիտի լինեին բազում այլ արարումներ, այդ թվում՝ հոգեւոր բնույթի, Աննան պիտի կայացներ իր կյանքի համար շրջադարձային որոշումներ, որոնք ոչ բոլորը պիտի հասկանային, պիտի հայրենի Աշտարակում ուսուցչի դերը գերադասեր մայրաքաղաքային կյանքից ու կարիերայից, պիտի ուսուցաներ ապագա երգիչ-երաժիշտների մի քանի սերունդներ, հոգեւոր երաժշտության հունչով պիտի կրթեր մանկանց... Եվ շարունակեր ստեղծագործել: Վերջին տարիներին դասախոսում էր նաեւ Երեւանի պետական կոնսերվատորիայի Խմբավարական եւ սիմֆոնիկ դիրիժորության ամբիոնում՝ վարելով «Վերադաշնակում» դասընթացը:



Կոմիտասի անվան երաժշտանոցում վաղ տարիների փաստաթղթերում մինչ օրս պահպանվում է Աննա Ազիզյան ապագա կոմպոզիտորի ընդունելության մասնագիտական քննությանը ներկայացրած գործերի ցանկը՝ Տրիո, «Մանիներ» դաշնամուրի համար, «Մտորում» ֆուգետա, «Ռեքվիեմ սիրո» երգ-ռոմանս, «Ճանապարհի երգ», «Առավոտ լուսո» երգչախմբի համար ստեղծագործությունները: Գերադասությունը տալիս էր երգչախմբային ստեղծագործություններին:

Տարիներ առաջ մեր զրույցին Աննան իր ստեղծագործության մասին որոշ «փակագծեր» է բացել. *«1985-ից սկսած ներքին լռության անբացատրելի մղումով եմ արարել, որ տասնամյակներ չմարեց, թեեւ 90-ականներից սկսած մինչեւ 2000-ականները գործերիս կատարումն անհնարին էր: Ինձ համար նշանակալից են գրեթե բոլոր գործերս, որովհետեւ դրանցից յուրաքանչյուրն ինձ փոխադրում է մի նոր չափում: Ինձ համար չկան աննշանակալից մարդիկ, չկան աննշանակալից օրեր, ժամեր: Չկա նաեւ աննշանակալից ստեղծագործություն: Յուրաքանչյուր երկ նախորդի ստեղծագործական փուլն ավարտող, ի մի բերող եւ նոր փուլի սկիզբ ազդարարող գործ է եղել: Երաժշտական դպրոցն ավարտելիս՝ «Հայոց բերդը» (1980) դաշնամուրի համար, երաժշտական ուսումնարանն ավարտելիս «Մանիները» դաշնամուրի համար (1984), «Երեք տաղը միջնադարյան բանաստեղծների խոսքերով» (1985), «Վարուժանյան շարքը» (1985-86), «Զուգահեռը» (2005-2008) «Հովեր» կամերային երգչախմբի համար, «Պոչատ Աղվեսը...» կանտատ-մյուզիքլը մանուկների ու պատանիների համար, «Համբենասարը», «Տաղարանի» համար վերահիմնավորված եւ նորովի խմբագրված «Մարիամանձոնը»... Ամենն իմ անցած ճանապարհի որոշակի փուլում Լույսի բռնկումներ են եղել, որոնք ինձ տեղափոխել են մի չափումից մյուսը»:*

Երբ Աննան ընդունվեց երաժշտական դպրոց՝ դաշնամուր չուներ: Պարապում էր Կույրերի միավորման աշտարակյան ձեռնարկության ակումբում՝ սեւ, խունացած, լարից ընկած դաշնամուրի վրա, երեկոյան ժամերին էլ, երբ ազատ դասարաններ կային երաժշտական դպրոցում, որի բակի ծաղիկները խնամում էր իր Սաթենիկ տատիկը, որը թեեւ տառերը եւ նոտաները չգիտեր, բայց հզոր ու գեղեցիկ ձայն ուներ եւ լսողությամբ երկու ձեռքով դաշնամուր էր նվագում...

Շուտով Աննայի հայրը, համոզվելով, որ դուստրը լուրջ վերաբերմունք ունի երաժշտության նկատմամբ, կատարեց իր խոստումը՝ նրա համար դաշնամուր գնեց: Շատ շուտով ծնվեց աղջնակի առաջին դաշնամուրային պիեսը, եւ Աննային ներկայացրեցին **Ռոբերտ Ամիրխանյանին**: Սկսվեցին կոմպոզիցիայի առաջին դասերը... Շատ ավելի ուշ՝ Կոմիտասի անվ. կոնսերվատորիայում ուսանեց **Էդվարդ Միրզոյանին**, 1987-ին իր «Վարուժանյան» խմբերգաշարն արժանացավ համամիութենական 3-րդ մրցանակի, դրանից յոթ տարի անց դարձավ Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության անդամ: Կոնսերվատորիան ավարտելուն պես՝ 1990-ից աշխատանքի անցավ իր ծննդավայր Աշտարակի Ա. Այվազյանի անվ. երաժշտական դպրոցում: Միաժամանակ ՀՀ Մշակույթի նախարարության «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամի Արագածոտնի մասնաճյուղի մեթոդիստ-մանկավարժն էր:

*«Յուրաքանչյուր սերունդ եւ ամեն մի մանուկ ունի իր յուրահատկությունը, իր ընկալունակության սահմանը, իր հետաքրքրությունները, բնավորությունը, ի՛ր անհատականությունը, անկրկնելի, առանձնահատուկ աշխարհը,- ասում էր Աննան:- Երբեք նույն թեման նույն կերպ մատուցել հնարավոր չէ: Դասավանդվող առարկայի մատուցման բովանդակությունը, բառերը նույնն են, բայց մատուցման ձեւերը, եղանակները, երեխաների կողմից տվյալ նյութի ընկալման գործընթացն անկրկնելի է: Ավելի հիասքանչ բան չկա, քան փայլող աչքերով մանչուկը, որն սկսում է լսել եւ գիտակցել հնչյունի բարձրությունը եւ հետեւել հնչյունի շարժման տրամաբանությանը»*: Մի առանձին գորովով եւ խնամքով էր վերաբերվում իր հիմնած «Զվարթունք»-ին: Տասնութ տարի առաջ էր՝ Սրբոց Առաքելոց տոնին, որ Թորգոմ վարդապետ Դոնիկյանից հորդոր ստացավ՝ մանկանց հոգեւոր երգեցիկ խումբ ստեղծելու: *«Դա իմ վաղեմի երազանքն էր,- հիշում էր Աննա Ազիզյանը,- ուստի ջերմեռանդությամբ լծվեցի խմբի հավաքագրման գործին: Սկզբում դժվար էր: Երեխաները չէին հասկանում Պատարագի գրաբար տեքստը: Անսովոր եւ դժվար էր նաեւ մինչ այդ անծանոթ հոգեւոր երաժշտությունը, ինտոնացիան ընկալելը եւ յուրացնելը: Հարկավոր էր երեխաների համար թարգմանել եւ նրանց բացատրել ոչ միայն հոգեւոր տեքստերի բովանդակությունը, այլեւ Ս. Պատարագի խորհուրդը: Յուրաքանչյուր երեխայի հետ հարկավոր էր բազմակի երգել յուրաքանչյուր ֆրազը, յուրաքանչյուր նախադասությունը, հարկավոր էր չհուսալքվել... Հիմա արդեն երգչախումբը քանիցս սերնդափոխվել է: Երգչախմբի տղաները լրջորեն մտորում են հոգեւոր կրթության, հոգեւոր կյանքին նվիրվելու մասին: Ոմանք մեծանում, թեւ են առնում, հեռանում, մյուսները գալիս են, հոգեւոր կյանքում առաջին քայլերը կատարում»:*

Աննայի ստեղծագործություններում հատուկ տեղ են գրավում օրորոցայինները: Դրանք եւս յուրահատուկ աղոթքներ են առ Աստված: Նրանցում քնքշանքին միախառն թախծություն կա. «Մի՞թե հայ մայրերի օրորոցայինը հավերժ պիտի կրի թախծության այդ կնիքը, որ գեղեցկորեն ձեւակերպվել է թե՛ հնուց եկած գործերում, թե՛ հիմա՝ ձեր փոքրածավալ երկերում»,- հարցրեցի նրան: *«Այդ թախիծը, այդ տխրությունը մեր գենետիկ հիշողության մեջ է: Մինչեւ սումգայիթյան դեպքերը, տառապելով մեր կորուսյալ հայրենիքի փաստի, մեր հազարամյա գոյապայքարի նահատակների ու ազգային հերոսների համար՝ ես համոզված էի, որ եղեռն ու հոլոքոսթ տեսած աշխարհը այլեւս թույլ չի տա նման հանցագործություններ: Ինձ թվում էր՝ մաքառման գոյապայքարի, հայի տեսակի լինել - չլինելու հարց այլեւս չկա: Մենք կանք, հայի տեսակը հաստատել է իր տեղը երկրագնդի վրա, եւ մենք պիտի աշխատենք մեր մշակութային ժառանգությունը խորապես ճանաչելու եւ կատարելագործելու համար, պիտի ապրենք արարելու, մեր գենի տեսակը կատարելագործելու համար: Չէի էլ պատկերացնում, որ մի օր պիտի հանգեմ այն մտքին, որ հայն իր տեսակը պահպանելու համար դատապարտված է անընդհատ պարտադրված պատերազմի մեջ լինելու: Եվ որ այդ գոյամարտը ոչ միայն չի ավարտվել, այլեւ դեռ երկար կշարունակվի: Եթե կա պատերազմ, գոյամարտ, կան կորուստներ ու ինքնազոհաբերում, ու քանի դեռ մենք գոյապայքարի կրողն ենք, քանի դեռ ամբողջ աշխարհում կան զոհվող երեխաներ, զոհաբերվող մարդկային կյանքեր ու երազներ, կլինեն այդ կորուստների թախիծը կրող օրորոցայիններ»:*

2000-ականներին Աննայի համար սկսվեց **Սոնա Հովհաննիսյանի** հետ համագործակցության ժամանակաշրջանը: «Հովերի» համար գրեց «Մայրական» շարքը, «Զուգահեռ» խմբերգային ներկայացումը: Միահյուսվեցին Ոդիսեւսի, Ալիսի, Գուլիվերի, Կապույտ թռչունի վերաբերյալ մտորումները, Սոնայի հետ իր զրույցները, իր խոստովանությունները, երկուսի քննարկումները: «Զուգահեռ»-ում յուրաքանչյուրն ստեղծեց իրենը, իր երեւակայականը. Աննա Ազիզյանը՝ լիբրետտոյին իր ազատ խմբագրականը եւ երաժշտությունը, Սոնա Հովհաննիսյանը՝ իր մեկնաբանությունը, երգչախումբը՝ իր կատարողական ոգին... Եվ ոնց Աննան էր վկայում, չէին խանգարում մեկը մյուսին, չէին ժխտում մեկմեկու...

«Ի՞նչ սկզբունքներով է առաջնորդվում արվեստի գործեր ստեղծելիս» հարցիս իր պատասխանն էր. *«Աստծուց պարգեւ ստացած խղճի եւ անհաս կատարյալին հավերժորեն ձգտելու ճանապարհին իմ կուտակած փորձի եւ ձեռքբերման վրա հիմնված արժեհամակարգով, որը անընդհատ նորանոր դրսեւորումներ է ունենում: Եվ էլի մի վիճակով, որը անբացատրելիորեն տիրում է ինձ ստեղծագործելիս, եւ ես Աստծու ներկայությունն զգում եմ իմ հոգու ամբողջ մերկությամբ: Ժամանակակից կոմպոզիտորական դպրոցում իմ իրական տեղը որոշողը ժամանակն է...»:*

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

# ՆԱՄԱԿՆԵՐ ԵՐԿՐԻՑ

## Ինչ պատահած գրական փորձանքի մասին

Բէյրութում եղած ժամանակս **Մեսրոպ վարդապետ Հայունին** (Թօփալեան) ինձ նուիրեց իր նոր գիրքը: Հսկայ, ծաւալուն գիրք էր եւ կոչւում էր **«Դանիէլ Վարուժան՝ հոգեկանութեան ծիրէն ներս»**: Գիրքը ձեռքս առի եւ մնացի զարմացած. գիրքը, իր ծաւալին համեմատ, մօտ հազար երկու հարիւր էջ, աւելի ստոյգ՝ 1184 էջ, չափազանց թեթեւ էր, թեթեւ, ինչպէս 118 էջանոց գիրքը: Ըստ երեւոյթին, թուղթը շատ ընտիր էր, բարակ ու թեթեւ: Ես հեղինակին ծանօթ էի «Կամար» ամսագրում իր մի քանի հրապարակումներից, բոլորը՝ Դանիէլ Վարուժանի մասին: Անձամբ էլ ճանաչում էի. առիթ ունեցել էի ծանօթանալու: Հայունին գիրքը ինձ նուիրեց Անթիլիասում վերադարձիս նախօրէին: Նուիրեց, հաւանաբար մտածելով կամ յոյս ունենալով, թէ չեմ կարդալու: Բայց ես գիրքը, իհարկէ, բերեցի հետս եւ, իհարկէ, կարդացի: Ես դեռ Բէյրութում հեղինակին ասացի, որ անպայման կարդալու եմ եւ, եթէ ասելիք ունենամ, մի բան կը գրեմ:

Կարդացի եւ ասելիք ունեցայ:

Ինձ նախ զարմացրեց գրքի խորագիրը՝ «Դանիէլ Վարուժանը՝ հոգեկանութեան ծիրէն ներս»: Երբ նւիրում էր, հեղինակը նախազգուշացրե՞ց, թէ՞ ուղղորդեց ինձ՝ «Գրականութեան մասին չէ, հոգեկանութեան մասին է: Ես իր հոգեկանութիւնը դիտարկած եմ»: Ի՞նչ է հոգեկանութիւնը, ես այդպէս էլ չհասկացայ: Այս «հոգեկանութիւն»ը արդեօ՞ք spiritualisme-ն է: Եթէ «հոգեկանութիւն» ասելով հասկանում ենք մարդու ներաշխարհը, ապա իսկական գրողը կարո՞ղ է լինել, լինո՞ւմ է հոգեկանութիւնից դուրս կամ ներս: Կարծում եմ՝ այդպէս դատելը, մեղմ, շատ մեղմ ասած, եթէ ուրիշ բառ չգործածեմ, առնուազն ճիշդ չէ:

Գիրքը բացեցի, սկսեցի կարդալ, եւ ամէն ինչ հասկանալի դարձաւ:

Գիրքը բացեցի,- մենք սովոր չենք նման գրքերի,- եւ տեսայ կաթողիկէ հոգեւորականների լուսանկարներ ու կաթողիկէ վարդապետի ընդարձակ ողջոյն: Կարծես դա հայ մեծ բանաստեղծին նուիրուած գիրք չլինէր, այլ՝ կաթողիկէ վարդապետութեան քարոզչութիւն: Եւ իրօք, հսկայածաւալ շարադրանքն իր խորքում, հնարաւոր բոլոր ձեւերով ու արտայայտչամիջոցներով, կաթողիկէութեան քարոզ է ու քարոզարան: Խե՜ղճ Դանիէլ Վարուժան: Ես մտածեցի՝ միգուցէ մե՞նք էլ, ասենք, Խաչատուր Աբովեանին նուիրուած որեւէ ուսումնասիրութիւնը դարձնենք Հայ առաքելական եկեղեցու քարոզչութիւն: Բայց դա շատ ծիծաղելի կը լինէր եւ զաւեշտական: Բարեբախտաբար Հայաստանում որեւէ մէկի մտքով նման,- բառը բաց եմ թողնում,- բան չի անցել, չի անցնում եւ չի էլ անցնի:

Գիրքը նուիրելիս Մեսրոպ Հայունին, կարծես թէ՝ ի միջի այլոց, բայց նկատելի պարծանքով, ասաց, որ,- եթէ ճիշդ եմ յիշում,- չորս հազար չորս ծանօթագրութիւն ունի: Ճշմարիտն ասած, այդ ծանօթագրութիւնների մեծ մասը կարող էր չլինել, մի զգալի մասն էլ կաթողիկէ վարդապետութեան քօղարկուած քարոզ է:

Ես հազար երկու հարիւր էջը այստեղ չեմ կարող ներկայացնել, բայց մի քանի հանգամանք պէտք է արձանագրեմ:

Առաջինը. նկատելի է, որ աշխատութեան մէջ ներառուած է երեւանեան երեք հատորով ողջ հրատարակութիւնը: Յամենայն դէպս, եթէ ոչ կատարելապէս ամբողջութեամբ, ապա մեծագոյն մասով: Յետոյ էլ ասում է՝ գրականագիտութիւն չէ, հոգեկանութեան մասին է:

Արժէքաւոր եմ համարում Դանիէլ Վարուժանի շուրջ ստեղծուած գրականութեան իր կազմած ցանկը: Եթէ մէկ-երկու աշխատութիւն Հայունին չի տեսել,




ինչպէս օրինակ՝ Խաչատուր Վարդանեանի «Դանիէլ Վարուժանը եւ «գրական հեթանոսութիւնը» (2006) կամ Գրիգոր Պըլտեանի «Հայկական ֆուտուրիզմ»ը, ինքը ազնւօրէն ասում է դա: Իմ գոհունակութիւնը այստեղ վերջանում, աւարտւում է:

Իր այսպէս կոչուած գրականագիտութեանը հնար չկայ անդրադառնալու, դրա համար իր գրքի ծաւալին համեմատ ծաւալ է հարկաւոր:

Բայց ուշագրաւ է, որ Մեսրոպ Հայունին տասնեակ էջերով «մշակում է» **Ֆրիդրիխ Նիցշէին**, իր գրականութիւնն ու իր փիլիսոփայութիւնը եւ ուսուցողական դասեր է տալիս գերմանացուն: Վստահ եմ, որ եթէ Նիցշէն ողջ լինէր, սիրով կը դառնար Հայունիի աշակերտը, եթէ, իհարկէ, Հայունին Նիցշէին արժանացնէր իր աշակերտը լինելու պատւին:

Հայունին չի խնայում նաեւ նշանաւոր բանաստեղծներին ու գրողներին՝ **Լեկոնտ դը Լիլին, Պօլ Վեռլենին, Արթիւր Ռեմբոյին, Մորիս Մետերլինկին, Պօլ Կլոդելին...**

Մեսրոպ Հայունիի գիրքը անսովոր ժանրի գիրք է: Գրութեան այդ տեսակը տարածուած էր Սովետական Հայաստանում: Յօդուած եւ կամ գիրք էին գրում մէկի մասին, բայց շարադրանքը ուղղում էին միւսի դէմ: Այսպէս, **Գուրգէն Մահարին** յօդուած էր գրում **Վահագն Դաւթեանի** «...Բայց ծնուեցի» պոէմի մասին՝ ընդդէմ **Պարոյր Սեւակի** «Անլռելի զանգակատուն» պոէմի: Մի խաւարամած «գրականագէտ», **Ալմաստ Զաքարեան** անունով, երեք հատորով «աշխատութիւն» է գրել **Եղիշէ Չարենցի** մասին. իբրեւ գրականագիտութիւն այն ցնդաբանութիւն է, բարբաջանք եւ բանդագուշանք: Եւ այդ երեք հատորը ուղղուած է **Կոստան Զարեանի** դէմ: Մեսրոպ Հայունին գնում է նոյն ճանապարհով: Իր աշխատութեան երկու հարիւր էջից աւելին ուղղուած է Գրիգոր Պըլտեանի դէմ: Անարգական բառերի պակաս Հայունին չունի՝ «կը ժպրհի», «ոչնչասաց վերլուծութիւններ» եւ այլն, եւ այլն: Ես չգիտէի, որ Դանիէլ Վարուժանի հոգեկանութիւնը ցոյց տալը Գրիգոր Պըլտեանի դէմ իր թղթէ սուրը ճօճելն է:

Դատելով, թէ սովետահայ, այո՜, մարքսիստաբար ու լենինօրէն սովետահայ, ի՞նչ գրականագէտներից է մէջբերումներ անում Մեսրոպ Հայունին, ո՞ւմ եւ ինչե՞ր է մատնացոյց անում, ո՞ւմ վրայ է յենւում, Գրիգոր Պըլտեանը իրեն պէտք է լաւ զգայ, որ դրանց շարքի մէջ չէ: Հայունին այդ շարքի արժանաւոր ու պատուաւոր անդամն է:

Մեսրոպ Հայունիի շարադրանքը արտառոց է նաեւ այլ առումով: Ահա մէկ-երկու նմոյշ իր շողշողուն գրականագիտական շարադրանքից.

*«Դ. Վարուժան մարեմահաւատին խոր համոզումը յստակ է, չի խաղար միտքերով եւ չի ծամածռեր բառերը:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը բուժուի:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը քաղցրանայ:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը վերանորոգուի:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը մաքրափայլի:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը բուրումնաւէտի:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը գեղեցկանայ:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կ՚առուգանայ:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը թարմանայ:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը շտկուի:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը հրակերտուի:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը բիւրապատկուի:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կը ներդաշնակուի:*

*Հրաշքին Աղբիւրէն խմողը կ՚անդորրանայ:*

*Բուժողը Մարիամ Տիրամայրն է:*
*Վերանորոգողը Մարիամ Միջնորդն է:*
*Մաքրողը Մարիամ Շուշանն է:*
*Բուրումնացնողը Մարիամ Վարդն է:*
*Գեղեցկացնողը Մարիամ Կոյսն է:*
*Առուգացնողը Մարիամ Արտաբանն է:*
*Թարմացնողը Մարիամ Սիրաճանաչն է:*
*Շտկողը Մարիամ Մարդամայրն է:*
*Հրակերտողը Մարիամ Լուսամայրն է:*
*Բիւրացնողը Մարիամ Հրաշամայրն է:*
*Ներդաշնակողը Մարիամ Անդորրամայրն է»:*

Կամ թէ՝

*«Ի՜նչ խանդաղատանք:*
*Ի՜նչ գորով:*
*Ի՜նչ հոգատարութիւն:*
*Ի՜նչ սէր:*
*Ի՜նչ փափկանկատում:*
*Ի՜նչ թռիչք:*
*Ի՜նչ փոխաբերութիւն:*
*Ի՜նչ նուիրում:*
*Ի՜նչ որդիականութիւն:*
*Ի՜նչ յարգանք:*
*Ի՜նչ հայկականութիւն:*
*Ի՜նչ խնդրանք:*
*Ի՜նչ բնականութիւն:*
*Ի՜նչ մտածում:*
*Ի՜նչ ուշադրութիւն:*
*Ի՜նչ հարազատութիւն:*
*Ի՜նչ թովչանք:*
*Ի՜նչ անհատականութիւն:*
*Ի՜նչ խորհելակերպ:*
*Ի՜նչ գութ:*
*Ի՜նչ գուրգուրանք:*
*Ի՜նչ սխրանք:*
*Ի՜նչ ինքնամոռացում:*
*Ի՜նչ լոյս:*
*Ի՜նչ պատարագ»:*

Հեղինակային նման զեղումները տասնեակ ու տասնեակ էջերով են:

Ես դեռ չեմ խօսում շատ կոպիտ վրիպումների մասին: Միայն մէկ օրինակ: 510-րդ էջում տպագրուած է մի լուսանկար, որի մակագրութեան մէջ, ի միջի այլոց, մատնանշւում են Դանիէլ Վարուժանը, Յովհաննէս Թումանեանը եւ Վահրամ Փափազեանը: Սո՛ւտ է, կեղծի՛ք: Այդ լուսանկարում ո՛չ Վարուժանը կայ, ո՛չ Թումանեանը եւ ո՛չ Վահրամ Փափազեանը: Այդ լուսանկարը քանիցս տպագրուել է, եւ լուսանկարի անձինք ճշտօրէն անուանուել են:

Ի վերջոյ, ի՞նչ է ասում Մեսրոպ Հայունին իր վիթխարածաւալ շարադրանքով: Եթէ այդ ծաւալից հանենք Վարուժանի երեք հատորը, հանենք այլ հեղինակներից արուած անթիւ-անհամար ծաւալուն մէջբերումները, հանենք իր կրօնական քարոզները, հանենք Նիցշէին, Գրիգոր Պըլտեանին եւ այլոց նպատակասլաց ձեւով այպանող տասնեակ ու տասնեակ էջերը, կը մնայ Մեսրոպ Հայունիի բուն ասելիքը.

Դանիէլ Վարուժանը խորունկ ու խորապէս կաթողիկէ անձնաւորութիւն է, Դանիէլ Վարուժանը խորապէս Յիսուսապաշտ է եւ Մարիամապաշտ է:

Միակ ճշմարիտ կրօնը կաթողիկէ վարդապետութիւնն է, եւ ճիշդ կը լինի, որ ամէն մի ընթերցող, ամէն մի մարդ ընդունի կաթողիկէ հաւատքը:

Նման վերաբերմունքը մեծ բանաստեղծին՝ պարզապէս վանող է, եւ ես, անկեղծ ասած, բարոյական ցաւ զգացի... Ես հիմա հասկացայ, թէ հսկայածաւալ գիրքը ինչո՞ւ էր այդքան թեթեւ: Որովհետեւ բովանդակութիւնն էր թեթեւ. գիրքը գրեթէ սնամէջ էր:

## Հայաստանի օր Իսրայելում

Ըստ «Հայաստանի օր Իսրայելում» ֆեյսբուքյան էջի՝ օգոստոսի 29-ին Իսրայելի Պետահ-Տիկվա քաղաքի Հիմնադիրների հրապարակում առաջին անգամ տեղի է ունեցել երեկո՝ ամբողջությամբ նվիրված հայ մշակույթին եւ ժառանգությանը: Միջոցառումը կյանքի է կոչվել քաղաքապետարանի եւ հայ համայնքի միջեւ սերտ եւ արդյունավետ համագործակցության շնորհիվ: Միջոցառմանը, ի թիվս այլոց, մասնակցել են քաղաքապետ **Ռամի Գրինբերգը**, Իսրայելում ՀՀ դեսպան **Արմեն Հակոբյանը** եւ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի ներկայացուցիչները: Ներկա են եղել մոտ 1000 հյուրեր (նաեւ հայեր Յաֆայից, Հայֆայից եւ Երուսաղեմից), շատերն առաջին անգամ են ծանոթացել Հայաստանին: Թեեւ միջոցառումը տոնական էր, սակայն երեկոյի կազմակերպիչները չեն անտեսել արցախահայության պաշարումը, տեղադրվել է այդ հարցին նվիրված վահանակ՝ մանրամասն բացատրությամբ եւ նշաններով, իսկ բեմում Հայաստանի դրոշի հետ մեկտեղ կախված է եղել նաեւ Արցախի դրոշը: Երուսաղեմահայ **Միհրան Տեր-Մաթոսյանն** իր ելույթում անդրադարձել է ադրբեջանական իշխանությունների կողմից էթնիկական նոր զտումների փորձին. հարցը լուսաբանել է նաեւ խոսնակ **Մարինա Կոզլիները** (ծնունդով երեւանցի): Ելույթներով հանդես են եկել երգիչ եւ դերասան **Աշոտ Գասպարյանը**, դուդուկահար **Իլյա Մազիան**, իսրայելական բալետի առաջատար մենակատար **Լյուդվիգ Իսպիրյանը, Էմիլ Խաչատրյանի** եռյակը, ջազ երաժիշտ **Արման Ասլանյանը,** դաշնակահար **Գեւորգ Բադալյանը**, երգչուհիներ **Լաուրա Վարդանյանը, Սոսե Ալեքսա Գրիգորյանը, Աբիգայլ Էֆերգանը,** որը կատարել է հայերեն երգ: Գեղարվեստական մասից զատ, հրապարակի տարբեր անկյուններում ներկայացվել են հայկական խեցեգործությունը, տարազները, գրականությունը:




Ադրբեջանին զինող Իսրայելում նման միջոցառումների անցկացումը, անշուշտ, շատ հուսադրիչ չէ, սակայն նաեւ պետք է անտեսել...

Ա. Բ.

ՀՐԱՅՐ ԿԱՄԵՆԴԱՏՅԱՆ

# Սուբվենցիոն փոշի եւ մսխվող բյուջե

***Հայաստանի գյուղերում պտտվող, Լենին տեսած պառավների հետ համբույրներ փոխանակող ազգակործան պաշտոնավոր պաստիասը գյուղացիներին տեսնելիս միանգամից հարցնում է սուբվենցիաների մասին, մանրամասն խոսում ջրագծի, կոյուղու խողովակների, դպրոցի տանիքի եւ այլ թեմաների մասին:***

***Այդ սուբվենցիոն ցավը ներկա ապիկարների համար դարձել է յուրահատուկ տնտեսական խոց, չարիք. դրա ծավալների աճը եւ գործընթացի մեջ փոշիացվող ռեսուրսների մեծությունը ստիպում են մեզ հետազոտել ներհայաստանյան այդ արատավոր երեւույթը:***

***Սուբվենցիոն մսխման ամբողջ շղթան կարելի է բաժանել օղակների՝ տեղական ինքնակառավարման մարմին-սուբվենցիոն հայտ -կառավարություն-բաշխում-շահառու:***



## Հերթով քննարկենք օղակները.

1.Տեղական ինքնակառավարման մարմինները՝հիմնականում գյուղապետերը եւ քաղաքապետերը, տեղի շինարարական կազմակերպությունների հետ հավանաբար ստվերային համաձայնության են գալիս կամ իրենց հետ փոխկապակցված կուսակցական անձանց անունով բացում են տնտեսվարող շինարարական սուբյեկտ՝ ֆինանսական ահռելի հոսքերը իրացնելու նպատակով:

Օրինակների համար պետք է ընդամենը հիշել մի ազգային ջոջի քսանհինգ տարեկան կաթնակեր եղբոր ղեկավարած ասֆալտի բիզնեսը. ընդ որում՝ ասֆալտի գործարանի հիմնարկեքում հարյուր միլիոնավոր դրամների ներդրում էին կատարել ինչ- որ թոշակառու կանայք, որոնք ամեն ամսվա սկզբին սրտատրոփ սպասում են հերթական թոշակի քառասուն հազար դրամին:

**Ո՜չ մի ստվեր, ո՜չ մի կոռուպցիա, ո՜չ մի հովանավորչություն:**

2.Սուբվենցիոն հայտը, որպես կանոն, կազմվում է աչքաչափով՝ իրական ծախսերի 50-70 տոկոս հավելումով. ոչ մի նորմատիվի չհամապատասխանող հայտը գնում է ՀՀ կառավարություն:

Ընդ որում՝ հայտերի ձեւավորումը կատարվում է առանց համայնքի բնակիչների հետ քննարկման, եւ այդ իմաստով մեծ բախտի տեր են դառնում տեղական ՔՊ որեւէ ջոջի հարեւանները:

**Ո՜չ մի ստվեր, ո՜չ մի կոռուպցիա, ո՜չ մի հովանավորչություն**:

3.Կառավարության լիազոր մարմիններում ՏԻՄ կողմից ուղարկված կիսագրագետ կուսակցական հայտերն անվերապահորեն ընդունվում են: Առավել արագ, անխոչընդոտ բավարարվում են կուսակցական մերձավորների հայտերը:

**Ո՜չ մի ստվեր, ո՜չ մի կոռուպցիա, ո՜չ մի հովանավորչություն:**

4.Բաշխումը չի ունենում որեւէ ճյուղային ֆիլտրում կամ չի տեղավորվում միջնաժամկետ ծրագրերի պլանավորման մեջ:

Ուղարկված հայտերը բազմազան են, մեկը մյուսի հետ չկապված, ընդհանուր պլանավորման բացակայության փաստերով լի, եւ որպես կանոն՝ չեն պահանջում որակյալ բանվորական ուժ եւ ինժեներական լուծումներ:

Այս իմաստով լրիվ ձեւական, կոռուպցիոն բնույթ են կրում հայտերի իրականացման նկատմամբ ճարտարապետական, նախագծային կառույցների կողմից իբրեւ թե տրամադրվող վերահսկողական ծառայությունները:

**Ո՜չ մի ստվեր, ո՜չ մի կոռուպցիա, ո՜չ մի հովանավորչություն:**

5.Շահառուները բաժանվում են երկու խմբի `տնտեսական եւ քաղաքական:

Եթե ՏԻՄ ղեկավարներն ունեն հստակ տնտեսական շահ՝ բյուջեն քերելու իմաստով, ապա քաղաքական շահառուներն իշխանություններն են, որոնք փնթի եռուզեռ ստեղծելու նպատակ ունեն, որն էլ մարզերում ու մայրաքաղաքում անկում ապրող իրենց վարկանիշը փրկելու գործարք է՝ իրենց կարծիքով:

Փաստացի՝ իշխանությունները անորակ, չպլանավորված, ռազմավարական տեսակետից անիմաստ ծախսերով համագործակցության եզր են ստեղծում տեղական աղաների եւ ցեցերի հետ, այն հույսով, որ վերջիններս կապահովեն լոյալ վերաբերմունք երկիրը մաս-մաս թշնամիներին հանձնողների նկատմամբ:

Նկարագրված արատավոր շղթայի հիմնական թերությունը սուբվենցիան չէ առհասարակ, այլ դրա կազմակերպման քաոտիկ բնույթը եւ ծախսախնայման, արդյունավետ ծախսման բացակայությունը, որը հիմնականում արդյունք է բոլոր բնագավառներում կուսակցական ակտիվը գործի դնելու հիմար որոշման:

Մասնագետների համար պարզ է, որ ներկայումս սուբվենցիոն իրարանցումը որակյալ, գիտահեն հեռանկար ստեղծող հավելյալ արժեք չի ստեղծում, այն ընդամենը գումարների փոշիացում է, պարզունակ վատնում եւ մսխում:

Ավելի նախընտրելի կլիներ սուբվենցիաների գումարներն ուղղել իրապես տեխնոլոգիական հարցերի լուծմանը, ինովացիոն նախագծերի ֆինանսավորմանը, որոնց արդյունքում նույն համայնքներում կստեղծվեն արտադրություններ, այլ ոչ թե ժամանակավոր ոչ հեռանկարային ծախսագրումներ անելու հնարավորություններ:

Ինչ որ իմաստով Հայաստանը հիշեցնում է 1990-ականների Ուզբեկստանը, որի տնտեսության մեջ հավելագրումներն ահռելի չափերի էին հասել եւ դարձել ապագա աղմկոտ ձերբակալությունների պատճառ:

Ներկա իշխանությունների որդեգրած սուբվենցիոն շղթան տնտեսական իմաստով չարիք է, որը չունի հեռանկար:

**Հատկապես մտահոգիչ է քարոզարշավային Երեւանում սուբվենցիոն խեղկատակությունը:**

Ասեք-անենքական ՔՊ-ական պոռոտախոսությունը դարձել է անկառավարելի հոսք: Երեւանի նրբանցքների երեք-չորս հոգու ձայնը գնելու միտումով կատարվում են աշխատանքներ, որոնք նույնիսկ նախագծային տեսք չունեն, ըստ երեւույթին, դրանց վճարային փաստաթղթերն անգամ գոյություն չունեն, էլ չասեմ՝ ասֆալտ անողներին ինչպե՞ս են վարձատրելու, եթե նախորդ օրվա խոստումից ժամեր անց ինքնաթափով ասֆալտը բերվում է խոստացված տարածք:

Որպես վերջաբան՝ որոշ պարզաբանումներ եւ դիտարկումներ անենք.

1.Սուբվենցիոն ներկա իրարանցումը պետք է դադարեցնել եւ դրանց վրա մսխվող բյուջետային միջոցներն ուղղել բանակի, բացառապես սպառազինության գնմանը, ինժեներական պաշտպանության բնագծերի կահավորմանը:

2.Ընդդիմության կողմից մայրաքաղաքում ավագանի ձեւավորելու պարագայում մանրակրկիտ հետազոտել կատարված սուբվենցիոն ծրագրերը եւ գտնել հանցավոր շղթայի բոլոր դերակատարներին:

Իսկ ի՞նչ է պետք վերոհիշյալ երկու խնդիրների իրագործման համար:

**Պետք է Երեւանի ավագանիում ապահովել նոր կազմ՝ առանց ՔՊ խմբակի եւ դրանց արբանյակների:**

# Փաշինյանն ու Մարությանը հանդիպե՞լ են

## *Կամ ինչո՞ւ է ջղաձգվում Ավինյանը*

Անհնար է չնկատել՝ Երեւանի քաղաքապետ դառնալ ցանկացող **Տիգրան Ավինյանը** լրագրողների՝ իր երբեմնի թիմակից **Հայկ Մարությանի** մասին հարցերից ջղաձգվում է: Բակ առ բակ քարոզարշավ անող, շներին սիրող, բոլորին ժպտացող ու «լավ օր» մաղթող ՔՊ-ականի տրամադրությունը փոխվում է 180 աստիճանով, հունից դուրս է գալիս, երբ նրան Մարությանի ժամանակ կատարված ինչ-որ գործարքի մասին հարց են տալիս: ՔՊ համամասնական ցուցակի առաջին համարի ծանր հոգոցն ու դեմքի ընդգծված խիստ հայացքը վկայում են՝ մութ սենյակում կատուներ կան:

«**Ազգ**»-ի տեղեկություններով՝ նախկին քարոզարշավի մեկնարկը վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** իր մոտ է հրավիրել նախկին «կարգին» քաղաքապետին՝ հասկանալու՝ ընտրություններին ինչ տրամադրվածությամբ է մասնակցելու: Թեեւ Մարությանի թիմակիցն ու լրատվամիջոցների հետ աշխատանքը համակարգող **Հովսեփ Կուբատյանը** մեզ հասած լուրը բամբասանք որակեց, բայց «**Ազգ**»-ի՝ կառավարական կաբինետին խիստ մոտ կանգնած աղբյուրը պնդեց.«Կիշեք, որ փոխվարչապետի պաշտոնին հրաժեշտ տալուց հետո Ավինյանը երկար ժամանակ անգործ էր, աթոռ չուներ: Եվ ոչ միայն ՔՊ-ի ներսում, այլեւ ավելի լայն շրջանակները գիտեին, որ Փաշինյանն Ավինյանի հետ տարաձայնություններ ունի: Ինչեւէ, ամեն բան կարծես հարթվեց, ու քաղաքական իշխանությունը որոշեց Ավինյանին «գործազուրկ» չթողնել՝ նրան նվիրելով քաղաքի կառավարման մանդատը: Փաշինյանը սակայն ինչ-որ փուլում ըստ երեւույթին կասկածներ կամ մտավախություններ ունենալով, թե Ավինյանն, ինչ-որ պահից սկսած կարող է դուրս գալ իր կուրացիայի գոտուց, որոշել է ապահովագրել Երեւանի քաղաքապետի՝ իշխանությունը պահելու համար խիստ կարեւոր պաշտոնն ու ըստ այդմ՝ դիտարկել նաեւ այլընտրանքային թեկնածուի հավանականությունը»:

«Այսինքն՝ ՔՊ-ն, այլ ուժերի հետ հետընտրական կոալիցիա կազմելով, Ավինյանին «վա բանկ» կարող է ուղարկել եւ ուրիշի՞ն ընտրել»,- հարցրեցինք գործադիրամերձ մեր աղբյուրին: Ի պատասխան՝ այսպես արձագանքեց. «Ավելին՝ գործընթացը կարող է «դարձ ի շրջանս յուր» ճանապարհով զարգանալ»:



Փաստ է, որ թե՛ քաղաքապետի պաշտոնից գահընկեց արվելուց, թե՛ քարոզարշավի ժամանակ Հայկ Մարությանը բողոքում, դժգոհում ու քննադատում է իշխանության ցանկացած անդամի, բայց անձամբ Նիկոլ Փաշինյանի հասցեին որեւէ թթու խոսք չի ասում, նույնիսկ հարեւանցի չի անցնում նրա անվան կողքով:

Փաստ է նաեւ, որ Հակակոռուպցիոն կոմիտեն 2022-ի նոյեմբերին հայտարարեց, որ Մարությանին վերաբերող նյութեր է ստացել ոստիկանությունից: Բայց որեւէ մեկին հայտնի չէ, թե գործն ի՞նչ ընթացք ունեցավ: Համենայնդեպս, այդ մասին որեւէ կողմից ձայն-ծպտուն չկա:

Նշենք, որ «Ընտրական օրենսգիրքը» չի սահմանում, որ ՏԻՄ ընտրությունների ժամանակ կուսակցություններն ու դաշինքները ավագանու համամասնական ցուցակից բացի պետք է նաեւ համայնքապետի թեկնածու առաջադրեն՝ գրավոր ու փաստաթղթավորված: Օրենքը սահմանում է, որ համայնքապետ է դառնում ցուցակի առաջին համարը: Բայց եթե «50+» շեմը որեւէ ուժ չի հաղթահարում եւ համայնքային ղեկավարումը կազմվում է կոալիցիա կազմելով, տվյալ դեպքում առավել շատ ձայն հավաքած ուժը թեկնածու է առաջադրում, որ կարող է լինել նաեւ այլ ուժի ներկայացուցիչ:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# ՀՀ-Սփիւռք կապերու Պերճ Թերզեանի տեսլականը

ԳԷՈՐԳ ՆԱԹԱԼԻ
(Եազըճեան)



2020 թուականի առաջին քառորդին, Գահիրէի «Աֆրիքըն փրես» տպարանէն լոյս տեսաւ եգիպտահայ հասարակական գործիչ, Հ.Բ.Ը.Միութեան Եգիպտոսի շրջանակային վարչութեան եւ Գահիրէի Հ. Բ. Ը. Մ.ի երկարամեայ ատենապետ, վերջին տարիներուն` պատուոյ ատենապետ **Պերճ Թերզեանի «Հայաստան-Սփիւռք համահայկական Ա. համաժողով. Մտորումներ քսանամեայ հեռաւորութենէ»** գրքոյկը (99 էջ): Հեղինակին հիւանդութիւնը եւ թեքնիք պատճառներ թոյլ չեն տուած անոր տպագրութիւնը նախորդ տարուան վերջին քառորդին, ինչպէս նախատեսուած եղած է (չհամարակալուած էջ 4): Նոյն էջին մէջ հեղինակը շնորհակալութիւն կը յայտնէ ծանօթ մտաւորականներ **Վաչէ Ղազարեանին** եւ **Մարուշ Երամեանին**, ինչպէս նաեւ գրքոյկի գոյառմանը նպաստած բոլոր անհատներուն:

Խորագիրէն կը թուի, թէ հեղինակը պիտի գրէ 22-23 սեպտեմբեր 1999-ին Երեւանի Մարզա-համերգային համալիրին մէջ գումարուած Հայաստան-Սփիւռք համահայկական Ա. համաժողովին մասին միայն: Սակայն, այդ համաժողովը կազմելով հանդերձ գրքոյկի բովանդակութեան առանցքը, Թերզեան գացած է աւելի հեռուն` լուսարձակի տակ առնելով ընդհանրապէս Հայրենիք-Սփիւռք կապերը. աւելին` անոնց ոչ միայն վերջին տասնամեակներու վերիվայրումները: Ան ետ կ երթայ մինչեւ հարիւրամեակ մը առաջ, Հայաստանի առաջին հանրապետութեան տարիները, այն համոզումով, որ ներկան որոշակիօրէն պայմանաւորուած է անցեալով:

Պերճ Թերզեան իր գրչի արգասիքը դասաւորած է 15 վերնագիրներու տակ:

Առաջինը վերնագրուած է «**Մուտք**» (էջ 7-10): Հոս հեղինակը տեղեկութիւններ կը հաղորդէ նշեալ համաժողովին մասնակցած եգիպտահայ պատուիրակութեան նախապատրաստական գործունէութեան մասին: Եօթը հոգինոց պատուիրակութիւնը իր խորհրդակցական հանդիպումները ունեցած է ՀՀ-ի Գահիրէի դեսպանատան մէջ, երբեմն` դեսպան **Սերկէյ Մանասէրեանի** կամ դեսպանատան խորհրդական **Անահիտ Թովմասեանի** մասնակցութեամբ: Ընդառաջելով համաժողովի կազմակերպիչ մարմնի առաջարկին` պատուիրակութիւնը իր քննարկումներու աւարտին կազմած է եգիպտահայութեան առաջարկներու պաշտօնական փաստաթուղթը, զոր համաժողովին ընթերցած է հեղինակը: Գահիրէ վերադարձին, պատուիրակութեան երկու անդամներ` Պերճ Թերզեանն ու տոքթոր **Սուրէն Պայրամեանը** զեկոյցներով հանդէս եկած են եգիպտահայ հասարակութեան առջեւ` համաժողովի աշխատանքներուն եւ իրենց ունեցած մասնակցութեան մասին, տեսակ մը հաշուետուութիւն, երեւոյթ մը, որուն հազուադէպ կը հանդիպինք առհասարակ հայկական, մասնաւորաբար սփիւռքեան իրականութեան մէջ:

Հեղինակը կը յայտնէ, թէ գրքոյկի լոյս ընծայման խթանը իր փափաքն է` նոր սերունդը տեղեակ պահել 20 տարի առաջ տեղի ունեցած կարեւոր այդ իրադարձութենէն (էջ 8): Ան «Եգիպտահայ գաղութին առաջարկները» փաստաթուղթը կը նկատէ պատմական արժէք ունեցող վաւերագիր մը, որ «կը ցոլացնէ քսան տարի առաջ գոյութիւն ունեցող եգիպտահայ հաւաքական մտածողութիւնը» (էջ 9):

Գրքոյկի բուն շարադրանքի առաջին գլուխին (էջ 11-15) վերնագիրը կը կրկնէ գրքոյկին խորագիրը: Հեղինակը հարկ համարած է, «կարգ մը հարցերու լուսաբանութեան համար», նաեւ անդրադառնալ մինչեւ 2017-ի աշունը գումարուած եւս 5 համաժողովներուն, քանի որ բոլորը «զիրար լրացնող ամբողջութիւն մը» կը կազմեն (էջ 13): Ապա կ անդրադառնայ հայրենի պետութեան մէջ 27 տարի տիրած հակաօրինական իրավիճակին, որու տրամաբանական հետեւանքն եղաւ 2018-ի «Հայկական գարուն»ը (բնութագիրը իմս է - Գ. Ե.)` «Թաւշեայ յեղափոխութիւնը», որ «յոյս ներշնչեց աւելի լաւ ապագայ մը ակնկալելու ուղղութեամբ» (էջ 14): Գրքոյկին մէջ Թերզեան բազմիցս կը շեշտէ, որ սփիւռքահայ գաղութները մեծ ոգեւորութեամբ եւ ուրախութեամբ ընդունեցին համաժողովին մասնակցելու հրաւէրը, որու ապացոյցը 50 երկիրներէ 1200 պատուիրակի ներկայութիւնն էր` չհաշուած ՀՀ-էն եւ ԼՂՀ-էն մասնակիցները: Թերզեան յատուկ կը նշէ առաջին համաժողովի երկրորդ տարբերակիչ փաստը անոր յաջորդած համաժողովներէն` կազմակերպիչ յանձնաժողովի դիմումը մասնակցութեան ցանկութիւն յայտնած պատուիրակներուն` ներկայանալ իրենց գաղութներու կարիքներն ու ակնկալիքները արտացոլող առաջարկներով (էջ 14):

Յաջորդ գլուխը նուիրուած է համաժողովին Եգիպտոսի գաղութի պատուիրակութեան ներկայացուցած առաջարկներու փաստաթուղթին, որ բերուած է ամբողջութեամբ (էջ 16-21): Ազգային շարունակական ծրագիրի մը մտահոգութենէն մղուած, եգիպտահայոց գլխաւոր առաջարկն է` կազմել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները համադրող մարմին մը, որուն կառուցուածքին նախագիծը եւս, ընդհանուր գիծերու մէջ, ներկայացուած է համաժողովին: Կ առաջարկուի կազմել Կեդրոնական վարչութիւն մը ՀՀ-ի եւ Սփիւռքի ներկայացուցիչներէ բաղկացած (նախընտրաբար` 50-ական տոկոս մասնակցութեամբ), որու կողքին Կեդրոնական աշխատակազմ մը` տեսակ մը գործադիր մարմին, իսկ իւրաքանչիւր գաղութի մէջ ունենալ տեղական ներկայացուցչութիւններ` հիմնական նպատակ ունենալով «հաւաքագրել իւրաքանչիւր գաղութի մասնագիտական ներուժը» (էջ 17), ինչպէս նաեւ ստեղծել անհրաժեշտ ուրիշ մարմիններ: Այնուհետ կը թուարկուին եւ հակիրճ կը ներկայացուին Հայաստան-Սփիւռք գործակցութեան քանի մը գլխաւոր ոլորտներ` դասագիրք, ուսուցիչ, հեռասփռումով դասաւանդութիւն, ՀՀ-ի մէջ սփիւռքահայ ուսանողութիւն, մշակութային, մարզական-երիտասարդական, տեղեկատուական-քարոզչական, տնտեսական հարցեր եւ երկքաղաքացիութեան հարց: Գրքոյկի այս եւ յաջորդ էջերուն մէջ հեղինակը կը յայտնէ, թէ հետագայ տարիներուն լիարժէք լուծուեցաւ միայն վերջին հարցը, իսկ միւսներէն` քանի մը ենթածրագիրներ միայն:

Գրքոյկին յաջորդ գլուխը Պերճ Թերզեան յատկացուցած է եգիպտահայ գաղութի առաջարկներուն նկատմամբ իր նշումներուն եւ դիտարկումներուն (էջ 22-27): Այսպէս, առաջարկուող Կեդրոնական վարչութիւնը պէտք է ունենար հասարակական կազմակերպութեան (ոչ-պետական) կարգավիճակ, տեսակէտ մը, որու կողմնակիցն էր **Ռոպերթ Քոչարեանի** նախագահութեան տարիներու արտաքին գործոց նախարար, առաջին համաժողովի կազմակերպիչ յանձնախումբի համանախագահ **Վարդան Օսկանեանը**: Նոյնպէս, երբեք չիրականացաւ հայրենական եւ սփիւռքեան հաւասար թիւով ներկայացուցիչներու առաջարկը, որով երկու կողմերը պիտի դառնային «լուրջ գործընկեր» (էջ 23): Այդ հաւասարակշռութեան բացակայութեան պարագային, սփիւռքը կը վերածուի «պարզ գործադիր գործակիցի» (էջ 23), ինչպէս որ եղաւ (եւ է՛ տակաւին- **Գ. Ե.**), երբ ան զրկուեցաւ «իրեն վերաբերող հարցերուն մէջ որոշում կայացնելու իրաւունքէն» (էջ 23): Ապա Թերզեան կը մանրամասնէ գործակցութեան վերոնշեալ ոլորտներու իր պատկերացումները` շեշտադրելով լեզուական հարցին մէջ կողմերու համատեղ ջանքերուն կարեւորութիւնը: Սակայն այս ուղղութեամբ առ այսօր որեւէ բարելաւում չէ եղած, հակառակ կայացած բազմաթիւ երկկողմ հանդիպումներուն (էջ 25):

Կը յաջորդեն երկու պատուիրակներու զեկոյցները` ներկայացուած իրենց գաղութին` 1999-ի հոկտեմբերին: Առաջինը տոքթոր Սուրէն Պայրամեանի զեկոյցն է (էջ 28-29): Ան հակիրճ կը խօսի հաւաքի ընթացքին մասին` յուսադրիչ ակնկալիքներ արտայայտելով հետագայի համար: Միւսը հեղինակին ընդարձակ զեկոյցն է (էջ 30-39): Սկիզբը ան մանրամասնութիւններ կը հաղորդէ համաժողովի բացման նիստէն, անոր ընթացքին ելոյթ ունեցողներէն եւ այլն: Ան կը նշէ, որ նախագահ Ռ. Քոչարեանի բացման ճառին մէջ տեղ գտած առաջարկները «մեծ մասով» համահունչ եղած են եգիպտահայ պատուիրակութեան առաջարկներուն (էջ 36): Հեղինակը կը նկարագրէ երկօրեայ նիստերը ու կանգ կ առնէ աւարտին ընդունուած հռչակագիրին վրայ: Հոն թէեւ կը խօսուի Հայոց ցեղասպանութեան ճանաչման արշաւը շարունակելու մասին, սակայն «երեւութապէս հողային պահանջներու խօսք չկայ»: Այդուհանդերձ, «ուշադիր կարդալով կը նկատենք թէ հոն խօսուած է հայ ժողովուրդի պատմական իրաւունքներուն եւ անոնց շարունակութեան պաշտպանութեան մասին» (էջ 37): Ապա Թերզեան կը գրէ Սարդարապատի յուշահամալիրին մէջ սարքուած փառահեղ ընդունելութեան երեկոյին մասին ու կը համառօտագրէ հոն վարչապետ **Վազգէն Սարգսեանի** արտասանած ճառը, որուն ստեղծած «տպաւորութիւնը երկար ժամանակ կը շարունակէր մեզի հետ մնալ» (էջ 40):

«**Գեղեցիկ երազներու խորտակում**» վերնագրուած գլուխը (էջ 40-44) կը ներկայացնէ 27 հոկտեմբեր 1999-ի ահաւոր ոճրագործութեամբ համազգային քաղցր երազանքներու յօդս ցնդիլը: Ըստ հեղինակին, այդ «ազգային մեծ աղէտ»ին (էջ 44) յաջորդեց «երկրորդ աղէտ»ը` մարդասպան-պետականասպաններու «ձեւական եւ շինծու դատավարութիւնը» (էջ 44), ինչը ՀՀ-ի իրաւապահ համակարգին կողմէ «անպատասխանատու եւ արհամարհական վերաբերմունք» է պետականութեան գաղափարին հանդէպ (էջ 43): Թերզեան վստահ է, որ «ահաբեկիչներու ետին գոյութիւն ունի կազմակերպութիւն մը (կ աւելցնէի` պետութիւն կամ պետութիւններ, անոնց կարգին` «դաշնակից» համարուող - Գ. Ե.), որ դեր ունեցած են այս սպանդին ծրագրումին ու իրագործումին մէջ» (էջ 42), եւ կը պահանջէ նոր հետաքննութիւն ու նոր դատավարութիւն, այլապէս ՀՀ-ը պիտի շարունակէ կրել «պօրէն երկիր ըլլալու ամօթալի խարանը» (էջ 44): Այս պահանջը առ այսօր անկատար կը մնայ` առկայ հարցականները ա՛լ աւելի խորհրդաւոր դարձնելով...

«**Հայաստան-Սփիւռք հարիւրամեայ յարաբերութիւններու հոլովոյթը 1918-2018**» վերնագիրը կը կրէ յաջորդ գլուխը, որ ամենաընդարձակն է (էջ 45-65): Մեր կարծիքով, կարելի էր բաւարարուիլ 10, նոյնիսկ աւելի պակաս էջերով, քանի որ այս պատմական մասը ուղղակիօրէն չ առնչուիր գրքոյկի բուն նիւթին: Հեղինակը կը գրէ Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց ծիրին մէջ գործած հայրենական կառոյցներուն մասին` Հայաստանի օգնութեան կոմիտէ, Արտասահմանեան երկրների հետ բարեկամութեան եւ մշակութային կապերի հայկական ընկերութիւն (ԱՕՔՍ), Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէ, ՀՀ-ի արտաքին գործոց նախարարութեան մէջ ստեղծուած մարմիններ, Սփիւռքի նախարարութիւն, 2019-ի մայիսէն` ՀՀ-ի վարչապետի աշխատակազմին մէջ` Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակ: Ան կ անդրադառնայ նաեւ Խորհրդային Հայաստանի ներքին քաղաքականութեան եւ Պետութիւն-Եկեղեցի յարաբերութիւններուն: Թերզեան Հայրենիք-Սփիւռք կապերուն մէջ կ առանձնացնէ երկու փուլ. 1920-1938` «արտերկրի հայութեան հետ բոլոր կապերը խզելու յատուկ ճիգ», իսկ 1944-էն մինչ օրս` «ամէն կարելի միջոցներով Սփիւռքը հայրենիքին կապելու նուիրական աշխատանք» (էջ 54): Ապա ան մանրամասնութիւններ եւ օրինակներ կը ներկայացնէ ԱՕՔՍ-ի եւ Սփիւռքի կոմիտէի գործունէութիւններէն (էջ 56-61, այս մանրամասները կարելի էր զեղչել շարադրանքէն): Այնուհետ հեղինակը կը ներկա-

յացնէ Հայաստան-Սփիւռք վեց համաժողովներուն ցանկը՝ ըստ ժամանակագրութեան (էջ 62):

Պերճ Թերզեան յայտնապէս հիացած է Զ. համաժողովի բացման նիստին Մեծի Տանն Կիլիկիոյ **Արամ Ա. կաթողիկոսի** արտասանած խօսքով (էջ 66-70), մասնաւորաբար անոր երկու շեշտադրումներով՝ «Հայաստանը կը պարպուի, իսկ Սփիւռքը կը մաշի» (էջ 67) եւ «Հզօր Հայաստան, ամուր Արցախ, ու կազմակերպ Սփիւռք» (էջ 67, այս նշանախօսքին բոլոր տառերը գլխագրուած են): Արամ Ա. կը պահանջէ այս նպատակը դարձնել «մեր ազգային քաղաքականութեան ռազմա[վար]ական եւ մարտավարական ուղեցոյցը» (էջ 67): Վեհափառ հայրապետը նաեւ կը պահանջէ սփիւռքահայ փորձագէտները գործնապէս մասնակից դարձնել ՀՀ-ի կառավարման կառոյցներուն, եւ «անյետաձգելի հրամայական» կը նկատէ Համազգային խորհուրդի մը ստեղծումը (էջ 70):

Արամ Ա.ի խօսքին կը հետեւի առանձին ենթագլուխով անոր՝ Պերճ Թերզեանի մեկնաբանութիւնն ու արժեւորումը: Գրքոյկին հեղինակը զայն «պատմական վաւերագիր» կը յայտարարէ (էջ 72): Ան հոս եւ գրքոյկի ուրիշ էջերու մէջ չի թաքցներ իր խոր մտահոգութիւնը՝ իր բառերով՝ հայրենալքումի աղէտին ու անոր շարունակութեան ի տես: Թերզեան կը նշէ, որ մինչ համաժողովի միւս բոլոր մասնակիցները շրջանցեցին ՀՀ-ի ու առհասարակ հայութեան անվտանգութեան սպառնացող այս երեւոյթը, Արամ Ա. «միակը եղաւ, որ արտայայտուեցաւ մերօրեայ ազգային ամենամեծ աղէտին՝ հայրենալքումին մասին» (էջ 73):

Երկրորդ անձը որու ելոյթին ամբողջական շարադրանքը իր գրքոյկը ներառած է Պերճ Թերզեան՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսայի մասնաճիւղի ղեկավար, տնտեսագէտ **Պետրոս Թերզեանն** է: Հայաստան-Սփիւռք համահայկական Գ. համաժողովին (20 սեպտեմբեր 2006) վերջինիս խօսքը (էջ 75-79) համեմուած է վիճակագրական կարեւոր տուեալներով: Ըստ Պետրոս Թերզեանի՝ սփիւռքահայութեան տարեկան եկամուտը կը կազմէ 80-100 միլիար տոլար, որու ընդամէնը 0,5 տոկոսը կը մտնէ ՀՀ՝ բարեգործութեան կամ ներդրումի տեսքով: Ան համոզուած է, որ ՀՀ եւ Սփիւռք իրենց դէմ ցցուած դժուարութիւնները չեն կրնար առանձինն յաղթահարել, հետեւաբար հարկաւոր է ճիգերը համատեղել: Ան կոչ կ ընէ սփիւռքահայ երիտասարդութեան՝ խորապէս ընդգրկուիլ իրենց բնակած երկիրներու քաղաքական կազմակերպութեանց եւ պետական կառոյցներուն մէջ՝ հոն հայանպաստ աշխատանքներ տանելու համար: «Հայաստանը պէտք է որ ամէն հայու համար ըլլայ հպարտութեան աղբիւր»,- կը յայտարարէ ան, ինչը, իր համոզումով, կ ըլլայ՝ եթէ հայրենի պետութեան մէջ արդարութիւնը տիրէ, կաշառակերութիւնը վերանայ եւ իսկական ժողովրդավարութիւն հաստատուի (էջ 78): Ան կը շարունակէ. «Տուէ՛ք մեզի Հայաստան մը որով կրնանք հպարտանալ: Անիկա ձեր երկիրն է, բայց՝ մեր հայրենիքը» (էջ 79):

Պերճ Թերզեան հարկ համարած է առանձին ենթագլուխով անդրադառնալ իր մականուանակիցի այս ելոյթին եւս (էջ 80-81): Սակայն անոր մեկնաբանութիւնները յաճախ կրկնութիւններն են Պետրոս Թերզեանի դրոյթներուն:

Գրքոյկին փաստական վերջին գլուխն է Պերճ Թերզեանի 23 յունիս 2017-ի «խորհրդատուական» նամակը ՀՀ-ի Սփիւռքի նախարարուհի **Հրանոյշ Յակոբեանին**՝ Զ. համաժողովէն քանի մը ամիս առաջ (էջ 85-92): Թերզեան կը խոստովանի, որ թէ՛ Ա. համաժողովը, թէ՛ անոր յաջորդած չորս համաժողովները «իրենց գումարումէն յետոյ որեւէ արդիւնք չտուին» (էջ 86): Թերզեան անթաքոյց վրդովումով կը նշէ, որ նախորդ համաժողովներուն նման, Զ. համաժողովի օրակարգին մէջ ալ չկայ «հայրենալքումի ահաւոր աղէտը» (էջ 86), առանց որու ընդգրկումին՝ միւս «բոլոր նիւթերը ... իմաստազուրկ կը դառնան» (էջ 86): Թերզեան նաեւ կը պահանջէ քննարկել արտագաղթին տուն տուող պատճառները՝ կաշառակերութիւնը, դատարաններու անարդար վճիռները եւ այլն (էջ 87-88): Միամի՞տ պահանջ, երբ նամակին հասցէատէր, կուսակցութենէ կուսակցութիւն ցատկած տիկինը այդ նոյն փտած համակարգի կարկառուն դէմքերէն էր առնուազն ... 20 տարի: Գայլի գլխուն Աւետարա՞ն կարդալ...

Արտագաղթի կասեցման համար Թերզեան նաեւ կ առաջարկէ բարելաւել հայրենահայութեան տնտեսական վիճակը: Այս նպատակին համար, ան խորհուրդ կու տայ ստեղծել Հայաստանի տնտեսական զարգացման գործակալութիւն (ՀՏԶԳ) մը՝ յար եւ նման Արցախի Հանրապետութեան մէջ գործող եւ հիմնականին մէջ լիբանանահայ ազգայիններու ներդրումներով գոյառած ARI կառոյցին, որուն ներդրումներուն երաշխաւորը Արցախի Հանրապետութիւնն էր: Եթէ ՀՏԶԳ-ի ներդրումներուն երաշխաւոր կանգնի ՀՀ-ի պետութիւնը, ապա, Թերզեանի համոզումով, ներդրողները շատ կ ըլլան: Ապա Թերզեան Հրանոյշ Յակոբեանին կը ներկայացնէ ՀՏԶԳ-ի կառոյցին իր պատկերացումը (էջ 91):

Վերջին՝ «**Դէպի վերականգնում**» վերնագրուած գլուխը (էջ 93-97) ձեւով մը ամփոփումն է գրքոյկի նախորդ էջերուն մէջ շարադրուած միտքերուն, դրոյթներուն, դատողութիւններուն եւ դիտողութիւններուն: Թերզեան կը շեշտէ հայրենական պետութեան մէջ բարոյահոգեբանական վիճակը կտրուկ բարելաւելու անհրաժեշտութիւնը՝ արդարութեան պարտադրումովը բոլորին անխտիր: Կը կարեւորէ նաեւ տնտեսութեան արագ վերականգնումը: Ան կը զգուշացնէ. «Հայրենիքը կարիք ունի սովորականէն դուրս վերականգնման համապարփակ ծրագրի մը, որուն ուշացումը կրնայ ճակատագրական ըլլալ» (էջ 96): Իբրեւ ՀՀ-ին օժանդակելու յաւելեալ ծրագիր, ան կ առաջարկէ 16 տարին լրացուցած իւրաքանչիւր սփիւռքահայէ ամիսը գանձել 1 տոլար: Թերզեան անգամ մը եւս կը պահանջէ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները համադրող կառոյցներու պատշաճութեան մէջ սփիւռքահայոց 50 առ հարիւր մասնակցութիւնը՝ գործերուն ճիշդ եւ արդիւնաւէտ ընթացք տալու մտահոգութեամբ (էջ 96):

Գրքոյկի աւարտին բերուած են հեղինակին հրատարակած գիրքերուն եւ անոր հասարակական գործունէութեան համար ստացած պարգեւներուն ցանկերը (էջ 98-99):

Գրքոյկին մէջ առկայ սխալներն ու թերութիւնները բաւական քիչ են: Ակնբախ է ԼՈՒՐՋ եւ ԲԾԱԽՆԴԻՐ մօտեցումը թէ՛ նիւթին, թէ՛ անոր խմբագրումին ու սրբագրումին: Այդուհանդերձ, նշենք զանոնք.

- Տեղ-տեղ կը հանդիպին կրկնութիւններ, երբեմն՝ նոյնութեամբ, մինչդեռ կարելի էր խուսափիլ անոնցմէ:
- Կան մուտքագրման եւ լեզուական վրէպներ, որոնք կը գտնուին ընդունելիի սահմաններուն մէջ: Առանձին կ ուզենք նշել հայերէնի լեզուամտածողութեան անյարիր «որոշում առնել» արտայայտութիւնը (էջ 97): Ճիշդն է՝ «որոշում տալ» կամ «որոշում կայացնել»:
- Բնաւ կարիքը չկար առանձին ցուցակով ներկայացնելու 27 հոկտեմբերի ոճրագործներուն անունները եւ անոնց առնչուած ուրիշ մանրամասներ: Այդ յաւերժ նզովեալները պէտք չէ Հերոստրատի վերածել...
- Ամբողջովին աւելորդ էր երեք էջ յատկացնել ներկայացնելու համար Պետրոս Թերզեանի կենսագրութիւնը, որ հեռաւոր աղերս իսկ չունի գրքոյկի նիւթին հետ:
- Հայկական Եռագոյնի երրորդ գոյնը ներկայացուած է իբր ծիրանագոյն (էջ 46): ՀՀ-ի Սահմանադրութեան (20-րդ յօդուած) եւ «Դրօշի մասին» ՀՀ օրէնքին մէջ շատ յստակ գրուած է՝ նարնջագոյն:
- Կան պատմական տեղեկութիւններու քանի մը սխալներ:
- Հեղինակը գրած է, որ Ռոպերթ Քոչարեան նախագահ ընտրուած է 1998-ի փետրուարին (էջ 12՝ 3 տարբեր տեղեր): Նախագահի ընտրութիւնները կայացան 1999-ի մարտ ամսուն՝ երկու փուլով՝ ամսուն 16-ին եւ 30-ին: Բացի ասկէ, հեղինակին իսկ վկայութեամբ, հայրենի ժողովուրդը, ուրիշ ընտրութեանց շարքին, այդ երկու փուլերուն արդիւնքներն ալ կը նկատէ խարդախուած (էջ 13), ուստի Քոչարեանը իբր ընտրուած նախագահ պէտք չէ ներկայացուէր, առնուազն՝ «ընտրուած» բառը պէտք է առնուէր չակերտներու մէջ:
- Առաջին հանրապետութեան համար գրուած է, թէ կառավարութիւնը պէտք է զբաղէր երկրին մէջ ապաստանած «տասնեակ հազարաւոր գաղթականներ»ու հարցերով (էջ 45): Գաղթականներուն թիւը հարիւր հազարներով կը հաշուըուէր:
- Կը կարդանք, թէ խորհրդային կարգերու հաստատման յաջորդած երկու տասնամեակներուն, «Ս. Էջմիածինին արգիլուած էր կապեր ունենալ սփիւռքի հետ» (էջ 49): Սա չափազանցութիւն է: Այդ կապերը կային, թէկուզ նամակագրութեան տեսքով, ինչպէս նաեւ 1934-ին **Գարեգին արք. Յովսէփեանցի**՝ իբրեւ հայրապետական լիազօր պատուիրակ սփիւռքահայ գաղութներ առաքելու եւ անոնց մէջ գործունէութիւն ծաւալելու փաստով, Կիլիկիոյ դպրեվանքի տեսուչ **Շահէ արք. Գասպարեանի** 1935-ի նոյեմբերին Մայր Հայրենիք այցով եւ ամսուն 24-ին հոն վախճանումով, եւ այլն: Ճիշդ է սակայն, որ այդ յարաբերութիւնները ամէն կերպ կը խոչընդոտուէին:
- Սփիւռքի Կոմիտէի գոյութեան դադրեցման թուական կը նշուի 1998 թուականը (էջ 54 եւ էջ 60), մէկ ուրիշ տեղ՝ 1992-ը (էջ 61): Երկու թուականներն ալ սխալ են: Կոմիտէն վերացաւ 1994-ին՝ երեք տարի իր գոյութիւնը առանց պետական նեցուկի քաշքշելէ ետք:
- Շատ տեղեր, հայոց հայրենիքին համար՝ «հայրենիք» բառը գրուած է փոքրագիր, մինչդեռ գրեթէ բոլոր տեղերը «սփիւռք»ը գլխագրուած է: Եթէ հակառակն ըլլար՝ կրնայինք հասկնալ: Ամէն պարագայի, Հայաստանի համար գործածուող «հայրենիք» հոմանիշը պէտք է ՄԻՇՏ գրուի գլխագիրով:
- Գրքոյկի 21-րդ էջին մէջ տպուած են եգիպտահայ պատուիրակներուն լուսանկարները: Եօթը մասնակիցներուն մէջ չկայ իգական սեռէն ոչ մէկ հոգի, ինչպէս նաեւ 60-էն պակաս տարիք ունեցող որեւէ պատուիրակ: Եթէ պատուիրակները անընդունելի կը գտնեն Սփիւռքի համար որոշումներու կայացումը առանց սփիւռքահայ ներկայացուցիչներու մասնակցութեան, նոյն տրամաբանութեամբ իրաւունք ունինք հարցադրելու՝ մի՞թէ արդար է հայ հասարակութեան առնուազն կէսը կազմող իգական սեռին եւ նոյն հասարակութեան զգալի տոկոսը կազմող երիտասարդութեան մասին որոշումներ կայացնել եւ զանոնք ներկայացնել յաւակնիլ՝ առանց եգիպտահայ հասարակութեան այդ երկու շերտերէն թէկուզ մէկական պատուիրակի մասնակցութեան:
- Գրքոյկին մէջ շատ քիչ գրուած է Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց այսօրուան՝ մեղմօրէն արտայայտած՝ ցած մակարդակի փաստին մէջ սփիւռքահայ գաղութներու եւ կազմակերպութիւններու մեղքի բաժինին մասին: Գրեթէ ամէն ինչ ակնկալուած է ՀՀ-ի իշխանութիւններէն: Անշուշտ, վերջիններս շատ պարագաներու թերացած են, սակայն արդար պէտք է ըլլանք ըսելու, թէ այս վիճակի յառաջացման համար պատասխանատուութեան իրենց կարեւոր բաժինն ունին նաեւ սփիւռքահայ կառոյցները:

Վստահ եմ, որ Պերճ Թերզեան եթէ այս գրքոյկը հեղինակէր հայ-ատրպէյճանական շարունակուող պատերազմի 2020-ի աշնանային պարտութենէն ետք, որոշ երեւոյթներ ու փաստեր նորովի կը մեկնաբանէր:

Ամէն պարագայի, գրախօսուող գրքոյկը շատ օգտակար ձեռնարկ մըն է Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները ուսումնասիրողներուն եւ անոնցմով զբաղող գործադիր կառոյցներու աշխատակիցներուն համար: Հոն ներկայացուած՝ Հայաստան-Սփիւռք համագործակցութեան մեքենայի ուրուագիծը, դատողութիւններն ու դիտողութիւնները էական նպաստ են բոլոր անոնց, որոնք կը ձգտին ճիշդ հունի մէջ դնելու այդ յարաբերութիւնները՝ յօգուտ համայն հայութեան:





**Երեւան, 4 սեպտեմբեր 2023**

# Բրիտանահայեր. Արցախի կողքին. բողոքի ակցիաներ Լոնդոնում եւ Մանչեսթրում

Բրիտանահայ Միություն (British Armenian Society) հասարակական կազմակերպության գործունեությունը միտված է տարբեր քայլերով բարձրացնել հասարակական գիտակցությունը Մեծ Բրիտանիայում՝ սեւեռելով ուշադրությունը Արցախում Ադրբեջանի կատարած պատերազմական հանցագործություններին եւ մարդու իրավունքների խախտումներին:

Կազմակերպությունը նամակներ է հղում ՄԹ եւ՛ վարչապետին, եւ՛ արտաքին գործերի նախարարին՝ ներկայացնելով Արցախում օրեցօր խորացող հումանիտար աղետը եւ պահանջում է դադարեցնել համագործակցությունը պատերազմական հանցագործ Ադրբեջանի հետ՝ կանխելու համար ահագնացող ցեղասպանությունը Արցախում:

Այս աշխատանքներին զուգընթաց, Բրիտանահայ Միությունը շարունակաբար բողոքի ցույցեր է կազմակերպում Մեծ Բրիտանիայի խորհրդարանի առջեւ չորեքշաբթի օրերին, քանի որ այդ օրը Վարչապետի եւ կառավարության անդամների հարց ու պատասխանի օրն է, եւ խորհրդարանի ներսում ներկայացուցչությունը ամենաբազմամարդն է:

Չնայած որ ՄԹ խորհրդարանը ամառային դադարի/արձակուրդների մեջ է, սակայն Բրիտանահայ Միությունը շարունակում է ահազանգել Արցախի բնիկ հայ բնակչությանը սպառնացող վտանգի մասին, այժմ բողոքի ակցիա անցկացնելով Վարչապետի նստավայրի առջեւ, 10 Դաունինգ փողոցին կից: Նրանք միացել են ԱՄՆ-ի հայ համայնքի նախաձեռնած Միջազգային ցույցերին Լոս Անջելեսի, Բրյուսելի, Փարիզի, Պրահայի, Կոպենհագենի, Երուսաղեմի, Երեւանի ու Ստեփանակերտի հայության բողոքի կոչին:

Շաբաթ օրը, Սեպտեմբերի 2-ին, արդեն երրորդ շաբաթն է, որ Մեծ Բրիտանիայի հայ համայնքը Բրիտանահայ Միության առաջնորդությամբ եւ կազմակերպությամբ գալիս է իր բողոքի խոսքը ասելու Կառավարությանը, ծածանելով Հայաստանի ու Արցախի դրոշները, պաստառներով ու թռուցիկներով ներգրավելով անցորդներին, տեղեկացնելով նրանց մեր հայրենակիցներին սպառնացող Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության մասին:

Թեպետ այժմ արձակուրդներ են, ու շատերը այժմ երկրում չեն, բայց ուրախությամբ կարող ենք փաստել, որ այդ ցույցը մարդաշատ էր, տարբեր հայկական կազմակերպություններից անհատներ գաղափարական բազմազանությամբ միացել էին մեկ հարցի շուրջ - կանգնեցնել ցեղասպան գործողությունները Արցախում: Հետաքրքրական էր պաստառներին Ալիեվի ու Հիտլերի համեմատական պատկերները, ցույցի մասնակիցները վանկարկում էին «Ալիեւը պատերազմի հանցագործ է», «Վերջ բլոկադային», «Վերջ հայկական ցեղասպանությանը», «Խաղաղություն Արցախին», «Ադրբեջանին պատժամիջոցներ» եւ այլն:

Արցախի մեր հայրենակիցներին ուղղված իր ուղերձում մասնակիցներից **Արա Թումանյանը** հորդորում էր դիմանալ, քանի որ հայերը այդ վայրի բնիկ բնակիչներն են, ուրեմն տարածքը նրանց է պատկանում, որքան էլ որ Ալիեւը հոխորտա, թե իր տարածքային ամբողջականության մաս է Արցախը, այն վիճելի տարածք է ճանաչված միջազգային օրենքներով: «Այժմ ապագաղութացում է տեղի ունենում աշխարհի տարբեր անկյուններում, նրանք որ բնիկ տարածքի տերերն են, իրենց հնարավորություն է տրվում թոթափել գաղութացման կառավարումը եւ ինքնորոշվել: Հայերը հազարամյակներով ապրել են իրենց պապենական հողերում, նրանք կշարունակեն ապրել, կերտել իրենց պատմությունն ու ապագան: Հուսով ենք՝ այդ օրը հեռու չէ»:

«Այսօր շատ ցավալի իրադարձություն է, կրկին հայ ժողովրդի լինել-չլինելու հարցն է, 120 հազար մարդկանց, այդ թվում 30 հազար երեխաների ենթարկել բացարձակ շրջափակման, սովի սպառնալիքով ստիպել ընդունել ինտեգրում Ադրբեջանին, ուղղակի անհավատալի է տեսնել 21-րդ դարում այս ամենը, ինչ մենք տեսնում ենք Արցախում», նշում էր մասնակիցներից մեկը Լոնդոնից, որը եկել էր, քանի որ «չէր կարող անտարբեր մնալ»:

Բրիտանահայ Միությունը կրկին նամակ ուղարկեց Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար **Ջեյմս Քլեվերլիին** հետեւյալ պահանջներով՝

*Աջակցել եւ քվեարկել Արցախում եւ Բերձորի միջանցքում ՄԱԿ ի մանդատով միջազգային խաղաղապահների տեղակայմանը՝ կանխելու համար խաղաղ բնակչության վերահաս ցեղասպանությունը եւ բռնի տեղահանումները,*

*Անհապաղ օդային ճանապարհով անհրաժեշտ օգնություն ուղարկել Միացյալ Թագավորությունից ուղիղ Ստեփանակերտի օդանավակայան, որտեսզի կանգնեցվի սովը եւ դրա հետեւանքով մահվան դեպքերը:*

*Ճնշում գործադրել Ադրբեջանի ապօրինի անցակետի ապամոնտաժման, Բերձորի միջանցքի վերաբացման եւ ապահով ու շարունակական երթեւեկության համար՝ ըստ Արդարադատության միջազգային դատարանի որոշման:*

*Քայլեր ձեռնարկել հայ ռազմագերիների եւ այլ առեւանգված անհատների վերադարձի ուղղությամբ, որոնք այժմ գտնվում են Ադրբեջանի բանտերում 2020-ից, ինչպես նաեւ վերջերս առեւանգված՝ ադրբեջանական ապօրինի անցակետից:*

*Դատապարտել եւ պատժամիջոցներ կիրառել նախագահ **Իլհամ Ալիեւի** ռեժիմի եւ Ադրբեջանի մյուս ղեկավարների հանդեպ, որոնք արհամարհում են ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշումները եւ պատասխանատու են մարդու իրավունքների ոտնահարումների, պատերազմական հանցագործությունների եւ հայերի ցեղասպանության համար:*

Միացյալ Թագավորության մեկ այլ քաղաքում, Մանչեստրում նույնպես մեր հայրենակիցները միացել էին բողոքի ակցիային քանի որ դժվար էր նրանց գալ Լոնդոն: Բողոքի եւ զորակցության գլխավոր ուղերձը մեկն էր՝ Արցախը չպետք է հանձնվի, Արցախը պիտի մնա տոկուն ու ուժեղ: Մենք պատրաստ ենք օր ու գիշեր պայքարել նրանց ինքնորոշման եւ ազատ ու անկախ ապրելու իրավունքի համար: Իսկ այս պահին մեր Արցախի հայրենակիցների անվտանգությունը կարող են ապահովել ՄԱԿ խաղաղապահները, որքան շուտ նրանք գան Արցախ, այնքան արագ հայ ազգի անվտանգությունը հնարավոր կլինի ապահովել:

**ԱԼԻՍ ՔԱՆԵՔԱՆՅԱՆ**
**Լոնդոն**









# «Էդիթ պրինտ» աշակերտների հաշվին բիզնես է անում

ԿԳՄՍ նախարարությունը վստահեցնում է, որ 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանների դասագրքերի հարցը լուծվում է: «Երեւանի որոշ դպրոցներ արդեն ստացել են գրքերը, իսկ մինչեւ ամսվա ավարտը հանրապետության բոլոր դպրոցներն դասագրքերով ապահովված կլինեն»,- վստահեցնում են նախարարությունից:




Մինչեւ գրքերը դպրոց կհասնեն, գրախանութներն ու հրատարակչությունները բիզնես են անում եւ գերշահույթ ստանում: Խոսքը, մասնավորապես, «Էդիթ պրինտ» հրատարակչության մասին է: «Սիրելի աշակերտներ, ուսուցիչներ, ծնողներ, ուրախ ենք տեղեկացնել, որ «Մայրենիի» 5-րդ դասարանի դասագիրքն արդեն կարող եք ձեռք բերել գրախանութներից կամ պատվիրել առաքում»,- Facebook-ի էջում նման հայտարարություն են տարածել հրատարակչությունից: Սա կարծես քիչ է, ի պատասխան դպրոցահասակների ծնողների քննադատության, թե «ինչպե՞ս կարելի է մեր հաշվին բիզնես անել», «Էդիթ պրինտը» շարունակել է. «Հարգելի ծնողներ, դպրոցներին դասագրքերով ապահովում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: Խնդրում ենք, դպրոցներին դասագրքեր տրամադրելու հարցով դիմել նախարարություն»:

Նախարարություն դիմեցինք մենք՝ հասկանալու՝ ինչպե՞ս է ստացվել, որ դպրոցներում գիրք չկա, բայց հրատարակչությունն այն վաճառքի է հանել: «**Ազգ**»-ին ԿԳՄՍՆ-ից փոխանցեցին, որ մասնավոր գործունեության հետ կապված հարցերին արձագանքելու լիազորություն չունեն:

Ի՞նչ է ստացվում՝ տպարանից գրքերը դպրոց չեն հասել, բայց դրանք աշակերտի սեղանին հասցնելու տարբերակ է առաջարկում հրատարկչությունը: Իրականում հարցը բարոյականության տիրույթում է, քանի որ որեւէ հրատարկչություն, դպրոցից առաջ ընկնելով, գիրք տպելով ու այն վաճառելով, օրենք չի խախտում: Հարցն այն է, թե ինչքանո՞վ է արդարացի դպրոցականների հաշվին բիզնես անել: Հատկապես մարզերում մարդիկ դժվարությամբ են վճարում դասագրքերի գումարը, եւ այս ամենը լավ իմանալով՝ խեղճուկրակ մարդկանց հաշվին բիզնես անելը, դասականի ասած, սիրուն չէ:

ԿԳՄՍ նախարարությունը, լավ կլինի, օրենսդրական փաթեթ ներկայացնի խորհրդարան, որով հրատարակչություններին կարգելի դասագիրք վաճառել, քանի դեռ հանրապետության բոլոր դպրոցները գրքերով ապահովված չեն:

Երեւույթը, ցավոք, նոր չէ. իմ դպրոցական տարիներին (1999-2009) նույնպես հրատարակչությունները թանկուկրակ գներով դասգրքեր էին վաճառում: Հիշում եմ՝ մեր դպրոցը «Տրամաբանություն» առարկայի 4-5 դասագիրք էր ստանում, այնինչ՝ ամեն դասարանում սովորում էր միջինը 20 աշակերտ: Հրատարակչությունը նույն դասագիրքը վաճառում էր 5000 դրամով, ինչն այն ժամանակվա համար բավական մեծ գումար էր:

Մեղավորը թե՛ հիմա, թե՛ մոտ 20 տարի առաջ կառավարությունն է, որ հարցերը ժամանակին կարգավորել, ավելին՝ բոլոր աշակերտներին դասագրքով ապահովել չի կարողանում, ու երեխաները դասագրքերի փոխարեն «քսերոքսներով» են դաս սովորում:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Թոփշալիշ

Միանշանակ վստահ եմ, որ ընթերցողը կտարակուսի. ի՞նչ է գրված վերնագրում, քանզի գրաբարից ու գրական հայերենից սկսած մինչեւ բազմաճյուղ բարբառները նման բառ կամ արտահայտություն հայերենում չկա, մոտավոր ինչ-որ տառա-բառա կապակցություն էլ չի ուրվագծվում: Այսուհանդերձ, երբ որոշակի մտորումների տրվելու պարագայում ակտիվ լրագրությամբ զբաղվող շարքային քաղաքացիս սույն ձեւակերպումն օգտագործում է, զրուցակիցներիս մեջ հայտնվում են մարդիկ, որոնք նկատում են, որ **թոփշալիշ** կարող է համարվել նաեւ մեր վիճակը, առօրյան, կենցաղը, ի դեպ՝ առանց քաղաքական կողմնորոշման: Ապացո՞ւյց եք ուզում: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավարը, որը նաեւ ՀՀ գործադիր մարմնի, կառավարության թիվ 1 պատասխանատու պաշտոնյան է, հենց գործադիրի նիստում, իր ենթակաների ներկայությամբ հայտարարում է, որ երկրի լիարժեք կայացման գործընթացային խոչընդոտում է... ի՞նչ եք կարծում՝ ով կամ ինչը՝ պետական ապարատը: Այն նույն համակարգն ու կառույցը, որը ստեղծել ու հաստատել է նորօրյա գործի դնելու կոչված մարմինը:



Հայ հանրության մի հատվածն այս վիճակը անզորի ու անօգնականի պարզ ու հասարակ դրսեւորում է համարում, քանզի դժվար է այլ գնահատական տալ, որն անշուշտ ցանկության դեպքում կարելի է նաեւ թոփշալիշ անվանել, գուցե թե՝ խառնիխուռն: Ահա մասամբ մոտեցանք բուն գրական հայերենին, ուր խառնիխուռն-ը շփոթ վիճակն է, հոմանիշը՝ շիլաշփոթ-ը: Այնպես որ չեմ կարծում, որ սույն բառի ընդամենը աջից ձախ ընթերցման ու արտասանման յուրօրինակությունը լեզվաբան հանրության մոտ անգամ նվազագույն քննադատության կարժանանա, որպիսի օրինակ է, ասենք, նախորդ դարի 20-ական թվականներին մեզանում Նորատ անվանման ի հայտ գալը, որը խորհրդանշում էր Տարոն աշխարհի վերհուշը: Սա՝ ոչ իմիջայլոց:

Որ մեզանում որոշ հիմնարար գործընթացներ իրոք թոփշալիշ են գնահատվում ու դիտարկվում, դա անվիճելի է: Քարաստան համարվող Հայաստանում, որոշ շինարարական աշխատանքներում օգտագործելու նպատակով հարեւան երկրից քար է ներմուծվում, նկատենք, ոչ ազգային նշանակության շենք-շինության կառուցման նպատակով, այլ ընդամենը՝ ճանապարհների շինարարությունում օգտագործելու: Անգամ սիրողական մակարդակով տնտեսությունից ու տնտեսավարումից նվազագույն պատկերացում ունեցող որեւէ մեկը կհաստատի, որ նման ներմուծումը պարզապես խնդրահարույց է, լինի հանրային թե մասնավոր ընկերության ֆինանսական միջոցների օգտագործման պարագայում: Սա երբեւէ ֆորս-մաժորային անհաղթահարելի համարվող վիճակ չէ, քանզի շինարարական աշխատանքների նախատեսումից սկսած գրեթե յուրաքանչյուր մանրուք հաշվառվել ու քննարկվել է, հնարավորինս նվազագույն ծախսային քաղաքականություն է սահմանվել: Եվ կարծես անակնկալ կառավարության նիստում թիվ 1 պաշտոնյան հայտարարում է. եթե նավթ ու գազի խնդիր լիներ, հասկանալի կհամարվեր, քարի պարագայում այն անհասկանալի է:

Հիմա ի՞նչ մտածի Հայաստանի Հանրապետության հիմնարար կայացմամբ շահառու շարքային քաղաքացին, որը ո՛չ դիմադիր է, ո՛չ ընդդիմադիր, այլ ընդամենը՝ կուզեք մտահոգ համարեք, կուզեք արմատական: Նա երբեմն լռությամբ խոսող է, քչախոսությամբ՝ բավարար արտահայտվող, նաեւ՝ վիրավորության աստիճանի հասնող կարծիք հնչեցնող: Միամիտ մեկը չէ հայաստանցու այդ տեսակը, որ թե՛ արտերկրներում է եղել, թե՛ այնտեղ ընտանիքի անդամներ ունի, նաեւ՝ մեկնել նախապատրաստվողներ: Նա ի՞նչպես համակերպվի երկրի տնտեսության կայացման առումով նախարարի այն հայտարարությանը, թե ծրագրում է ՀՀ հրավիրել աշխարհի 500 ընկերություններից մի քանիսին: Նման ցանկություն առաջացել է սովորական դարձած տարբեր երկրների դեսպանատների հետ հանդիպումների ընթացքում, շատ հաճախ միջոցառումների ընթացքում ոտքի վրա շփումների տեսքով, որոնք ավարտվում են հետեւյալ դիվանագիտական արտահայտություններով. Մեր գործարարները հետաքրքրված են Հայաստանի տնտեսությամբ:

Հենց օրեր առաջ հաղորդվեց, որ մեր երկրում հրուշակեղենի խոշոր գործարան է կառուցվելու, ուր նվազագույնը 1500 մարդ է աշխատելու, արտադրանքն էլ արտահանվելու է: Թե ո՞ր մարզում է այն կառուցվելու, ի՞նչ հումքով է աշխատելու, ովքե՞ր են լինելու այդ ահռելի աշխատուժի ներկայացուցիչները, ի՞նչ սանիտարա-հիգիենիկ պայմաններում են աշխատելու, ո՞րտեղ են կայանալու մի քանի հարյուր աշխատանքի տանող-բերող անձնական օգտագործման ավտոմեքենաները շատ այլ հիմնահարցեր՝ ոչ մի ակնարկ ու փաստ: Նման մի հզորություն արդեն ունենք Ախուրյան բնակավայրում, 230 հազար տոննա շաքարավազի արտադրության գործարանի տեսքով, որը ներմուծված շաքարեղեգի տեսքով տարվա ընթացքում հազիվ մի քանի օր է աշխատում, քանզի շրջակա հազարավոր հեկտարների վրա շաքարի հումք ճակնդեղ աճեցնել չի հաջողվում: Այս առումով կա համաշխարհային հարուստ փորձ, որը մեր «ամենակարող» պաշտոնյաներին չի հետաքրքրում: Կուզեք՝ սիրաշահեք, կուզեք՝ խիստ գնահատականներ տվեք, իրենք առաջնորդվում են «մերն ուրիշ է» մոտեցումով, որն անքննելի է: Իսկ պարտավոր են, չէ՞, տեղյակ լինել, որ տնտեսապես հզոր Իսրայելում ու Սինգապուրում, Բելգիայում ու Շվեդիայում, ԱՄՆ-ում ու Մեծ Բրիտանիայում արդյունաբերական ոլորտում ընդգրկված են աշխատունակ բնակչության 15-17 տոկոսը, ծառայություններում՝ 80-83 տոկոսը եւ միայն 1 տոկոսը գյուղոլորտում:

Տարիներ առաջ եմ եղել Ավստրիայի Գրաց քաղաքի հրուշակեղենի մի քանի հեկտար տարածք զբաղեցնող արտադրությունում, որը հիմնականում շոկոլադ էր թողարկում: Ընդարձակ արտադրամասերում աշխատողներ գրեթե չէին երեւում, ամբողջ գործընթացն ավտոմատացված էր: Մեր պարագայում ի՞նչ են անելու 1500 աշխատողները, գործի գնալ-գալիս ի՞նչ տրանսպորտից են օգտվելու, ո՞րտեղ են ճաշելու, առայժմ հարցեր են, որոնք կարճ ժամանակ անց խնդիրների են վերածվելու, մինչեւ բարձրագույն իշխանություններին մտահոգելու առիթ ու պատճառ են հանդիսանալու: Բացարձակապես հայտնի չէ, թե մոտ 10 մլն բնակչությամբ ո՞ր երկրի օրինակն է գայթակղել մերոնց, քանզի հայտնի չէ գեթ մեկ դեպք, երբ մեր 7-8 մլն հայրենակիցներից մի քանիսը նման հզորություններում աշխատեն: Կարծես այդպիսիք չկան էլ Երկրի երեսին, դրանց ժամանակն անցել է:

Նայում եմ փոքր ու միջին գործարարությանը նվիրված հեռուստաալիքների հաղորդումներն ու մտորում. այդ ինչպե՞ս են Երկիր մոլորակի չորս կողմերում մարդիկ ընտանիքով տասնյակ տոննաներով պանրատեսակներ արտադրում, գինիներ շշալցում, խոզի ազդրերի խամոններ կախում, կենցաղային առաջնահերթություններ ստեղծում, իրենց կյանքն ու առօրյան բարեփոխում... թերեւս՝ թոփշալիշ չունենալու շնորհիվ, որն ընդամենը շիլաշփոթ է, մերժելի մի վիճակ:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**05.09.2023**

# Որս անելը՝ թանկ հաճույք. որսորդներն ահազանգում են

Մոխրագույն ագռավ, կաչաղակ, գայլ եւ շնագայլ. այս կենդանատեսակները կարելի է որսալ անսահմանափակ քանակով: Շրջակա միջավայրի նախարարությունը շրջանառել է 2023-24 թվականների որսի կենդանիների ցանկի թույլատրելի չափաքանակի ու ժամկետի նախագիծը:

Լոր, նապաստակ, փորսուղ, վայրի խոզ, աղվես ու մի քանի այլ կենդանիների էլ կարելի է որսալ հստակ քանակով ու կոնկրետ ժամանակահատվածում: Վերջին 2-3 տարում որսատեսակը ոչ թե սահմանափակվել, այլ ընդլայնվել է՝ ցանկում նոր կաթնասուններ են ավելացել: Մինչդեռ որսաքանակի կրճատումը որսորդների սրտով չէ:

«**Ազգ**»-ի հետ զրույցում որսորդ **Էդուարդ Սարիբեկյանն** ասում է՝ նախկինում յուրաքանչյուր որսօրում որսորդը Հայաստանի որսահանդակներում կարող էր որսալ տասը լոր: «Հիմա՝ վերջին երկու տարիներին, ոչ որսօրերի փոխարեն՝ տարեկան չափաքանակ է տրվել, ենթադրենք՝ տարեկան տասը հատ լոր որսալու իրավունք»,- նշում է նա:

Թեեւ որսաքանակը կրճատվել է, սեզոնային լիցենզիայի արժեքը չի պակասել: Որսի սիրահարներն ասում են՝՝ որսորդությունը գնալով թանկ հաճույք է դառնում:

«Ստացվում է՝ որսորդը բազմակի անգամ շատ գումար է ծախսում իր «ստատուսը» պահելու համար, այսինքն՝ ունենալ զենք, ձեռք բերել լիցենզիա, օգտվել այլ ծառայություններից: Իմ հաշվարկներով՝ մեկ լորը որսորդի վրա 3000-4000 դրամ է արժենում: Ու եթե սրան հավելեմ, որ 5 տարին մեկ անգամ զենքի թույլտվության ու լիցենզիայի հարցեր են առաջ գալիս, տեսնում ենք՝ սա չտեսնված թիվ է ու չտեսնված պրեսինգ որսորդական համայնքի վրա»,- մանրամասնում է մեր զրուցակիցը

Կառավարության կողմից հաստատվելիք որսի նախագծով՝ որսի թույլատրվում է գնալ հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ եւ կիրակի. նաեւ՝ տոների եւ հիշատակի օրերին: Նշենք նաեւ, որ շրջանառված փաստաթղթով՝ վայրի խոզի որսը թույլատրվում է միայն Լոռու, Տավուշի, Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

## ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

# Դառնահամ մեղքն ու քաղցրանուշ մեղրը

Մեղքը հանցանք է՝պարսավելի, դատապարտելի արարք եւ կրոնաբարոյական պատվիրանների ու օրենքի խախտում:

Բոլորս էլ մեղավոր ենք: Արեւելքի մեծանուն բանաստեղծ ու փիլիսոփա **Օմար Խայյամը** հավաստացած էր, որ աշխարհում անմեղ մարդ չկա: Նա իր դժգոհանքն էր հայտնում Արարչին, որ մեղավորներին պատժելով ինքն էլ է մեղք գործում: Ուստի, նա մահկանացուի ու Աստծո միջեւ ոչ մի տարբերություն չէր տեսնում՝

*Այս աշխարհում մեղք չգործած մարդ կա՞ միթե, ասա ինձ,*

*Իսկ եթե կա, նա ինչպե՞ս է գոյատեւում, ասա ինձ,*

*Վատ արարքս վատությամբ ես հատուցանում, տե՛ր Աստված,*

*Էլ ինձ ու քեզ տարբերակել դու կարո՞ղ ես, ասա ինձ:*

Նման հերյուրանքների համար շատերը Խայյամին աթեիստ ու աստվածամերժ անվանեցին, ոմանք էլ՝ ճշմարտախոս:

Հայերն էլ են մեղք գործում, այն էլ՝ բնիկ հայկական մեղք, քանի որ մեղքը բնիկ հայկական բառ է՝ հնդեվրոպական նախալեզվի «սխալվել» իմաստով mel արմատից:

Հնդեվրոպական նախալեզվում կա նաեւ հայերեն «մեղու» եւ «մեղր» բառերի համար հիմք ծառայած նույն՝ mel արմատը: Դրանով հանդերձ, դառնահամ «մեղքի» ու քաղցրանուշ «մեղրի» միջեւ ազգակցական ոչ մի կապ չկա:

Հայերեն բառի ցեղակիցներից է լատիներեն malum հոմանիշը՝ «վնաս», «ցավ», «տառապանք», «պատիժ» եւ «ոճիր» իմաստներով:

Փաստորեն «մեղքն» ու «վնասը» ոչ թե փոխկապակցված բառեր են, այլ՝ հոմանիշներ: Իսկ հնդեվրոպական ծագումով հայերեն ՎՆԱՍ բառի ազգակցական կապը ռուսերեն вина եւ պարսկերեն gonah բառերի հետ, կասկած չի հարուցում:

Հոգնակիակերտ մասնիկից անբաժան «մեղՔ» բառը, «տառապանՔի», «զրկանՔի» ու «փորձանՔի» նման եզակի չի լինում (կամ եթե լինում է, հազվադեպ է լինում), քանի որ մարդուն բնորոշ է հանապազ ու շատ մեղք գործելը, տառապելն ու զրկանք կրելը:

Մշտապես մեզ հետապնդող մեղք գործելու զգացողությունը փարատելու համար էլ, մեղքին թողություն հայցելու նպատակով, հորինվել է «մեղա՜» բացականչությունն ու «մեղա քեզ Աստված, մեղավոր եմ, խոստովանում եմ մեղքս» արտահայտությունները:

Հայ առաջին տպագրիչ **Հակոբ Հովհաննիսյանը**, մեղք գործած լինելու կոչում միտքն իրենից հեռացնելու համար՝ համեստաբար **Մեղապարտ** ազգանվամբ է ներկայացել:

**Գրիգոր Նարեկացին** էլ իրեն մշտապես մեղավորի պիտակ է կպցրել, ու երկայնամիտ Արարչին դիմելով՝ հաճախ է թողություն խնդրել:

Մեր հոգեւորականների աղոթագրքերն էլ հագեցած են ինքնամեղադրանքներ պարունակող տրտունջներով, երբեմն աղոթարարի մասին ասելով՝ «Յանցաւոր համարեցայ *զամենայն մեղաւորս երկրի*»:

Փաստորեն մեղքի մասին համարյա ամեն ինչ գիտենք: Գիտենք մեղք բառի ծագումնաբանությունը, այլ լեզուների հետ դրա ազգակցական կապը, շատ ու շատ ուրիշ բաներ: Սակայն, գործած մեղքերի դիմաց *զամենայն մեղաւորիս* պատասխանատվության մասին ոչինչ չգիտենք: Չգիտենք պատիժն ինչպե՞ս է սահմանվում՝ անցիկ շրջանի տասը պատվիրաններո՞վ, միջնադարյան Հայաստանի դատաստանագրքո՞վ, թե՞ մերօրյա քրեական օրենսգրքով:

**ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# Ամառային դպրոց աշակերտների համար

2023 թվականի օգոստոսի 8-25-ը Մոլեկուլային եւ տեսական կենսաբանության դպրոցը (ՄՏԿԴ) ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի (ՄԿԻ) հետ համատեղ տարբեր երկրներից ավագ դպրոցի ավելի քան 40 աշակերտների համար կազմակերպել է միջազգային երեքշաբաթյա ամառային դպրոց: Նպատակը համատեղ գիտական աշխատանքի իրականացումն է 18 երկրներից հրավիրված 60 գիտնականների ղեկավարությամբ:

Աշակերտներին հնարավորություն է ընձեռվել մասնակցելու գիտական միջավայրում, իսկական լաբորատորիաներում իրականացվող գիտափորձերին: Այն գործնական տեսակետից կարեւոր փորձառություն կլինի, իսկ մասնագիտական կողմնորոշման առումով որոշիչ նշանակություն կունենա ապագայում գիտությամբ զբաղվելու ցանկություն ունեցող աշակերտների համար:



ՄԿԻ-ում դպրոցականներին հյուրընկալել են Մարդու գենոմիկայի (ղեկ.՝ **Ա. Առաքելյան**), Միկրոօրգանիզմների գենոմիկայի (ղեկ.՝ **Ա. Սեդրակյան**), Մոլեկուլաբջջային իմունաբանության (ղեկ.՝ **Գ. Մանուկյան**) լաբորատորիաներում, որտեղ իրականացվում են տարաբնույթ նախագծեր համեմատական եւ ֆունկցիոնալ գենոմիկայի, մոլեկուլային մանրէաբանության, մոլեկուլային իմունաբանության, կենսաինֆորմատիկայի եւ այլ ոլորտներում:

Ծրագրի համակարգողներն են ՄՏԿԴ-ի գիտական տնօրեն **Ֆ. Կոնդրաշովը** եւ ՄԿԻ-ի գիտական գծով փոխտնօրեն **Գ. Յականովան**:

Գաղտնիք չէ, որ գիտական դպրոցում ձեռք բերված փորձառությունն անմոռանալի է լինելու աշակերտների համար: Ամառային դպրոցի ընթացքում աշակերտները լսում են դասախոսություններ, տիրապետում գիտական մեթոդներին, սովորում են կատարել հաշվարկներ եւ ստուգել աշխատանքային վարկածներ՝ մոլեկուլային եւ տեսական կենսաբանության տարբեր ոլորտներում:

Գիտաժողովում աշակերտները հնարավորություն կունենան գիտական շրջանակներին ներկայացնելու իրենց ստացած գիտելիքներն ու կատարած գիտափորձերի արդյունքները:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

# Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը հայտարարում է մրցույթ

«Թեքեյան» կենտրոնում երեկ կայացած ասուլիսի ընթացքում Հայաստանի Թեքեյան մշակութային միության նախագահ **Ռուբեն Միրզախանյանը** հայտարարեց «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխության 2022 թվականի ստեղծագործությունների հայտերի ընդունման մեկնարկի մասին:

Մրցույթը կանցկացվի 4 անվանակարգում՝ «Գրականություն», «Հայագիտություն», «Կերպարվեստ (գունանկար, քանդակ, գրաֆիկա)» եւ «Դեկորատիվ-կիրառական արվեստ»:

Յուրաքանչյուր անվանակարգում հաղթողը կստանա դրամական պարգեւ՝ 1500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ եւ «Վահան Թեքեյան» մրցանակ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները՝

❖ **www.armtmm.com** կայքում պետք է սեպտեմբերի 1-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը (ներառյալ) լրացնեն մասնակցության հայտը՝ ներկայացնելով 2022 թվականին իրենց հեղինակած աշխատանքների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն:

❖ մինչ հայտը լրացնելը, անհրաժեշտ է ծանոթանալ մրցույթի պայմաններին,

❖ հայտերի լրացումը հասանելի կլինի սեպտեմբերի 1-ից,

❖ սխալ կամ թերի լրացված հայտերը նկատի չեն առնվի,

❖ հայտը կհաստատվի կամ կմերժվի՝ Ձեր էլեկտրոնային հասցեին հետադարձ նամակով:

Ստեղծագործությունները գնահատելու է մասնագիտական հեղինակավոր ժյուրին՝ նախապատվությունն առաջին հերթին տալով աշխատանքների որակին: Մրցույթին կարող են մասնակցել ինչպես Հայաստանից, այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվողներ: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Հայաստանի Թեքեյան մշակութային միության գրասենյակ ամեն օր՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից՝ ժամը 11:00-16:00-ն (հասցե՝ Երեւան, Խանջյան 50, 2-րդ հարկ, հեռ.՝ 010 552 632, 010 520 783):

«Վահան Թեքեյան» մրցանակաբաշխությունն անցկացվում է արդեն 29-րդ անգամ՝ Հայաստանի Թեքեյան մշակութային միության եւ ԱՄՆ ու Կանադայի Թեքեյան մշակութային միության «Շաքե Թեքեյան-Ղազարյան» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Մրցանակաբաշխության անցկացման տարիներին «Վահան Թեքեյան» մրցանակ է շնորհվել մշակույթի, գիտության, արվեստի երկու հարյուրից ավելի գործիչների:

# Միջազգային գիտաժողով Երեւանում

Սույն թվականի սեպտեմբերի 4-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Կոլլիզիոն գոտու հրաբխականությունը և առնչվող վտանգները» խորագրով միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի նպատակն էր համախմբել գիտնականների, որոնք կատարում են հետազոտություններ հրաբխագիտության, հրաբխային վտանգների, պետրոլոգիայի, երկրաֆիզիկայի, հրաբխային սեյսմոլոգիայի, շրջակա միջավայրի վրա հրաբխականության ազդեցության, երկրաջերմային էներգիայի և հարակից այլ ոլորտներում:

Գիտաժողովին մասնակցում են անվանի գիտնականներ ԱՄՆ-ից, Ավստրալիայից, Գերմանիայից, Թայվանից, Թուրքիայից, Իտալիայից, Իրանից, Կոլումբիայից, Կոստա Ռիկայից, Հունգարիայից, Ճապոնիայից, Մեծ Բրիտանիայից, Նիդեռլանդներից, Շոտլանդիայից, Ռուսաստանից, Սաուդյան Արաբիայից, Ֆրանսիայից եւ անշուշտ Հայաստանից:

Պլենար նստաշրջանում գիտական զեկուցումներով հանդես եկան Մեծ Բրիտանիայի Քարդիֆի համալսարանի պրոֆեսոր **Ջուլիան Պիրսը**, Գերմանիայի Լյուդվիգ-Մաքսիմիլիան-Մյունխենի համալսարանի պրոֆեսոր **Դոնալդ Դինգվելը**, ԱՄՆ Հարավային Ֆլորիդայի համալսարանի պրոֆեսոր **Չակ Քոնորը**, Նոր Զելանդիայի Մեսիի համալսարանի պրոֆեսոր **Կարոլի Նեմեթը**, Մեծ Բրիտանիայի Լիդսի համալսարանի դոկտոր **Իվան Սավովը,** ԱՄՆ Լիհայ համալսարանի պրոֆեսոր **Տորք Սահակյանը**, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն **Խաչատուր Մելիքսեթյանը** եւ ուրիշներ: Գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն մինչեւ սեպտեմբերի 8-ը:

Գիտաժողովը նախաձեռնել են ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, Հրաբխագիտության ու Երկրի ընդերքի քիմիայի միջազգային ասոցիացիայի (IAVCEI) հետ համատեղ:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

# Շուշիի պատմության խեղաթյուրումը շարունակվում է

Գուլբենեի շրջանի (Լատվիա) պատմության եւ արվեստի թանգարանում Լատվիայում Ադրբեջանի դեսպանության նախաձեռնությամբ բացվել է Շուշի քաղաքին նվիրված ցուցահանդես, որը, սկսած քաղաքը «թյուրքական համաշխարհային մշակույթի մայրաքաղաք» ներկայացնող վերնագրից, պատմական խեղաթյուրումների մի շարան է: Հիմնվելով ադրբեջանական հակահայկական քարոզչական թեզերի վրա՝ հայ բնակչության մի քանի ջարդեր եւ հրդեհումներ տեսած Շուշիի պատմությունը թանգարանի կայքը մեկնաբանում է իբրեւ «զարգացման հրաշալի ճանապարհ»: Ըստ տեքստի՝ Շուշին կարեւոր դեր է ունեցել միայն ադրբեջանական մշակույթի ու գիտության համար, իսկ հայերը սոսկ «բռնագավթել» ու «քանդել են» այն (հայերի մասին ուրիշ հիշատակություն չկա): Շուշին անվանվում է թյուրքական աշխարհի միասնականության եւ համերաշխության նոր խորհրդանիշ:




Չբավարարվելով սրանով՝ նույն թանգարանում նույն դեսպանության աջակցությամբ մի քանի օր անց բացվել է եւս մեկ ցուցահանդես՝ «Գագաթներ տանող ճանապարհին» անվանմամբ: Ինչպես թանգարանի կայքում է ներկայացված՝ այնտեղ ցուցադրվում են «ադրբեջանական գորգեր»՝ բերված Ադրբեջանի գորգի ազգային թանգարանից («գորգագործությունը Ադրբեջանի հնագույն արվեստներից է», 1918-ին հայտնված պետության մասին գրում է կայքը), ինչպես նաեւ ղարաբաղյան ձիերի նկարներ, որոնց հեղինակը Ադրբեջանում ապրած **Դացե Շտրաուսան** է: Ցնծությամբ նշվում է, որ տիկնոջ ցուցահանդեսներից մեկը կայացել է «հայերից ազատագրված Շուշիում»: Ահա այսպես քարոզչական կոպիտ հնարքներով Ադրբեջանը ուզում է եվրոպական երկրներում արմատավորել սեփական քարոզչական թեզերը եւ արդարացնել հայերի մշակութային... ցեղասպանությունը:

Իրեն ուղղված ֆեյսբուքյան օգտատերերի քննադատությանը թանգարանի տնօրենությունն առայժմ չի պատասխանել:

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼՓ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշուապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 31.08.2023, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: